



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a marbled paper pattern, specifically a 'stone' or 'shell' pattern, featuring dark, swirling veins on a lighter background. The spine of the book is visible on the left, bound in a dark, possibly black, material. A small, rectangular, light-colored label is affixed to the lower part of the spine. The label has a double-line border and contains handwritten text in blue ink. The text is arranged in two lines: the top line reads '891.99' and the bottom line reads '12-16'.

891.99

12-16

$$\frac{1002}{30846}$$

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Լոյս ընծայելով Մամունջների չորրորդ տպագրութիւնը բարեփոխուած, պարտք եմ համարում յայտնել ի գիտութիւն յարգելի ընթերցողների, որ ես նախկին հրատարակութեանց յառաջաբաններում յիշածս խոստումը, ձայնագրեալ մասի վերաբերութեամբ, մինչև այժմ չ'կարողացայ կատարել այն պատճառով՝ որ հնարաւորութիւն չունէի հոգալու միանուագ բոլոր երգերի հրատարակութեան ծախքերը: Իսկ այժմ լոյս եմ ընծայելու մաս առ մաս, և առաջին տետրը կ'հրատարակուի առաջիկայ 1904 թրւում, որով իրազործուած կ'լինի Մամունջների գլխաւոր նպատակներից մէկը: Իսկ ինչ վերաբերվում է նրա միւս նպատակին, որ այժմ ներկայացնում է ժողովրդական ընտիր երգերի մի հաւաքածու և կարդացվում է հետաքրքրութեամբ. դրան ապացոյց առաջ կներ բերում մեր գրականութեան մէջ երկու յայտնի անձնաւորութեանց հակիրճ վկայութիւնները:

Առաջին. — դեռ Մամունջների ա. հրատարակութեան ժամանակ, 1897-ին, մեր յայտնի մանկավարժ, այժմ Աղէքսանդրապոլի Քաղաքային Բանկի գիրեկտոր, պ. Յովհաննէս Տէր-Միրաքեանը, իւր կազմած «Այբբենարան» ձեռնարկի յառաջաբանում գրում է հետեւեալը. — «Ի դէպս այստեղ պէտք է յիշել, որ այբուբենարանիս մէջ, քացի «Բընար-Հայկ.» եւ աշըղ Զիւանու երգերից՝ ութը պ. Արշակ Բրտեանի «Ռամկական Մամունջներից» է, որ նա ժողովել է Շիրակից ու այս տարի հրատարակել Աղէքսանդրապոլում: Մենք իբրեւ նմուշ վեր առանք շատերի միայն սկիզ-

Дозволено Цензурою 15 Декабря 1903 г. гор. Тифлисъ.

ըր: Մեր ժողովրդական տաղանդի հիմնալի մարգարտաշարքեր կան այդ գրքոյկի մէջ»: Երկրորդ.- այս տարի Մշակ լրագրի խմբագրութեան աշխատակից և տաղանդաւոր գրող պ. Լէօն, նոյն լրագրի № 162-ի մէջ, բանասիրական բաժնում, «Ճանապարհից. III. Աղէքսանդրապօլ» վերնագրով յօդուածում, թուելով Աղէքսանդրապօլում լոյս տեսած պիտանի հրատարակութիւնները, ի միջի այլոց գրում է հետեւեալը.— «Այստեղ է տպագրուած եւ Ռամկական Մրմունջներ հետաքրքրական երգարանը, որի մէջ հաւաքուած են ներկայումս այնքան տարածուած քաղմաթիւ երգեր. . »:

Քացի սրանցից Մրմունջների նախկին հրատարակութեանց բոլոր օրինակների այսքան կարճ ժամանակամիջոցում սպառուելը՝ միանգամայն սիրալիւր ընդունելութեան գրաւաչան է ընթերցասէր հասարակութեան կողմից:

Դպիր Արշակ Բրտեանց.



ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

Ա Շ Ո Ւ Ղ Ա Կ Ա Ն Ե Ր Գ Ե Ր

Ա Շ Ո Ւ Ղ



Ղուղի լեզուն դրիստն է ասում ամեն մի բանին, իր անմեղ հոգին օսկով չի ծախում նա Մամոնային. Միշտ մէկն է ասում նա՝ թէկուզ եարին, թէկուզ դուշմանին 2ի վախում խօսել դրիստն առաջի ահեղ ատենին:

Աշուղն ամենի խաթրին գլուխը դուրբան է դնում, Տխրած որ տեսնի՝ ինքն էլ նրա հետ անկեղծ է տխրում, Ծիծաղողի հետ ինքն էլ է իսկոյն ուրախ ծիծաղում, Հաղով ծնել է մօրը արգանդէն, հաղով է մեռնում:

Աշուղը թէկուզ եաշովըն իլի հարուր տարեկան, նրա միամիտ պարզ հոգին մնում է միշտ մանկական, Խոջա ու քեսսիւր, տէր ու ծառայ են նրա սիրական, Հաւասար մարդ են՝ թէկուզ քրիստոնեան թէ մահմետական:

Վաղ արեգակը ամենի համար լուս է ու պայծառ, Միայն աշուղին ցերեկուայ մէջն էլ մութ է ու խաւար, Մութն է աչքերը, բայց լուս է հոգին, սիրտն է բոցավառ Քանց դրագէտէն լեզու ունի նա անուշ ու ճարտար:

Գամառ Բաթիպա.

Դ Ի Խ Բ Է Ի Տ (հին)

Ազգ իմ, որքան նկուն մնաս,
 Սիրտս քեզանից չի գատուի,
 Հազար տեսակ չարչարանք տաս,
 Սիրտս քեզանից չի գատուի:

Քեզ չեմ մոռանալ յաւիտեան,
 Հարազատ մայր իմ Հայաստան,
 Թէկուզ դրախտն էլ ինձի տան,
 Սիրտս քեզանից չի գատուի:

Քեզանով եմ ես երջանիկ,
 Իմ սիրելի, իմ անուշիկ,
 Ծոցիդ մէջը հանգչիմ, մայրիկ,
 Սիրտս քեզանից չի գատուի:

Զիւանին եմ քեզ բարեկամ,
 Քանի ողջ եմ ամենայն ժամ,
 Հնդկաստանին էլ տէր դառնամ,
 Սիրտս քեզանից չի գատուի:

Գ Ա Ձ Է Լ

Ախ, անիրաւ տխրութիւն, միշ երբ ինձ տիրես,
 Մինչև երբ իմ սրտի ուրախութիւնն աւերես,
 Մինչև երբ տանջես ինձ, միշև երբ, ո՞վ անգուլթ,
 Մինչև երբ լուսափայլ արեգակս մնայ մութ:

Մինչև երբ, աստ ինձ, մատաղ կեանքս տրորես,
 Մինչև երբ տխրութեան օրօրոցումս օրօրես,

Մինչև երբ ցաւալիս մնամ դառը վիճակում,
 Մինչև երբ դառնութեամբ այրիմ ես կրակում:

Մինչև երբ տխրութեամբ շարագրեմ երգերս,
 Տրդատեանս, տակաւին չը բժշկած վէրքերս:

Վ Ա Ն Ա Ղ Ձ Ի

Ախ, երբ պէտքէ երևաս, ո՞վ դու գարունդ աննման,
 Դիմես երբեմն մեր աշխարհ՝ ու դաս մեզ այցելութեան.
 Տաքացնես երկիրը, վանես ցուրտը ձմեռուան,
 Յօղես անձրևներ առատ, արդիւնաբեր, մշտական,
 Ծաղկին դաշտերն ընդհանուր, հոտ բուրեն անմահական:

Մօտենալով վաղճանին բքաբեր Մարտ ամիսը,
 Այցելութեանդ կտպասէ ծերունի խեղճ Մասիսը,
 Դէհ, ժամն է, արձակէ դալստեանդ աւետիսը,
 Քաղցր ու անուշ հոտերով մեզ ընծայէ Մասիսը,
 Զիննապատ լեռներն էլ սփռէ կանաչ յնձութեան:

Մառախլապատ ամպերով ծածկուած անտառները,
 Արդելք եղան փարախից շուտ դուրս գալու դառները,
 Երևում են խիտ ծաղկանց փոխարէն մացառները,
 Նորոգուելու կտպասեն տերեւաթափ ծառները,
 Թէ երբ պէտքէ մեզ վերայ արեգակդ առնէ շրջան:

Կարկաչահոս գետը լուռ հոսում է սառուցի տակ,
 Ե՛րբ կը ծագէ պաշտելի Մասեաց սարէն արեգակ,
 Հիւսիսային պաղ քամին մինչ երբ փչէ շարունակ,
 Զմռան ոսոխ գարունդ, արի՛ ու տա՛ր յաղթանակ,
 Պարզ օդի մէջ ծածանի սուրբ դրոշակդ անկործան:

Ամբողջ տարուայ նախագահ, նշանաւորն ես, գարուն,
 Մնացեալ ամիսների դու փառաւորն ես, գարուն,

Հողային գնտի պարծանք ու թագաւորն ես, գարնն,
Ազատութեան աւետիք բերող իսկ օրն ես, գարուն,
Դորա համար յայտալծն էլ փափագ ունի քո տեսեան:

Ղ Օ Շ Ս Ա Յ

Ախ, ինչ քաղցր էին վայելածս օրեր,
Ո՛րքան քաղցրագոյն անցուցածս ժամեր,
Երբ անհոգ, ուրախ, ամենից սիրուած՝
Չունէի երբէք հոգս, վիշտ ու ցաւեր:

Բնկերքս անխարդախ, չըկար մեր մէջ ոխ,
Մանկտույս օտար էր իսպառ չարութիւն.
Չկար ստորաքարչ ստրուկ կամ խաբող,
Թագաւորում էր սուրբ ազնւութիւն:

Այլ աւանդ, շատ սուղ տւեցին նոքա,
Կեանքը նիւթական շահ առաջ բերեց,
Անգութ բռնութեամբ ճնշեց ամենին,
Իրան հպատակ ու գերի արեց:

Ես հրաժեշտ տուի ուրախ ժամերէս,
Կարծելով բաղդիս նոր գայ ասպարէզ.
Կամեցայ իբրեւ նոր ծաղիկ հրճուել,
Ճշմարտութեանը գոլով ողջակէզ:

Բայց ափսոս, շատ շուտ, դառնաշունչ խորշակ,
Չուտ թարշամեցրեց ծաղիկս նորաբաց,
Երեակայածս մնաց միայն ցնորք,
Յաւոյ տրտմութան ես եղայ կցորդ:

Թափուր նստեցի բարեկամներից,
Նենգաւոր սրտեր ինձ սլաշարեցին,

Տարբեր հայեացքով, հոգով տարբեր,
Իւրեանց շահին ինձ խաղալիք արին:

— Թող, ինձ ասում են, գաղափարներդ, —
Ասում են. — կեղծիր դէմքդ մեզ նման,
Գլխակոր չոքիւր կարողի առաջ,
(Թէև լինի չար), թէ չէ՝ զոհ կերթաս...

*

Մ Ի Ի Ս Տ Է Ձ Է Տ

Ահնարկեա՛, ո՛վ իմ սիրունի, ահնարկեա՛ տկարիս,
Օգնեա՛ սիրահարիս,
Մերթ իմ նեղութեանս հասու լեր, մերթ դեղ ու ճարիս,
Տո՛ւր անմխիթարիս,

Անբաղդութեանս ձեռքիցը ողորմիւ իմ շատ,
Երբեմն էլ յուսահատ,
Ափսոս, հազար ափսոս, ապա վայ ինձ խելագարիս,
Պանդուխտ և օտարիս:

Մինչ ե՛րբ աղաղակս չը լսելով մնամ այսպէս,
Հայցեմ ինձամ այսպէս,
Թէև քո արարքդ, յիրաւի, շատ չէ յիմարիս,
Ամօթ բարեբարիս:

Սիրոյդ աղեղը ինձ վերայ լարուած կայ յարաժամ,
Սպանուած եմ անգամ.
Արեան ծարաւի սէրըդ է ահարկու խոնարհիս,
Ներհակ կայ տուրիս:

Որքան փարելով ձայնեցի անգութ սիրականիս,
Այն ինչ հոգեհանիս.

Իսկ նա սաւուղազգեաց չի նույող թուլթակ շաւարիս,
Տասնադեայ քնարիս:

Ես իմ ժամանակիս պուժարը բաշխեցի սիրոյդ.
Գրաւ եզի անփոյթ.
Էլ այսուհետեւ ինչ է պակաս մահուան յօժարիս,
Բաղդով ապիկարիս:

Ես համահաւասար հիմայ որդւոյն Պենեւովպեայ,
Ինձ սէրը Կալիփսեայ
Թէ որքան էր անթիւ, հիմայ պատմեմ նաւափարիս,
Նա վայ կրկնէ չարիս:

Այսքան բողոքը իմ սիրելւոյս կարգացի ես ողջ,
Ականջ դրաւ ամբողջ.
Ասաւ—դու, Շիրին, պէտքէ սիրոյս մէջ չը դադարիս,
Մինչ ինձ հաւասարիս:

Շ Ա Բ Բ Ի

Այսքան տարի դու ննջեցիր, բաւ է, բաւ,
Տխրութիւնդ ողջ հայերիս ցաւ է ցաւ,
Արեւն եկաւ քո գլխիցդ անցկացաւ,
Ջարթիր, զարթիր, իմ աննման անձկալի,
Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:

Գարունն էկաւ, ձմրան դուռը գոցուեցաւ,
Սպասելով մեր սրտերը խոցուեցաւ.
Դիշերն անցաւ, առաւօտը բացուեցաւ.
Ջարթիր և այլն:

Ազաչում եմ խնդրում մայրիկ, արթնացիր,
Քո արարքէդ դու ամաչիր, դու երկիր,
Քոյրերիցդ ողջիցը ետ ժընացիր, զարթիր և այլն:

Ղ Ա Լ Ա Յ Ձ Ի

Այս իմ ծով արտասուք գնան—ընթանան,
Ի քեզ սիրտ ապառաժ քանի կան—մնան,
Իմ Անի վաղեմնի, յինէն հեռացեալ,
Ասա՛ դու ինձ, արդեօք, ո՞չք եղեն պաշտպան,
Ա՛խ, ո՞չք եղեն պաշտպան:

Երկին արդեօք անէծ, թէ լերինք հայոց,
Ձիս այսպէս շուարեալ թողին յանմար բոց.
Գոռ բաղդին շրջանակ գնաց մեկնեցաւ,
Յիս յաւել բիւրաւոր կսկիծ վիշտ և ցաւ,
Աւաղ զմեծ ցաւ:

Է՛ր այդքան անխնամ յինէն հեռանաւ,
Ձիս թողեալ յերերուն հեռի կաս—մնաս.
Կոյր բաղդին կերպարանք թէ՛ և սեպցաւ,
Բայց քո այդ խղճմտանք զիմրդ քարացաւ,
Այդքան մոռացաւ:

Մի այլ յաւելուր, խեղճ Բագրատունեան,
Արիւնոտ սրտի ցաւ, որպէս ովկեան,
Երբեքալ—տատանեալ, մնամ ի շուար,
Ոչ առնուս յԱստուծոյ քոց գործոց տրար,
Սրտի իմոյ ճար:
Յակոբ ք. Մխիթարեան

Դ Ի Ի Բ Է Ի Տ

Անխղճօրէն մեզ դատում են,
Խօսիք Հայաստանի լեռներ,
Եղբարցս ինձանից դատում են,
Խօսիք Հայաստանի լեռներ:

Իմ խնդրիս չեն դնում ականջ,
Ասում են-սուտ է քո պահանջ,
Այս հողերը ունի էր առաջ,
Խօսի՛ք Հայաստանի լեռներ:

Գուցէ յիշէք դուք այն օրը.
Որ պապս լծած արօրը,
Ցանում էր ձեր դաշտն ու ձորը,
Խօսի՛ք Հայաստանի լեռներ:

Գիտեն իմ պապիս անունը,
Բայց ստում են ուղղութիւնը,
Գոնէ նրա պատմութիւնը,
Խօսի՛ք Հայաստանի լեռներ:

Հիմա ձեզ մնաց ամեն բան,
Պէտք է դուք դաք վկայութեան,
Ունի՞մ էք կոչվում Հայաստան,
Խօսի՛ք Հայաստանի լեռներ:

Պայծառիս վերաւորել են,
Հողերուն հաւասարել են,
Մեր կայքը օտարք տիրել են,
Խօսի՛ք Հայաստանի լեռներ:

Գ Ա Ս Տ Ա Ն

Անմիտ ճնճողովը բազէի ճանկից,
Ուզում է որս խել, խելքի աշեցէք,
Կարծես ձանձրացել է գլխից ու գանկից,
Պատերազմ է մտել, խելքի աշեցէք:

Խելքին զօռ տալով է հիմայ ամեն բան,
Յիմարն էլ իմաստուն է կարծում իրան,

Նիհար հաւը՝ պալարտ մեծ սագի նման,
Ուզում է ձու ածել, խելքի աշեցէք:

Ազնիւ մարդը անարգվում է գէշի հետ,
Երիվարը լուծ է քաշում էշի հետ,
Երկու տարուայ հորթը՝ ցուլ գոմէշի հետ
Բերել կամ են լծել, խելքի աշեցէք:

Գայլը վերան ոչխարի մորթի առած՝
Գառներուն պահապան հսկող է դառած,
Արորը քարոզչի վերաբերու հագած՝
Ամբիոն է ելել, խելքի աշեցէք:

Ուղտը մետաքսագործ, եզը նաւավար,
Գայլը հովիւ դառած՝ կարած է ոչխար,
Աղուէսը հաւնոցի զրանն յուշարար,
Ի՞նչ հսկող են գտել, խելքի աշեցէք:

Փափուկ ճենտէլմէն է հաստ գռնհիկը,
Ամբոխի գիտունն է խելքից բոպիկը.
Կենացը մէջ ծառ չ'տեսած ուսմիկը,
Այգեպան է եղել, խելքի աշեցէք:

Երեխան ձեռն առած փթած հին լարը,
Բռնել կամի դարձող ջրադացի քարը,
Գաճաճ մուկը շրջել կուղէ մեծ սարը,
Կողքը դէմ է տուել, խելքի աշեցէք:

Ուրացողը խիղճ չունի ամենակին,
Չգգալով՝ սպիտակ ասում է սեին,
Կոյրը չ'տեսնելով լոյսը արեին,
Աշխատում է ստել, խելքի աշեցէք:

Աւել հոգսը վնաս կուտայ իւր անձին,
Ուրիշի ցաւերը առնելով վզին,

Գայլը յոշոտել է մարդացեց մէկին՝
Խենթը սև է հաքել, խելքի աշեցէք:

Գորտը մեծ պարոն է տաքուկ ջրհորին,
Դուրս ելաւ, բաժին է վիշապի փորին,
Իրար հետ սուտ կռուել են ձին ու ջորին,
Էշը մէջ է ընկել, խելքի աշեցէք:

Ժլատն աշխատելու է շատ ընդունակ,
Իր հացը ուտելու չունի ախորժակ,
Խեղճ անձը զրկելով գիգել է ստակ՝
Ուրիշն է վայելել, խելքի աշեցէք:

Յանցաւոր հարուստը ուրախ խնդալով՝
Մեղքից աղատուել է մեծ գումար տալով,
Խեղճ մարդը սխալմամբ մի հաւ գողնալով,
Բանտի մէջն է փթել, խելքի աշեցէք:

Մարդ կայ գերդաստանը պահում է ցամաք
Կերթայ զուրսը կուտէ մեղր ու սեր կարագ,
Այլոց համար կանէ ձայնով պատարագ,
Իրան ժամ չի անիլ, խելքի աշեցէք:

Մի նոր քաղաք տեսայ ժամի սիրահար,
Բնակիչները Հայ՝ մօտ քսան հազար,
Իրանք անունդ չունին ապրելու համար,
Հինգ հատ վանք են շինել, խելքի աշեցէք:

Ինչ կենդանի ուզէ լինիլ շանսատակ,
Կերթայ ու կ'մտնի ծանր բեռի տակ,
Նապաստակը առիւծի դէմ համարձակ,
Կռիւ է սկսել, խելքի աշեցէք:

Յորենը մի անգամ լինելով տկար.
Այնպէս բոյս չեն գտել, որ անեն նշխար,

Կորեկ հացը իրան կարծելով յարմար՝
Սեղան է բարձրացել, խելքի աշեցէք:

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,
Ասպարէզը համբալներուն են թողած.
Ջիւանն էլ կաղ իշով կարաւան մտած՝
Բանաստեղծ է դարձել, խելքի աշեցէք:

Դ Ի Ի Բ Է Ի Տ

Առանց վախի, առանց ահի,
Քաջերու տուն Սասունայ սար,
Քեզնից հեղեհ կը պատահի,
Կրակի բուն Սասունայ սար:

Եկաւ ողջ Արարիստանը,
Որ նուաճէ Հայաստանը,
Քեզ չը յաղթեց Զինկիդ-խանը,
Կեցար կանգուն Սասունայ սար:

Հայաստանը նոր կանաչեց.
Թշնամին տեսաւ ամաչեց,
Եւրոպան քեզի ճանաչեց,
Առար անուն, Սասունայ սար:

Քրդի, Թուրքի զահիճներ էք,
Թունաւորոգ կարիճներ էք,
Սարերու մէջ կտրիճներ էք,
Դու և Զէյթուն, Սասունայ սար:

Վերացաւ խաւար գիշերը,
Փայլեց երկնային լապտերը,
Կսպասեն Տաճկահայերը
Քեզնից զարուն, Սասունայ սար:

Ջիւանի

Ք Ի Ի Բ Դ Ի Ս Տ Ն Դ Ի Ի Բ Ի Տ

Առաւօտեան քաղցր հովիկ,
Գնա՛ դէպ երկիրն Ջաւախ,
Ունիմ մէկ ծերունի մայրիկ,
Գնա՛ տես ի գիւղն Կարծախ:

Այնտեղ է ազգս-երամս,
Քոյր ու եղբայր բարեկամս,
Այնտեղ մեռած պապս ու մամս,
Գերեզմանը մտած են վաղ:

Ինձանից շատ բարեւ արա՛,
Երբ դու մօրս լինիս ներկայ,
Գնա՛ յատկապէս Կիլերթայ.
Որ է մեր գիւղի մէջ մէկ թաղ:

Այն թաղի մէջն է մեր տունը,
Քերովը է եղբօրս անունը,
Ինձ համար կտրել է քունը,
Մայրս տրտում ու անծիծաղ:

Հովիկ, Ջիվանուցս լուր տար,
Թէ հարցանեն ինձի համար,
Ասա՛ — թէ միշտ ձեռին քնար՝
Ազգի համար կանչում է խաղ:

Բ Ի Ն Գ Ե Օ Լ Ի

Առաւօտեան քաղցր և անուշ հովերըն,
Մերձեալ հնչեն մեղմով թփոցդ քովերըն,
Արդ ծածանին աչացս լցեալ ծովերըն.
Բացուիր, բացուիր, իմ կարմիր վարդ աննման,
Գեղըդ նման արեգական վառվառման:

Քանի ողբամ՝ նոր ի նորոյ խոցոտիմ,
Ջփայլուն գեղդ ի միտ բերեալ բոցոտիմ,
Յորդ արտասուք՝ ցայդ և ցերէկ թացոտիմ,
Բացուիր, բացուիր, իմ կարմիր վարդ . . .

Լեզուս քնար, սիրտս ջնար՝ քեզ երգեն,
Թեք իմ, մատունք՝ որք միշտ զլանջս հարկանեն,
Թռչունքն ամեն և բաղմականք սպասեն,
Բացուիր, բացուիր, իմ կարմիր վարդ . .

Գարունն էանց, ես քեզ կարօտ մնացի,
Այրիմ — տապիմ որպէս ի հուր հնոցի,
Քեզ շատ օրեր՝ ես ի ձեռաց գնացի,
Բացուիր, բացուիր, իմ կարմիր վարդ . .

Ա Ռ Ս Ի Բ Ո Ւ Յ Ի Ն

Առաւօտուն ելամ, աչքս բնկաւ երեսիդ,
Էլ չը մնաց ինձի վերայ հալ, փարի,
Տարար խելքս գլխէս, արիւր սարսարի,
Մարդիկ ժողովիւր գլխիս, արիւր դալ, փարի:

Ասլըդ խաբար առնիմ, ըշկամ տիւն դո՞ր ես,
Նախշուն շամամայ ես, կարմիր խնձոր ես,
Էշխիդ ալաւր ինձ էրեց մնձորեց,
Էլ չմնաց ինձ վերայ հալ, փարի:

Խօսքդ որ կտաս՝ իլդարէդ մի՛ դարձ,
Դեօշդ ինձ գեօշակ. թեղդ գլխիս բարձ,
Ջիլֆերդ ետ արա՛, մէ՛ երեսդ բաց,
Տըսնամ ջափահիր ես՝ եօխսա լալ, փարի:

Սալմաստցի Յարութիւնն եմ, ջիւմէին դաստան,
Օրս էլ տնցուցիմ քիւլի քիւրդստան,

Իմ ու քոնը մնաց վերջին դատաստան,
Մինչ Քրիստոսն իկեայ ուռնէյիկալ, փարիւ։

Վ Ա Ր Ս Ա Ղ Ի

Աստուածդ կը սիրես, իմ նազանի եար,
Քեզի համար դատի հո, այբ, ցո, (հաց),
Ծոցիդ մէջ տեսանք, հէյվայ ու նուռ ա,
Ոսկի դուգմաներդ բեն, այբ, ցո, (բաց)։

Բարձր բոյիդ դու հագել ես ալա,
Քշեր ցերէկ ես կ'քաշեմ խիալա,
Ջուխտ աչքերդ նախշուն փիալա,
Սիրականի համար ես լիւն, այբ, ցո, (լաց)։

Բարակ մէջքիդ կապել ես քամարը,
Պոռններդ դանդ ու շաքար ա,
Ապրիշում ծամերդ կանի, հալղայ արա,
Նստի, շարի, որ մնայ լո, այբ, ցո, (թաց)։

Երեսդ կը փալի քանց արեգակը,
Կարմիր թշերէն առիւր ենք պաղը,
Սրտումս մի քից փառումս կըրակը,
Քեամալին ասաց—արի մօտս կեն, այբ, ցո, (կաց)։

Մ Ո Ւ Յ Ա Մ Մ Ա Ջ

Աստուած մէկ է՝ փառքը անթիւ,
Մարդը զանազան է յատուկ,
Հատ դժուար ճանաչելու է,
Փորձելը արժան է յատուկ։

Միշտ Աստըծուն նկատողը,
Անիրաւներուն ատողը,
Մարդու շուտ չը հաւատացողը,
Խելօք, գիտնական է յատուկ։

Մարդու ցաւ շուտ իմացողը,
Իւր խըղճի դուռը բացողը,
Աղբատին ողորմացողը,
Բարերար իշխան է յատուկ։

Յոյս ու հաւատ հաստատողը,
Փորձանքէն մարդ ազատողը,
Մոլորուածին խրատողը,
Սրբոց օգնական է յատուկ։

Հոգուն շահ՝ արին թափողը,
Չար սատանային խափողը,
Աղբատ մարդկերանց օգնողը,
Մաքուր աւազան է յատուկ։

Թանկ արժէ իմաստութիւնը,
Ի՞նչ է յիմար մեծատունը,
Մարդու մէկ բարի անունը,
Մեծ պարգև—նշան է յատուկ։

Հագիր, չը խարուիս ապրուստին,
Աղբատն է պահում հարուստին,
Որդոյն աստուծոյ զալուստին՝
Ուղիդ դատաստան է յատուկ։

Խ Ր Ա Տ

Արի ինձ անգամ կալ, այ դիվանա սիրտ,
Հայա սիրէ, ագար սիրէ, ար սիրէ,

Աշխարհքըս քունն ըլի, ինչ պիտիս տանի,
Աստուած սիրէ, հօքի սիրէ, եար սիրէ:

Էն բանն արա՛ վուր Աստուծու շարքումն է,
Խրատներն գրած հարանց վարքումն է,
Երեք բան կայ՝ հօքու մարմնու կարգումն է,—
Գիր սիրէ, զալամ սիրէ, դաւթար սիրէ:

Եկ, արի, սիրտ մի կենա դուն մէկ դամաղի,
Հալալ մտիկ արա հացի ու աղի,
Հէնց բան արա մարդ վրէժ չը ծիծաղի,
Խրատ սիրէ, սարբըր սիրէ, շար սիրէ:

Հրպարտութիւն չ'անիս՝ դուր գուգաս Տէրիդ,
Խոնարութիւն արա քանց քիզ դէվերիդ.
Աստուած դիփուհանցըն մին հօքի էրիւր,
Աղքատ սիրէ, դօնաղ սիրէ, տար սիրէ:

Սայեսաթ-Շուկա, էրնէկ քեզ, թէ էս անիս,
Հօքուդ խաթրի մարմնուդ ունըր կէս անիս,
Թէ գուգես դուր դատաստան չը տեսանիս՝
Վանք սիրէ, անապատ սիրէ քար սիրէ:

Մ Ո Ւ Խ Ա Մ Մ Ա Ձ

Մըր ինձ խեղ խօսան, քեզի մատաղ, ջան, սիրելի,
Աչք ու ունքդ ինձ վառեց, արել է բրիան, սիրելի,
Տիւն բալասանի ծաղիկ ես, սարերու սէյրան, սիրելի,
Լէյլուի Մաջլումի պէս ես էլամ հէյրան, սիրելի,
Զիբինի ֆահրատու նման ումըս արիւր վէրան սիրելի:

Մին հատ միլիօնին արժան ա իմ սիրեկանի մի պաշն,
Խնդրենք, մեզի քօմակ լինի զօրավարի սուրբ խաշն,
Իսկեանդարի Զուլպարն ասինք, ծովերէն առաւ խարաշն,

Կոստանդինոս թագաւորի զլխին դրած ունէր թագն ու թաջն,
Հուքմ ունենաս աշխարքի մէջն, աղալաթ խան ես, սիրելի:

Չարուրի աշըղՂաղարն, ասում են-սրտումը մի հասրաթ մնաց
Աստծու սիրու խաթրի համար՝ աջ ձեռովդ յերեսդ բաց,
Պռօշներդ քաղցը նմանի, վարդի ջրով երեսդ լուաց,
Չէյդայի բըլբուլին, ասինք, գիւլի վարդի համար լաց,
Քեզ գովաց, թամամ էրաց էս աշըղ իմրան սիրելի:—



Ե Մ Ե Ն Ի



աղմացան վէրքերս, սաստիկ բազմացան,
Մինչև անգամ թիւ ու հաճար էլ չկայ,
Բժիշկները անսանելով զարմացան,
Մահ կարգալով ասին—քեզ ճար էլ չկայ:

Սիրտս Ռամայի և Նորի նման,
Դառել է, կը ողբայ Յակովբի նման,
Մխիթարելու չափ ինձ Յովբի նման,
Մէջս իմաստութիւն—հանճար էլ չկայ,

Միտքս ինձի կամի շարժել վատութեան,
Նաև թշուառութեան, յուսահատութեան,
Փակուել է ինձի դէմ դուռն աղքատութեան,
Բացուելու դիւրութեամբ հնար էլ չկայ:

Կայ արդեօք Մալիխա խրախոյս տուող,
Ողջամիտ խօսքերով հաստատ յոյս տուող,
Բացի սուրբ գրքերէն ինձի լոյս տուող,
Չկայ. էլ մէկ ուրիշ դամբար էլ չկայ:

Ը Ն Կ Ե Ր

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր՝
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Կեանքդ նուիրես ընկերի լաւին քիչ է դարձեալ,
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն,
Ընկեր եմ ասում, աստուածավախ ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Թշնամիները իր վերայ գալած ժամանակը,
Կտրիճ հարադատ ընկերն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Ջիւան աշըզ,
2ի սպիտակիլ ամենեկին մէկ հերը մարդուն:

Ղ Ե Լ Է Ն Տ Ե Ր Ի

Բացուիր նազելի վարդ, ահա դարնան ժամանակ է,
Քո բացուելու համար բոլոր աշխարհը փափաղ է,
Բիւրբիւլը տառապեալ՝ բաւ է այսքան եղանակէ,
Պարտիզպանը սուղ նստեալ է, բուրաստանը վալ է,
Անքակ սիրովդ խղճալին մինչ երբ աղաղակէ,
Բիւրբիւլի քոյ մօտ կարդալը դիփ սիրոյ նամակ է,
Բացուիր, քո հոգին սոխակի շնչին հպատակ է:

Սարերը նորոգուեց, վասն էր չես բաց էլել դու,
Ծաղկով բաղը լցուեց, վասն էր չես բաց էլել դու,
Համասփիւռը բացուեց, վասն էր չես բաց էլել դու,
Չուշանը տարածուեց, վասն էր չես բաց էլել դու,
Դարնան դուրը գոցուեց, վասն էր չես բաց էլել դու,

Մութը փարատուեց, վասն էր չես բաց էլել դու,
Բացուիր, իմ անուշ, քեզանում այդ ինչ նպատակ է:

Բացուիր դու շուտով, մէկ փոքր յոյս տուր սիրահարիս,
Ազնիւ սիրովդ մի չարչարիլ զուր սիրահարիս,
Մերթ արտասուալից, մերթ ճարակտուր սիրահարիս,
Տո՛ւր արշալոյսի միջովը մէկ լուր սիրահարիս,
Խղճա՛ ողբալոյս, մի թողնիլ տխուր սիրահարիս,
Ընթերցաբանող չը լինի ասես կուր սիրահարիս,
Սեաւ բաղդը, Շիրին, բիւրբիւլի վարդին օրինակ է:

Ղ Ե Լ Է Ն Տ Ե Ր Ի

Բիւրբիւլ, քոյ նման քեզ վերայ փափաղ չունի վարդըդ,
Սէր վայելելու միթէ ժամանակ չունի վարդըդ,
2է որ քո անունդ նորա հետ պատմողը մենք ենք,
Դարձեալ գիտում ենք, որ սիրոյ մուրհակ չունի վարդըդ:

Քո վարդուհին իմ բաղդից անգութ է, ո՛վ անճար,
Իմ սիրականիս չափ խնամ անքակ չունի վարդըդ,
Իր ծառը փշալից, հովանին անգամ օձանիստ,
Իր արիւնն իրա մէջ իստակ չունի վարդըդ:

Թէպէտ Մայիսի ծնունդ է, բայց Յունուարայ շունչ է,
Ամպով է պատած, երբէք արեգակ չունի վարդըդ,
Թէ մարթ է սիրել՝ համասփիւռին սիրէ բացարձակ,
Որովհետեւ անանցնելի վիճակ չունի վարդըդ:

Տասնումէկ ամիսդ դու նորան ծախում ես անշուշտ,
Բայց քո մէկ օրդ գնելու ստակ չունի վարդըդ,
Վարդիցը, Շիրին, պատմէ սոխակին, քանի որ կաս,
Եւ կրկնէ ասելով, թէ՛ հեղինակ չունի վարդըդ:

Ս Է Մ Ա Յ Ի

Բ ուր երկիրներէն ինձի համար քաղցր Հայաստանն է,
Իհարկէ, հայրենիքս այնտեղ է, բարձր ապաստանն է.
Վենետիկ, Ամերիկայ տպուած աղէկ ատլասին նայէ,
Քննէ՛ աշխարհացոյց տախտակը՝ Պոնտոսը սահմանն է:

Ունենանք աղքատ անձանց ապրուստ ու խօթաց հի-
ւանդանոց,

Մեր աղգին կըթուի թիւն տուողը դպրոց-ուսումնարանն է,
Տգէտը երջանկութեան զիրքը դաս առած աւարտած չէ,
Ամեն կերպ ազգեցութիւն պատճառողը համալսարանն է:

Փիսովն, Եփրատը կեննեն շտապով մը Հայկայ լեռներէն,
Բիւրակն իր սարը, դաշտը Արմենակի վարդենաստանն է,
Հոտաւէտ ծաղկըներու գոյնը բացարձակ կը փայլի հոն,
Ճառագայթ արձակողը ծաղկըներու մէջ շուշանն է:

Հայաստան աշխարհումը տնկեց ինքը փափկութեան
պարտէզ,
Հաւասի, գործեց այնտեղ թռչնին մարդու բուրաստանն է,

Բ Օ Յ Ը Դ Բ Ա Ր Զ Ի

Բ օյրդ բարձր սալքի չինար,
Աչքդ նախշուն, ունքդ կամար,
Դուն ստեղծուել ես ինձ համար,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Դոյնդ նման է մարմառի,
Հագիդ շորերն է յարմարի,
Դուն ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Քեզ տեսնելը ինձ մեծ մահ է,
Հողիս հանեմ տամ քեզ պահէ՛,
Ինձնում եղած ինձ ինչ շահ է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Դիշեր ցերեկ նստայ լալով,
Աղի արտասունք թափելով,
Ինձ թողել ես տանջուելով,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,
Աղաչեցի ես իմ փրկչին՝
Որ չը կտրէ յոյս իմ վերջին,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Միսկին-Բուրջին

Ք Ե Օ Ր Օ Ղ Լ Ի



Նայ վրէժ առաւ Հռչէ արքայից,
Հայոց արքայ քաջ Տրդատը ուրտեղ է.
Քսան երկու կանգուն գետի վերայից,
Մէկէն թռչող Վարդգէսը ուրտեղ է:

Դայլ Վահանը Պարսից զօրքին կրակեց,
Հնարներ բանցրուց ու խայտառակեց,
Տաք շամփուրով Մեհրուժանին պսակեց,
Բազրատունի քաջ Սմբատը ուրտեղ է:

Նա այլոց զօրքերից տոնում էր գրաւ,
Այլոց զրաւում էր, ինքն էր անգրաւ,
Քանի անգամ Հռովմայեցոց դէմ գրաւ,
Այն Տիգրանեան Միհրդատը ուրտեղ է:
Ջիւանի

„ԺԱՄԵՐԳ ԺԱՄԵՐԳ,, ԵՐԳԻ ԵՂԱՆՔԱՌՈՎ

Քիշեր ցերեկ մորմորում եմ, ինչ անեմ,
Կարօտդ քաշում եմ տարով, նազանի,
Հանգիստ չունիմ, անդադար եմ քեզ համար,
Յաւերս թեթեցնւր սիրով, նազանի:

Մէկ տեսքդ տեսնողը բեզնից կամանչէ,
Ծանօթացիր, սիրականիդ ճանանչէ՛,
Հազածդ զգեստը ալ ու կանանչ է,
Փաթաթուել ես ճերմակ զարով, նազանի:

Թալալօղլին խմեց երազումը թառ,
Քաղցրանաս, զու մեզի անուշ բարե տաս,
Երանի այն օրուան, որ մեր տունը դաս,
Պարտուիմ գլխովդ բարով, նազանի:

Ա Մ Ր Ա Հ Ի



ու այն երկրէն մի հեռանար, Հայի ճուտ,
Ուր որ նախնիքներէդ յիշատակներ կան.
Մրսած ժամանակդ կը քաղես օգուտ,
Դեռ մօխրի մէջ թաղուած հին կրակներ կան:

Բնակուած երկիրդ սուրբ է, Հայ եղբայր,
Հայի արնով ներկուած է ամեն քար,
Ջոհուել են հաւատի և ազգի համար,
Պարկած հաղարաւոր նահատակներ կան:

Ջիւան, ազգիդ հաւատարիմ ծառայէ՛,
Տեղը եկաւ՝ մինչև կեանքդ ընծայէ՛.
Հայրենիքիդ վերայ լաւ աչքով նայէ,
Իւր մէջը հողբուղիս աւերակներ կան:

ԱՌ ԴԱՐՈՒՆ

Դուր ինձ ձայն մի տաք, դեռ պիտի քնեմ,
Դեռ պիտի ննջեմ հանգիստ ու խաղաղ,
Մինչ այս քայքայուած խախուտ աշխարհը
Վերանորոգման դիմէ անյապաղ:

Յայնժամ պիտ զարթնիմ, այո՛, ես յայնժամ,
Երբ կուգայ Ջատիկ, սուրբ օր Յարութեան,
Մեր տխուր երկիրն դաժան ցրտերից
Կազատէ՝ տալով զարուն փրկութեան:

Իմ սգաւոր հողին յայնժամ կը հրճուի՝
Երբ իմ հայրենեաց հովիտն ընդարձակ,
Երփներանդ ծաղկօք կը բացուի ազատ,
Մէջ տեղը ծլած կապոյտ մանուշակ:

Մի կողմից լսուի խոխոջ առուակաց,
Միւսից թռչնոց մեղեդին քաղցրիկ,
Անուշ հովերի դուրդուրանքներով,
Ողջունեն իրար թփերն անմեղիկ:

Բացուի մեր երկրից բուր ու մառախուղ,
Ամպ, փոթորիկներ, մրրիկ ցրտաշունչ,
Նոցա տեղ զարնան անուշիկ հովեր
Մերձեալ հնչեն խաղաղ—անմուռնչ:
Խալաթ



Ծ Ի Ր Ա Ն Ի



Ես մէկ ծառ եմ ծիրանի,
 Հին արմատ եմ անուանի,
 Պտուղներս քաղցրահամ,
 Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ արեւելեան,
 Չունիմ որոշ այգեպան,
 Տունկերս ամեն երկիր
 Ընկած են բաժան—բաժան:

Արեւելքում ինձ տնկեց,
 Երբոր Աստուած ստեղծեց՝
 Ասաց-աճէ, բազմացիր—
 Մի այգի էլ ինձ տուեց:

Ուղարկեց մի այգեպան—
 Հարաւից հսկայ իշխան,
 Այն հսկայի անունով
 Կոչուեցայ ծառ Հայկական:

Չորս հազար տարուայ ծառ եմ,
 Արմատս պինդ՝ կայտառ եմ,
 Թէպէտ ոյժս պակաս է,
 Բայց անունով պայծառ եմ:
 Զիւանի

Ղ Օ Հ Մ Ա

Եթէ մեղաւորը մնաց անպատիժ,
 Աշխարհը կեցութիւն չի լինի երբէք,
 Կրդառնան մարդիկը իրար խայթող իժ,
 Բարի հայեցողութիւն չի լինի երբէք:

Թէ չը լինի օրէնք, կըթութիւն ուսում՝
 Ուժեղը անուժին կուլ կուտայ հում-հում,
 Նեղ, հարստահարիչ գովողի սրտում
 Խղճի ազդեցութիւն չի լինի երբէք:

Զիւան, մարդիկ ցոփցել են առհասարակ,
 Զուայլութեամբ ողջ ընկել են պարտքի տակ,
 Աշխարհը քիչ կուղղուի այն ժամանակ՝
 Երբոր արեւցողութիւն չի լինի երբէք:

Խ Ա Մ Ո Ի Ր Ի

Եկայ անցնելու քեզանից,
 Արաքս, ինձ մի ճանապարհ տուր,
 Հեռացել եմ տեղից-տանից,
 Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Այս աշխարհն է հին Հայաստան,
 Նախնեաց մերոց էր որորան,
 Ինձի երեք սպասող կան,
 Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Ուռուցում ես դու երկիրը,
 Գետերու միջում ընտիրը,
 Լսէ Ղարիպիս խնդիրը,
 Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:
 Թրգ. Զիւանի

Գ Ե Օ Ջ Ա Լ Լ Ա Մ Ա Յ

Երանի թէ շուտով ննջած լինէի,
 Չը տեսնէի տխուր, Հայաստան քեզի,
 Կամ նման ազգասէր անձն լինէի,
 Կեանքս նուիրէի ազատման քեզի:

Չունիս մէկ ցաւակից, չունիս օգտակար,
Հայ, մինչև երբ մնաս առանց միտի՞ծար,
Մոլորուած ես ինչպէս անհովիւ ոչխար,
Այժմ պառակտում են դայլ—զազան քեզի:

Ճիշտ զիտեմ, այս պատիժն է մեր մեղքերէն,
Մեղօք բարկացուցինք Աստուած մեր վրէն,
Գիւզեազնանս տեղեկացայ գրքերէն,
Հիմայ Տէրն է էնող զատաստան քեզի:

Մ Ո Ւ Հ Ա Մ Մ Ա Ջ

Երբ զօրաց Տէրն Աստուած օգնել կուզէ որբ ազգին¹⁾
Նրա մէջը կուղարկէ ազգասիրութեան հոգին²⁾:

Գիտես արդեօք, որ հոգին, կամ որ ազգեցութիւնն՝
Այն եսթերայ թագուհու ստորադրութիւնն,
Կամ ընդ նմա Մուրթքէի քաջ ազգասիրութիւնն,
Որ ապրեցոյց Յակովբայ ցիրուցան եղեալ տունն,
Ոչ ծննդական ձիրքն, ոչ հայրական արիւնն,
Այլ վերոյիշեալ հոգւոյ պարգևն էր թանկագին:

Ազգասէր մարդոյ միտքն ալեկոծեալ կ'լինի
Երբ իւր ազգն այլազգեաց ստորանկեալ կ'լինի,
Բարի նախանձն 'ի նմա անշէջ վառեալ կ'լինի,
Թէև յԱրամեան գահին մտօք բազմեալ կ'լինի,
Բայց վիճակաւ մերթ անարգ, մերթ զըպարտեալ կ'լինի,
Սակայն երբէք չի խախտուիլ սէզ և անդարձ գլխովին:

Ազգասէր մարդոյ տունն խաղաղութիւն կունենայ,
Ճշմարտօրէն ասուիս, պարզ գրութիւն կունենայ,
Թէ ողջ ազգին՝ թէ անձին—մէկ ընտրութիւն կունենայ,

1 և 2 տողերը պէտքէ կրկնել իւրաքանչիւր տան վերջում:

Որքան միտքն, կամ սէրն տարածութիւն կունենայ,
Ազգասէրն նոյն չափով՝ շուք և անուն կունենայ,
Վերընծայուող Արարչին և անձնատուր Կայսերին:

Երբ տասընամեայ լինի ազգասիրի զաւակն,
Իւր հայրենի լեզուան կը գրէ իւր նամակն,
Հաւատոյ Հանդանակն և ծիսից նպատակն,
Այնուհետև կշարժէ իւր մտաց աշտանակն,
Այլ և այլ լեզուաց տալով իւր ուսման ժամանակն,
Ինքն ինքեան կ'լինի համալսարան իւր ազգին:

Եզգասէրն կ'ցանկայ իւր ազգի փրկութեանն,
Նաև նորա լաւապէս յաշխարհի կեցութեանն,
Խաւար ազգաց մէջ՝ նորա պարզ լուսաւորութեանն,
Քաղաքական կանոնին, կրթութեան աստիճանն,
Թէ առ Աստուած, թէ առ մարդիկ ապօրինաւոր բանն,
Ոչ իւր անձին կը ընտրէ. ոչ ազգական ընկերին:

Բայց ես անբաղդ և անոյս է իմ վիճակն ինձ համար,
Ծրարեալ պահուած մնաց ուսման նամակն ինձ համար,
Ոչ պիտանի, ոչ յարգի մարմնեղէն ակն ինձ համար,
Այլ իբր միջօրեայ լոյս կայ իմ փափագն ինձ համար,
Ծեր Կոռնոսն¹⁾ է դառել իմ ժամանակն ինձ համար,
Չիք ազգասէր այնպիսի, որ ասէ—վայ քեզ Շիրնն:

« Հ Օ » Տ Ա Ռ Ը

Երբոր գլխատառից հասարակ դարձաւ,
Գլորեցին աստիճանից Հօ տառը.
Փոքրանալով՝ «Թօ»-ին հպատակ դարձաւ,
Ջրկուեցաւ բառարանից Հօ տառը:

1) Հին Յունաց շատուած, որին կ'ձևացնէին աղկարդ ծերունու նման՝
ձեռքին գերանդի և մանգաղ:

Մտաւ ելաւ հարիւր տեսակ տպարան,
Ձեռ չը կորցրուց, պահեց ինքն իրան,
Չատ էլ մամուլի տակ սեղմեցին նորան,
Ազատ պրծաւ ոլորանից չօ տառը:

Երբ «Ռա»-ն սկսեց «Թօ»-ի հետ մեծ դատ,
«Ուէ»-ն «Բեն»-ը բառգրքում տեղ գտան ազատ,
Մեծ «Գեն»-ի շնորհիւ նորանց համեմատ,
Դուրս գալ կուզէ տանջարանից չօ տառը:

Ջիւան, չը լինելով գեղազիր նօտար,
Գոպիտ «Քէ»-ն էլ նորան չի թողնում դադար,
Ոհն ու ահը իւր ճակատում գրբած կար,
Երբ դուրս ելաւ ձուլարանից չօ տառը:

ՍԻՐԵԿԱՆԻ ԳԸՆԳԱՏԸ ՍԻՐՈՒՀՈՒՅՑ

Ես քեզ սիրի, որ դու ընծի չը թարկես,
Եթէ թարկես՝ հոգով մարմնովդ խարկես,
Անիծեմ, տաս տարի տեղումդ պարկես,
Եօրդանի մէջ տքայ կողերդ, աղջիկ:

Ում հետ էլ որ երթաս՝ հետդ չը վարուի,
Պսակուելուդ օրը՝ քողքդ սե կարուի,
Հօրդ տուն ու դուռը սե քարով շարուի,
Ախ ու վախով մնայ ախպէրդ, աղջիկ:

Մօրդ լեզուն ուռի, բերանը փակուի,
Քառսուն օր տանջուի՝ հոգին չը քակուի,
Ընծենց դայրի հետդ ու որ պսակուի,
Իրեր օր չը վելէ սէրդ, աղջիկ:

Չգտնիս խամ կտաւ էնես արխալուդ,
Լէն-բօլ աշխարհքի մէջ օրըդ անցնի սուդ,

Հացդ կորեկ էղնի, գարին հետը կուդ,
Օձի պէս սակաւի քո կերըդ, աղջիկ:

Ես մէկ խեղճ աղայ եմ, էրի քեզ գիւման,
Աստուածածինն էնէ քու մօրդ դիւան,
Իր կենաց մէջը նա՝ շունենայ սաղ ջան,
Որ ինձ էրաւ տնից դարբէղար աղջիկ:

Պատճառն ինչ էր, որ չհանաք դուք ընծի,
Կարօտ էք դովլաթի, փափագ էք գանձի,
Առաջ խօսք տուողի լեզուն պապանձի,
Տանողդ չը տեսնի քու խէրդ, աղջիկ:

Ալադեօդ աչքերդ, կամար ունքերդ,
Ուզում եմ հեռանամ՝ չի թողնում սէրդ,
Քեզի ընձէն էրաւ քու քեաֆիւր մէրդ,
Խնդրում եմ շատանայ վէրքերդ, աղջիկ:

Ես Զուլալօղլին եմ, դարգովդ եմ կեցի,
Գիշերն եմ մտածի, ցերեկն եմ լացի,
Տասը տարի խաթրիդ աղապ մնացի,
Ծակծկի ծոցիդ մէջ ծծերդ, աղջիկ:

ԳՈՎԱՍՍԱՆՔ ՀԱՐՍԻՆ



դ ինչ լանգառով կ'ընես,
Եավաշ — եավաշ գալուդ մեռնեմ,
Հաբիր էս սաղրի սօլեր,
Ծեռիկ շօրօր տալուդ մեռնեմ:

Համաշայ մուշտարիդ կուշտդ ի,
Վիդդ ճեկել էս մէ կշտի,
Տեսնեմ քեզի ուլ է պշտի,
Լալուդ, ինդիրդալուդ մեռնեմ:

Երկէն վիզդ վզանոցով,
Սիրտս էրիր կրակ բոցով,
Կարմիր երեսդ իրիսնոցով
Պազնեմ, ջուխտակ խալիդ մեռնեմ:

Հաքնուիր իս քեանց նորախարս,
Սիրտս ուրախ քանի տու կաս,
Հաւասդ կեալուս կծղղաս,
Կաքաւ կրկնալուդ մեռնեմ:

Ասիմ—Յարութիւնն էս, եարի,
Չգիտցան էդ ինչ բէհաբարի,
Ձուրցալ տուիմ՝ գլխով արիւր,
Ձեռով ջուղար, տալուդ մեռնեմ:

Է Ջ Մ Ի Ա Ժ Ի Ն

Ե ջմիածին խիստ պայծառ, սիրուն տեսի,
Երկու հարիւր կանթեղ, յիսուն ջահ տեսի,
Դիփ ամէնը ջերկայ-ջերկայ վառ տեսի,
Վաթսուն յաւել հէնց ոսկէ բուրվառ տեսի,
Լուսաւորչի տաճարն մարմար տեսի:

Մարմար քարից շինած էր աւազանն,
Բերին՝ դրին տասներկու զաւազանն,
Որ խաչով խաչակնքեց սրբազանն,
Ինքն իրան էփեց մեռոնի զազանն,
Համբուրեցի մէկ էսպէս հնար տեսի:

Ուխտ ին եկել հիւսիսայ մինչի հարաւ,
Դիփ լի էին, ոչ սոված ին, ոչ ծարաւ,
Տասներկու եպիսկոպոս թափօր արաւ,
Տիրացուների ձայնը խելքս տարաւ,
Նրանց ժամ ասելն ուրիշ բան տեսի:

Հռիփսիմէն, Չողակաթն, Գայիանէն,
Երեքն էլ խիստ զօրաւոր նշան են,
Մեծ ու փոքր հինգ հարիւր միաբան են,
Աջով-խաչով սիրուն պատարագ կ'անեն,
Երեք հարիւր ոսկէկապ շուրջառ տեսի:

Միսկին-Բուրջին ասում է—չի'իլ հատը,
Սուրբ Լուսաւորչին է տուել խրատը,
Որ անիծեց՝ խոզ դարձաւ Տրդատը,
Ոսկի'արծաթ պատկեր է ամեն պատը,
Աբրըշուսէ խալիչէքն դառ տեսի:

ԱՇՈՒՂ ՂԱՐԱՅԻ ԶՂՋՈՒՍԸ

Ե ս աշխարհը մին լաւութիւն արա՛,
Կանգատ չունիմ, դալն ինչ անեմ,
Ժամանակով քեզ ճար արա՛,
Զլինել իխտիար հալն ինչ անեմ:

Ուղիղ սրտով ժամ գնալով,
Ճանապարհը լաց լինելով,
Ձեռով ողորմութիւն տալով,
Սրտէս չի գայ տալն ինչ անեմ:

Զատ է մեր սաղմոսի զօրքը,
Պէտքը կուգայ էն աշխարհը,
Պատիւ արէք, պահէք փառքն,
Տիւռ ջաւահիր լալն ինչ անեմ:

Մի թողալ մեղքդ շատանայ,
Ձեզ կ'խաբի չար սատանայ,
Մէջ գերեզմանն չեմ գինջանայ,
Վրէս քաշած սալն ինչ անեմ:

Սուտ բաներին մի տալ վկայ,
Արդարներին տանջանք չ'կայ,
Տեսէք, մարդ կայ տուրք էլ չի տայ,
Ոսկի, արծաթ, մալն ինչ անեմ:

Ես մեղաւոր աշուղ Ղարա,
Գործած մեղքիս, Տէր, ճար արա՛,
Մեղաւորաց չըլի չարայ,
Հագամ քիրման, շալն ինչ անեմ:

Վ Ա Ր Ս Ա Ղ Ի

Եսօր իմ եարս տէհամ թաքուն էր,
Ուզեցիմ արի գիմ, այր էս,
Գաս, չեմ կանայ քաշել ցաւերդ,
Սիրականի համար ես լին, այր, էս:

Լաս, աչքերիդ արտունքն սեւաւ ա,
Ինձի դնէ հանեց էշխիդ ալաւը,
Ալ դումաշ ի վերի խաբած խալաւը,
Քանց բլրիւի կ'կայնես դա, այր, էս:

Գաս կառնես դու ինքդ համաշա,
Իմ սիրականս էլաւ մի դալամդաշա,
Քնամալու հետն իւօսան, լեզուն անուշ ա,
Որ ես դու բռնենք բէն, այր, սէ:

Մ Ա Ե Յ Ո Ւ Ե Ր Գ

Ես ինչ թաւուր քար ջիկար իմ,
Թորկեր իմ գիմ ճըժերն ՚ի չօլ,
Բառաղայ խլիին բէկար իմ,
Գու կըտըռտիմ բէհուդա սօլ:

Խէրիք մնամ էլու դռներ,
Էրթամ գտնիմ գիմ խեղճ դառներ,
Ջրիմ գիմ բօստնի ծառներ,
Չինիմ ընտուր յաղբուր ու գօլ:

Չոր երբ դատիմ ես խաց-փորի,
Ու դան իմ աւայիք կորի,

Ես կու պարկիմ դօշակս է բօլ:

Սէֆիլ Անօս մնաց լալով,
Մեռաւ խլիի պարտքեր տալով,
Չուր երբ մնայ խէրուան շալով,
Կըպէն խաղայ առանց դըհօլ:

Հ Ի Ճ Ր Ա Ն Ի



որկեր իմ խեղճ, տկուր գիմ ճժեր գիմ տուն,
Կուրտիմ մէկ փշուր չոր խացի խամար,
Ըսկի չունիմ դադար, ըսկի չունիմ քուն,
Եօթ տարի է յինէ չունին մէկ խապար:

Չըմ գինայ թէ՛ մըկայ ինչ ճուն տամ խալիս,
Կուրցեր ին իմ աչեր, մացեր իմ լալիս,
Մէ գուռմ էլ չի բացուի իմ սե եղբալիս,
Ջէմլէ էն Կիկոն իմ, անօթի, անճար:

Խայու խաւատ, Խայու Աստուած, փրկէ՛ գիս,
Դիպա Մշու դաշտը իմ տուն խրկէ՛ գիս,
Եա չէ առ գիմ խոզին, ումբէս զրկէ՛ գիս,
Ճամբախըս չիբիշկէ իմ սէֆիլ նուպար:



Դ Ի Ի Ռ Է Ի Տ

Քէպէտ ես մեծ տան նշան եմ,
Ամենից ազնիւ իշխան եմ,
Ոչ մեռած եմ, ոչ կենդան եմ,
Օգնական չունիմ, ինչ անեմ:

Ով անցաւոր, ինձի նայիր,
Անբախտութեանս խնայիր,
Ինչ կուլէր՝ փոքր մնայիր,
Իմանայիր թէ ինչ բան եմ:

Թշնամիք մարդս մեռուցին,
Մէջքս ծանրութեամբ կեռուցին,
Որդիքս ինձնից հեռուցին,
Այժմ այլոց ապաստան եմ:

Չեռումս կոտորվեց սուրբս,
Վնասուեցաւ առ ու տուրս,
Լեղի դարձաւ քաղցր ջուրս,
Բաս ես հնց չի յովոց հանեմ:

Առաջ կէի անձամբ անձին,
Այժմ կարօտ այլոց գանձին,
Սէյառ, քեզ ասեմ առանձին,
Այրիացեալ Հայաստանն եմ:

Պ Ա Ր Տ Է 2



Բրե Արաքս ես հոսում եմ,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ,
Չը ջրուելուդ ափսոսում եմ,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ:

Ահա անգութ արեգակը,
Քո մէջ լցնում է կրակը,
Այրում է մինչ քո յատակը,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ:

Պտղատու ծառդ չորացաւ,
Եւ անունդ ստորացաւ,
Միթէ բաղդը քեզ մոռացաւ,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ:

Ծաղիկներդ խունանում են,
Վարդերդ օտարք տանում են,
Սոխակներիդ սպանում են,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ:

Չկայ քեզ նման վարդարան,
Բայց վարդերդ օտարք տարան,
Սոխակներդ ո՛ւր կը կարդան,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ:

Պահապանդ տկարացաւ,
Միթէ քոյ բաղդը կուրացաւ,
Անգոր թշնամիդ զօրացաւ,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ:

Պահապանդ պարտաճանաչ,
Տկարացաւ, ով մեծասքանչ,
Թառամեց բոյսերդ կանանչ,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ:

Դու պտղատու պարտէզ էիր,
Իմ նախնեաց ասպարէզ էիր,
Ծառդ միշտ կանաչ կուգէիր,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ:

Ինձի վարձել է քո տէրդ,
Որ ժողովեմ ծառներդ,

Նորոգեմ հնացեալներդ,
Ո՛ւր է պահապանդ, պարտէդ:

Պայծառ Տրդատեանս մենակ,
Քո մասին ողբում եմ անյադ,
Մինչև երբ մնաս աւերակ,
Ո՛ւր է պահապանդ, պարտէդ:

Թ Է Ճ Ն Ի Ս

Թ մ տուած յարգանքս, պատուելի ընկեր,
Անկեղծ սիրելիի պատիւ համարէ,
Իմացիր, քո սէրդ սրտումս է ընկեր,
Այրիւս քո տեսոյդ, քեզի համար է:

Հագել, զարդարուել ես գեղեցիկ հալաւ,
Ամեն մարդ քեզ կասէ գեղեցիկ, հա՛ լաւ,
Հոգիս կրակովդ, գեղեցիկ, հալաւ,
Թէ խիղճ ունիս, մէկ մտածէ, համարէ:

Ջիվանիս վերքերն արիր քարանձաւ,
Մարդ եմ ես, սիրելի, չեմ քար անցաւ,
Քո մասին գլխիցս քա՜նի քար անցաւ,
Լեր ցաւակից, արի, թուէ, համարէ:

Ս Ա Մ Ա Յ Ի

Թ նձ սիրեցիր էշխըն նընկար, խաղը դավթար իմ քիզ ամա,
Մի քաղի փըշի ծաղիկն՝ վարդ, սուսանբար իմ քիզ ամա,
Չեմ թօղնի արէգակումըն՝ բաղչի սաջար իմ քիզ ամա,
Ես քու մահըն վնւնց կու խնդրիմ՝ նազլու շաքար իմ քիզ ամա,
Էլ քու բաղին մըտիկ արա՛, ուրիշ բաղէն վարթ չին տայ քիզ,
Աղ ու հացըն մի գէն զըցի, շաբթէնը մէկ մըտիկ տո՛ւ միզ,

Թէգուզ աշխարըս պըտուտ գաս՝ չիս տեսնի ինձ պէս աղիզ,
Թաք ուրիշ գօզալ չը սիրես՝ իրդարով եար իմ քիզ ամա:

Թաք ես մօրէս չ'էի ծնի, վնյ էն օրին՝ ես քիզ տեսայ,
Դու բուլբուլ իս, ես կարմիր վարթ, չ'ասիս թէ վարթըն,
Չալդ կեսայ:

Մէ փոքր էտէնց զիմացի, շուտով Հընդըստան մի էհայ,
Անգործիլ անխարջ ու քրէհ՝ մանտիլի զար իմ քիզ ամա:

Աստուած վկայ, զիմիշ արած գըլուխըս քիզ մատաղ ըլի,
Ե՛կ քիզ հետ սիրով տամ անիմ, ով գուզէ բէգամաղ ըլի,
Ես քու խօսքէն չիմանցկենա, թաք քու դամաղըն չաղ ըլի,
Թէգուզ անմահութին ուզիս՝ սիրով կու ճարիմ քիզ ամա:

Քու դարտն ինձի պառվէցուց, ո՛ւմըն ասիմ Սայխաթ-Նովա,
Մի գցի ձեռնէմէն ձեռըն՝ ոսկէ թաս իմ, Սայաթ-Նովա,
Փռանգստանու մէջն էլած՝ զար տալաս իմ Սայաթ-Նովա,
Ծալէ դավթարդ, զութին զի ուանդ ուրուդար իմ քիզ ամա:

Ս Ի Ի Վ Ա Ր Ա Կ

Թ նչ եղար, մէկ գո՛ւրս արի, Հայոց արեգակ, ինչ եղար,
Թողնելով որդիքներդ խաւար մութի տակ, ինչ եղար,
Հինգ դար ու վեց տարի՝ հեռանալդ ճիշտ մեզանից,
Ապրում ենք առանց լուսոյ այսքան ժամանակ ինչ եղար:

Մասնաւոր շառաւիղդ մօտ տարիներս ցոյց տուիր,
Ազգի մէջ բարձրացուցիր աղմուկ—աղաղակ, ինչ եղար,
Քո զիւցազուն, անարատ, քաջ Հայերդ այսքան տարի,
Մահմեդի որդիքներին թողիր հպատակ, ինչ եղար:

Սառեցաւ մեր արիւնը ցուրտ հողմային պաղով թիւնից,
Ե՛կ, հասիր, լոյս ջերմարար, կենդանի կրակ, ինչ եղար,
Բալքանեան լեռներիցը նոր գուրս գալով արիի պէս,
Մէկ զուն էլ, Հայոց արեւ, ցոյց տո՛ւր նշանակ, ինչ եղար:

Ափսոս եմք, խղճանք, մէկ ազնիւ լուսարար թագունհի
 Ընծայէ Հայաստանին արժանի պատկ, ինչ եղար,
 Կեանք կուտան ողջ հայերը, Ջիւանին էլ քեզ համար,
 Դուրս արի պայծառ լուսով, ազատ—համարձակ, ինչ եղար

Ս Ի Ր Ա Հ Ա Ր Ի Ե Ր Գ



օսքս պատմեմ քեզ համառօտ,
 Սրտիս մէջ լցրել ես վառօղ,
 Ո՛հ, սիրելի, քեզ եմ կարօտ:

Սիրելի, քեզ հիւր գալու եմ ես,
 Չգիտեմ թէ երբ գալու եմ ես,
 Պատրաստ կանց, շուտով գալու եմ ես:

Ինձ տրել ես սիրուղ գերի,
 Որքան կամենաս չարչարի,
 Միայն փափագս մի թող թերի,
 Սիրելի, քեզ հիւր ես այլն,

Վերջ տալու եմ սիրուս էրուած,
 Քո սիրուղ կրակին վառուած,
 Խելքով մտքով քեզ եմ տարուած,
 Սիրելի . . .

Երիտասարդ ես, նոր արմատ,
 Մի պոռոշ սեր, մինը կաթ.
 Բերանդ մեղր ու նարաթ,
 Սիրելի. . .

Այտերդ վարդ ու աննման,
 Գեղեցիկներէն պատուական,
 Չկայ նմանդ սիրական:
 Սիրելի. . .

Իմ անուշիկ, աննման ես,
 Իմ գեղեցիկ պատուական ես,
 Իմ կեանքիս պահապան ես:

Սիրելի. . .

Գ Ա Զ Է Լ

Խնդրում եմ, աղերսում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն,
 Ողբալով, մորմոքում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն,
 Երկիւղով, սուրբ անունդ սրտիս վրա գրած կայ միշտ,
 Բազմատարած խնդրումեմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն:

Քո Ղարիպն եմ խղճալի, ցոյց տուր, Տէր իմ, մէկ ճանապարհ,
 Հաւատում եմ, որ քո մօտդ չըկայ մէկ բան անհնար.
 Այս ամայի—անապատ տեղերում ինձի մահ մի տար.
 Ես չափազանց տրտում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն:
 Թարգ. Ջիւանի

Ղ Ո Ը Մ Ա Յ



արդացէք իմ բաղդի նամակի սեր,
 Երևում է ինձի օտարի նման.
 Սկսեց թառամիլ կեանքիս տերեր,
 Չմուսն ժամանակի Յունուարի նման:

Այո անիրաւ բաղդս ինձի յոյս տալով,
 Մնացի մորմոքած, ողբալով, լալով,
 Յաւովս տապում եմ աշխարհ մանկալով,
 Անհովիւ մոլորում ոչխարի նման:

Այս անիրաւ բաղդէս հաշիւ չունեցայ,
 Երկինքը սլացող արծիւ չունեցայ,

Պայնդուխտ աշխարհի մէջ պատիւ չունեցայ
 Համարում են ինձի յիմարի նման:

Ո՛հ, անիրաւ բաղդից մի բան չիմացայ,
 Մէկ տարիից մինչի երեսունն անցայ,
 Զարմանք չէ, որ այս ցաւերին զիմացայ,
 Երկաթիցը ամուր՝ լեռ քարի նման:

Զահրին եմ, աչքիցս ցողը պակաս չէ,
 Էրեցած սրտիցս՝ բովը պակաս չէ,
 Գիշեր ցերէկ գլխիս հովը պակաս չէ,
 Անբաղդ Արարատեան մեծ սարի նման:

ՂԵԼԵՆՏԷՐԻ ՄԻԻԽԵՄՄԷԶ

Սոյս, իմ սիրունին բնական՝ Աստուած վկայ, դու ես,
 Չունիմ ես ուրիշ սիրական, Աստուած վկայ, դու ես,
 Աշխարհի մէջը գովական, Աստուած վկայ, դու ես,
 Մէրդ քաշողին հոգեհան, Աստուած վկայ, դու ես,
 Քմահաճոյ վարդ ու շուշան, Աստուած վկայ, դու ես,
 Դրախտը ծոցիդ վարդարան, Աստուած վկայ, դու ես:

Պարտիգումը մանիշակը քեզնից գեղեցիկ չէ,
 Ոչ քրքումը, ո՛չ մեխակը, քեզնից գեղեցիկ չէ,
 Ոչ գիշերային լուսնեակը, քեզնից գեղեցիկ չէ,
 Ոչ արեւ ու լուսնեակը, քեզնից գեղեցիկ չէ,
 Մինչ երկնային հրեշտակը քեզնից գեղեցիկ չէ,
 Չկայ քեզի համանման, Աստուած վկայ, դու ես:

Չէ որ դու ես իսկ պատճառը, ազնիւ սիրական իմ,
 Որ վառվում է կեանքիս ծառը, ազնիւ սիրական իմ,
 Թէ կ'սիրես Աստու զառը, ազնիւ սիրական իմ,
 Լից վառ կրակիս ջուր սառը, ազնիւ սիրական իմ,
 Ապրեցու քու խեղճ Պայծառը, ազնիւ սիրական իմ,
 Զի Պայծառիս իսկ պահապան, Աստուած վկայ, դու ես:

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻԶ



այ եղբայր ուսուցիչ, դու մի խնայիր,
 Ինչ ուսում առել ես՝ քու ազգիդ խղճուկ,
 Գիտութեանդ լոյսը սրտով ընծայիր,
 Արծարծէ մանկական սրտերում փափուկ:

Նայելով փրկութեան վեհ աստիճանից,
 Ամեն մի բան սպասվում է քեզանից,
 Ում շատ տրուաւ, շատ պահանջուի նրանից,
 Կատարիր Փրկչական այս խօսքը յատուկ:

Յարգըդ չը գիտնալը մի բերիլ պատճառ,
 Զամալիս յուսով է, չես մնայ թշուառ,
 Ապագային արածներդ շատ պայծառ
 Կերեի փայլելով, չի մնայ ծածուկ:

ԳԵԱՆՉԱԼԻ

Հանդիպողը քեզի տխրի կը մնայ,
 Տեսնելով վիճակդ թշուառ քո, Անի,
 Անիրաւը երբէք էլ մօտդ չի գայ,
 Բաղդդ ուրացել է իսպառ քո, Անի:

Պալատներդ հողին եղած հաւասար,
 Կրկին նորոգուելու չունիս յոյս ու ճար,
 Վանքերդ կիսաքանդ, առանց ժամարար,
 Ո՛ւր է զրութիւնդ պայծառ քո, Անի:

Ո՛ւր է Աշոտ Երկաթ, ո՛ւր Վահրամ իշխան,
 Ո՛ւր է Սմբատ Մեծ-Ջահնշահ ախոյեան,
 Վեստ Սարգիսի ձեռքով կերաւ Յունաստան,
 Ո՛ւր է սէգ Գաղիկդ կայտառ քո, Անի:

Չունիս շէն մնացած մի տուն, մի փողոց,
Դարձել ես բունբուն ձագուց օրօրոց,
Այգիներդ ողջ եղել են փշանոց,
Դոնէ չի երևում մէկ ծառ քո, Անի:

Կիսամեռ ես, չ'կան ձեռքերդ ուժեղ,
Արդէն քարակոյտ ես, էլ չես փառահեղ,
Դտնվում են ամեն երկիր, ամեն տեղ —
Ժողովուրդդ պանդուխտ, չուառ քո, Անի:

Անասնոց հօտերը զօրքերիդ տեղակ,
Կողքըտում են քեզի ազատ—համարձակ,
Օր աւուր զառնում ես կրկին աւերակ,
Անտարբեր որդիքդ են պատճառ քո, Անի:

Նենգեր չ'լինէին, ո՛վ դու նախաթող,
Կապրէիր պապէ-պապ, մինչև թուէ-թող,
Վանքերիդ քարերից շինում են ախոռ,
Դիւղացիքդ տգէտ, ցանցառ քո, Անի:

Էլ ոչ աւան ունիս, ոչ էլ ազարակ.
Չունիս ազօտ լուսով գոնէ մէկ ճրագ.
Այրի աղքատ կնոջ նման, խեղճ քաղաք,
Հանդերձներդ պատառ-պատառ քո, Անի:

Նման ես ջախջախուած ծովասոյց նաւի,
Տեսնողը չի օգնիլ, միայն կըցաւի,
Դրութիւնդ նոյնն է, չի փոխուիլ լաւի,
Դարուն, ձմեռ, ամեն ամառ քո, Անի:

Քո մէջդ այնպիսի մարդիկ գտնուան,
Որ քեզի մատնեցին Յուդայի նման,
Պատճառը չար—հոգի իշխաններդ եղան.
Որ չ'մնաց ճրագդ վառ քո, Անի:

Ուրացան Արարչին, հետեան չարին,
Անունդ, պատիւդ խփեցին քարին,

Թագաւորդ վաճառեցին օտարին,
Քահանայքդ կերան կաշառ քո, Անի:

Չ'կայ զանգակի ձայն չ'կայ զողանջիւն,
Լուովիւն է տիրել ամեն մի անկիւն,
Տաճարներուդ միջից սաղմոսերգութիւն
Էլ չի լսվում քաղցրաբարբառ քո, Անի:

Նրան էլ է դիպել մահառիթ նետը,
Որ այդպէս տխուր է, չի խօսվում հետը,
Արիւն արտասուներով Ախուրեան գետը,
Մօտէդ կանցնի միշտ անսպառ քո, Անի:

Միջիդ շահասէր մարդիկը ոխակալ,
Քուկիններիդ կ'հանէին միշտ սխալ,
Դետը դարձուց, քեզ չ'կարաց օգուտ տալ,
Կաթուղիկոսդ վեհափառ քո, Անի:

Մի լայ, մայր ողբալի, քաղաք դու, մի լայ,
Տաճարներուդ պաշտպան մեծ Հայրապետ կայ,
Արարատդ բնագաւառ քեզ վերայ
Միթէ չի մտածիլ երբէք, խեղճ Անի:

Ջիւանի, սրտագէտ էակը արգար,
Բարուն բարի կուտայ՝ չարին էլ միշտ չար,
Քեզ կ'ործանող ազգն էլ չապրեցուց երկար,
Արարիչդ սուրբ, անաչառ քո, Անի:

Ք Ե Ա Ր Ա Մ Ի

Հեռացէք, ո՛վ ամպեր, գնացէք հեռու,
Այս մութ երկրումը արեգակ տեսները,
Չեր սև երեսովը մնացէք հեռու.
Դոնէ մենք էլ մի պարզ եղանակ տեսները:

Քանզի մեր երկրորին սլատճառել էր մութ,
Վասնորոյ մենք գործից չենք քաղում օգուտ,
Արդեօք մինչ երբ այդպէս դուք լինիք անգութ,
Քաշուէք, դոնէ գիշերն արուսեակ տեսնենք:

Արդեօք ձեր անունը գրենք ինչ տառով,
2էք արժան, որ խօսինք Հայոց բարբառով
Պայծառս չ'զիտեմ, թէ ձեր պատճառով,
Մինչ երբ մեր երկիրը աւերակ տեսնենք:

Ս Ո Ւ Յ Ա Մ Մ Ա Ձ



ախորդ օրերը ձմռայ նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան,
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,
Որպէս յաճախորդ՝ շարունէ շարան կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի զլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան՝ կուգան ու կերթան:
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,
Որքան մանիշակ, վարդ, պալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր գանաղան կուգան ու կերթան,
Արեւ առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի ադօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ գաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական՝ կուգան ու կերթան,
Աշխարհը հիւրանոց է, Զիսան, ազգերը հիւր են,
Այսպէս է կանոնը բնական — կուգան ու կերթան:



Դ Օ Ձ Ա Լ

Ձենդ քաղցր ունիս՝ լամգօվ կու խօսիս,
Նա պահէ քեզ, ումն օր ծառայիս, գօզալ,
Մէջկըդ ջէյրանի է, ռանգըդ շաքարի,
Փռանդըստանէն էկած խարա իս, գօզալ:

Ղումաշ ասիմ՝ շուրեղէն է, կու մաշուի,
Սալբի ասիմ՝ ախրը մին օր կ'տաշուի,
Ջէյրան ասիմ՝ շատ մարդ քիզ հետ կու եաշուի,
Բաս վոճնց թարիփ անիմ՝ միլա իս, գօզալ:

Թէ մանուշակ ասիմ՝ սարէմէն կօսին,
Թէ ջաւայիր ասիմ՝ քարէմէն կօսին,
Թէ վուր լուսին ասիմ՝ տարէմէն կօսին,
Արէզակի նման փարա իս, գօզալ:
Սայեաթ-Յովա.

Ս Ա Ր Ի Ա Ս Տ Ղ Ի Կ



ատին մատնի է աննման,
Թւին ոսկի ապարանջան,
Ծագեց աստղը առաւօտեան:
Սարի աստղիկ, Կապոյտ աստղիկ, Լուսոյ աստղիկ,
Զօհալ աստղիկ, Հրատ աստղիկ, Ինչ անգութ ես,
Քեարվան-դռան, դարձ, դարձ, դարձ, դարձ,
Դեռ սիրելուցս չեմ կշտացել, դարձ,
Դարձ, դարձ, դարձ:

Մի աստղիկ ծագեց դեղնածայր,
Սիրահարք եղան նետահար,
Եւ ես նոյնպէս անմխիթար:
Սարի աստղիկ նեն:

Խնդրում եմ, ով աստեղագետ,
Այս գիշեր ուշ եղիւր անհետ,
Ժամադիր եմ սիրունուհու հետ:

Սարի

Ով իմ դեղնածայր արշալոյս,
Ումնից հալածուած կ'տաս խոյս,
Քո վերայ է իմ վերջին յոյս:

Ո՛վ դու փայլուն աստղ երկնային,
Արդե՞ք տեսել ես իմ Ասլին,
Մատաղ լինիմ նորա կեանքին:

Սարի , . . .

Քեզ կանուանեն—գիշերափար,
Իսկ ինձ—խեղճ Քեարամ սիրահար,
Մնա միշտ լոյս և անխաւար:

Սարի

Թարգ. Նսայաթ

Գ Ա Զ Է Լ



ազելոյս ամպ է իջել արեւի պէս վառ երեսին,
Սգուորի պէս, սև շղարշ է ծածկել պայծառ երեսին,
Աչքերի և ունքերի սեւութիւնը չէր բաւական,
Որ նորից մութ քօղ է առել կոյսը կայտառ երեսին:

Կաթնաբուխ բերանը փակ, աչքերը արդէն դալկացած,
Խաւար գիշերի պէս պատել է պատկառ երեսին,
Մէկ տարի կայ, չեմ գիտեր, հիւանդ է, ինչ է տիրուհիս,
Կտրել է—վերացել է ժպիտը իսպառ երեսին:

Մարտը զարուն գիտնալով՝ զգոյշ չպահեց ինքն իրան,
Գոյնը որ թօթափել է՝ ցուրտն է պատճառ երեսին,
Տապալեց յոյսդ օդապարիկի նման, Զիւանի,
Հարաւից յանկարծ փչեց ահուկի թաթառ երեսին:

Դ Ի Ի Ա Ն Ի



վ մօայլ Ուրբաթ-աւագ, զի անունդ անջատեցին,
Եւ մնացեալ օրերից որոշվելը հաստատեցին,
Դադանիքը Աստուածային ծածկուած մնաց մէջ գիշերիդ.
Յուզայի կեղծ համբոյրով անմեղը բռնադատեցին:

Սաղմոսերդու Դաւթի անսուտ բանը լրումն առած՝
Աշակերտքը խոյս տալով անհետանալ աշխատեցին,
Չար նախանձից զրդուած՝ չարչարանաց ենթարկելով,
Դատ անողի անուանը դատ բաց արին, նախատեցին:

Ձեռք լուաց Պիղատոսը, անմեղութեան նշան տալով,
Վճռեցին խաչ հանելու. ուրիշներից չ'զատեցին,
Որը ապտակեց, որը ծաղր, ու ծանակ առաւ նորան,
Հանեցին հանդերձները, բաժանեցին. կտրատեցին:

Ձեռքերն ու ոտքերը բեռեցին խաչի վերայ,
Ճակատը և գլուխը փշեայ պտակով պատեցին,
Ծայրայեղ զրպարտանաց ենթարկուած էր անմահ հոգին,
Անմեղը խաչ հանեցին և Բարաբրան ազատեցին:

Քացախը խառն ընդ լեղւոյ տուին փոխանակ ցուրտ ջրի,
Եւ նիզակով աջ կողը ծակոտեցին, ջրատեցին,
Աջ և ահեակը նորա՝ երկու աւազակ խաչ հանած՝
Չ'ճանաչեցին Տէրը, և յարգը չ'գնահատեցին:

(Մահուամբ զմահ կոխողն և յարուլթեամբ կեանք պարզեող)
Տէրը չ'ճանաչեցին, Սուրբ անունը կրճատեցին:
Թարգ. Նսայաթ

ՎԱՆ-ԳԻԻԲԵԻՏ

Ով նազելի, մի լար, բնու է,
Վառվում եմ, Ասլի, վառվում եմ,

Ցաւս ուրիշ սեւակ ցաւ է,
Վառվճում եմ, Ասլի, վառվճում եմ:

Այս ցաւը ինձ մահ պատճառեց,
Կերաւ կեանքս և սպառեց,
Քո կրակդ ինձ վառեց,
Վառվճում եմ, Ասլի, վառվճում եմ:

Ինձ լսէ, իմ հատընտիրս,
Մի տեղ ամփոփէ մոխիրս,
Այսպէս էր ճակատագիրս,
Վառվճում եմ, Ասլի, վառվճում եմ:

Քեարամս եմ, թշուառ արարած,
Այսպէս էր կամեցել Աստուած,
Փափագս սրտումս մնաց,
Վառվճում եմ, Ասլի, վառվճում եմ:

Թարգ. Ջիւանի

Դ Ի Ի Ա Ն Ի

Չարախնդաց չար մարդիկը թող վերջանան, ցաւ չէ ինձ,
Թող կորնչին բոլորովին անհետանան, ցաւ չէ ինձ.
Աշխարհաւեր, անիրաւ անխիղճները կերուկ ցաւ են,
Սուրբ օրէնքի զօրութեամբ մեռնին չքանան ցաւ չէ ինձ:

Բռնակալ, արինն քամող, փողապաշտ վաշխառուները
Վաղահաս կործանումով աղքատ կը մնան, ցաւ չէ ինձ.
Չ'խրատուող, ծնողաց զայրացնող զաւակները,
Տաժանակիր բանտերում աքսոր կ'գնան, ցաւ չէ ինձ:

Ժողովուրդը բարութեան ճանապարհից շեղողներին,
Օրուայ մէջ տասը հատը եթէ մահանան, ցաւ չէ ինձ.
Բարոյապէս ընկնելու վրայ են լաւ մարդիկը,
Ինքն իրենց կորստեանը ճամպայ կ'բանան, ցաւ է ինձ:
Ջիւանի

Ջ Ի Լ Փ Ե Ր Դ



անդրի, թող թափի խէտ շող երէսիդ,
Քամին իկեա տանի—բերի զիջերդ,
Աշխարհքս խինգ օր ի, մարդու չի մնայ,
Էդ էլ մէ զեօրվան ի թող քշի զիջերդ:

Մէկն Իսպահանի, մէկն Քեաշանի,
Առնող բազրգեանի տունը կը շինի,
Խազար խետ էլ խէտ ապրշումին կշռի,
Հալամ տէլ էժան ի, մի տու զիջերդ:

Էդ երկուսն էլ Յարութինին ֆարման ի,
Ինձ մէ զարդի քցիւր առանց դարմանի,
Հալղայ-հալղայ արա, թալ վիզդ կանի,
Վեաւ որ չուզի աչքը խանր զիջերդ:

Ղ Օ Հ Մ Ա Յ

Սիրելիս, ոչ ոքից դու մի նեղանար,
Որ քեզ չես պաշտպանում՝ ո՞վ է մեղաւոր,
Ծախսում ես-մխսում ես միշտ շռայլաբար,
Դործդ շես ճանաչում, ո՞վ է մեղաւոր:

Այն որ փողոցներում շրջում է քաղցած,
Չորերը կեղտոտած, վաղուց հնացած,
Խնդրեմ ասէք, նրան ինչ անէ Աստուած,
Ինքը չէ աշխատում, ո՞վ է մեղաւոր:

Այն որ հետևում է մշտապէս չարի,
Իհարկէ, իւր ոտքը կը գիպէ քարի,
Թէև խրատ տուողներ ունի բարի,
Բայց նոցա չի լսում, ո՞վ է մեղաւոր:

Լսիր, քեզ եմ ասում, չարեաց հեղինակ,
Գործում ես չարութիւն ամեն ժամանակ,
Անում ես վատութիւն հազար մի տեսակ,
Բանտի ես մատնում, ո՞վ է մեղաւոր:

Պայծառ, դու էլ մտածում ես անգաղար,
Եւ յուսահատվում եւ իբրեւ մի յիմար,
Ապագայ հոգսերդ հոգալու համար,
Հինգ կոպէկ չես պահում, ո՞վ է մեղաւոր:



ԵՐԿ ՄԱՐԿՈՒ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՆՅ, ՄԱՆԿԱԳԻԹԻՆԻՅ
ՄԻՆՉԵՒ ԾԵՐՈՒԹԻՆԵՐ:

Սկզբից իմ աշխարհ գալն էր այսպէս,
Կամաւ ճեառն առայ նշան գոյութեան,
Մօրըս արգանդի մէջ բնականապէս
Եռալով՝ շուռ եկայ մի կաթիլ արեան:

Չորս ամսում ես թմրած էի արթնացայ,
Իսկ հինգ ամսում ցնցուելով շարժուեցայ,
Եւ վեց ամսում կազմուածքս ստացայ,
Եւ ունեցայ հաստատ տիպար մարդկութեան:

Ինն ամիս, ինն օր, ինն ժամ լրիւ,
Դրուեց իմ ճակատագրի նուրբ հաշիւ,
Ժամանակ էր, ոչ զիշեր կար և ոչ տիւ,
Պիտի գայի այս աշխարհ անսահման:

Երբ ես ընկայ այս աշխարհը, մի դայեակ
Եկաւ իմ պորտը կտրեց առանց դանակ,
Ծրծում էի մօրըս կաթը շարունակ,
Եւ չ'զիտէի երկրին հիւր եմ աննշան:

Արեւի և լուսոյ լոյսը անխաւար,
Երբ ընկաւ երեսիս, խնդացի տկար,
Դիշեր ցերեկ լալիս էի անգաղար,
Խանդարելով մօրըս քունը բնական:

Տարեկան էի՝ ծաղկի նման բացուեցայ,
Չ'կազդուրում՝ չորքոտանի ընթացայ,
Թաւալելով հողերի մէջ՝ չիմացայ,
Գործում էի ամեն բան անբնական:

Երկրորդ տարում ջուր տուին չ'խմեցի,
Մեծ և փոքր մէկմէկուց չորոշեցի,
Կրակից և ջրից խոյս չտուի,
Նման էի թագաւորիմ յաղթական:

Երրորդ տարում նման էի տատրակի,
Չորրորդ տարում լեզուս դարձաւ սոխակի,
Հարժումս տեսնողը կարծէր կատակի,
Քաղցր լեզուս դարձել էր մի քաղցրաբան:

Հինգ տարումս չոր հացերը ծամեցի,
Վեցերորդում մանկանց հետ զբօսնեցի,
Եօթներորդում կարծես քիչ կազդուրուեցի,
Ութերորդում հոսում էի ջրի նման:

Տասներորդում մանկութիւնից դուրս եկայ,
Մեծ և փոքրի մէջ եղայ ես ենթակայ,
Ուժս տեղը եկաւ որպէս մի հսկայ,
Արածներս էր մերթ արժան, մերթ անարժան:

Տասնմէկում բացուեց կապը իմ խելքի,
Տասներկուում հետեցի հնարքի,

Տասներեքում մէջս մտաւ մի հոգի,
Դրդում էր ինձ ճարել անուն անվաղճան:

Տասնհինգում էի լուսին լրացած,
Եւ մի նեցուկ իմ ծերացած ծնողաց,
Ժամանակի հետ կռուելս անկասկած,
Ցոյց էր տալիս պատկեր վազրի ախոյեան:

Քսան տարում էի արդէն անարատ,
Առաւել շռայլ էի՝ քան բիրտ ժլատ,
Անյողզողգ էի միշտ և ոչ անհաստատ,
Կանգնում էի թշնամուս դէմ յանդիման:

Երեսուն տարումս սրտիցս ելաւ,
Աշխոյժս թե առած՝ սաւառնեց թռաւ,
Էի ես միշտ ապահովուած, առանց ցաւ,
Դործում էի առհասարակ քրտնաջան:

Քառասուն տարումս ես առայ դադար,
Կարծես անսանձ կամբիս զրուեցաւ նժար,
Յետ կացայ սիրուցս, առած չափ վարար,
Յուզուած ու դադարուած մի ծովի նման:

Յիսուն տարում արդէն թմրեց իմ աշխոյժ,
Եւ աչացս հարկաւոր էր ակնաբոյժ,
Ժուժկալ ոտս երբ ցոյց չէր տալիս ինձ ոյժ,
Յայնժամ դիտցայ—չէ այս աշխարհը սեփական:

Վաթսուն տարում արդէն խելքից շուռ եկայ,
Չատ պտրեցի կորցրածս էլ չկայ,
Իմ ցաւերս միայն երկինք պիտ հոգայ,
Ատամներիս ցաւից եղայ անբաժան:

Եօթանասուն տարում՝ սուրս պատենում...
Ջանքերս զուր... որսն մնաց իր բնում,
Անճարացայ մղածս անյաջող կռուում,
Բարեկամքս եղան ինձի համար դաժան:

Ութսուն տարում արդէն ես լաւ հասկացայ—
Այս չէ ճանապարհս, այլ ճանապահր կայ.
Երբ Գաբրիէլեան փողն փչեց յարակայ,
Իմ զործած մեղքերը կ'զան երևան:

Ութսուն և հինգ տարում իմ կարողութիւն
Ձեռքիցս խլուեցաւ, չեղաւ զթութիւն,
Այդ ժամանակ էլ չունեցայ ժրութիւն,
Երեքում էին ծնկներս զողզողան:

Իննսունում իմ մահը ինձ յայտնուեց,
Ամբոցներից պինդ իրանս քանդուեց,
Իսկ հարիւրում ազատ շունչս կտրուեց,
Հոգիս մեկնեց թողնելով իր օթեան:

Հոգիս և մարմինս միմիանց սիրով
Վերջին հրաժեստը տուին յարգանքով,
Հոգիս ճանապարհին դժուարութիւնով
Հրեշտակաց ձեռքով անցաւ իր սահման:

Հաւաքուելով իմ բարեկամքը եկան,
Անմիջապէս մերկացրին իմ իրան,
Ճերմակ կտաւով կարեցին իմ պատան,
Իսկ հետեւեալ օրը զրին գերեզման:

Դադաստանի օրը փողը փչեցին,
Մեզ դատ արին, այո՛, արդար դատեցին,
Որիս զրախտ, որիս դժոխք ձգեցին,
Բաժանեցին մեզ, որ էինք անբաժան:

Այս խօսքերս, այո՛, ասում եմ արդար,
Կարդացողները թող լսեն սիրաբար,
Աստուած թող լինի բոլորիդ հաշտարար,
Որին կայ սպասու յոյեցի Վարդան:

Թուրքերէնից թարգ. Խայաթ.

Վ Ա Ր Ս Ա Ղ Ի

Սուրբ Կարապետ կենացիմ, ուխտս արեցիմ,
Ես էլ արիմ դեարմէ հո, այբ, զա (հազ),
Հազ արեցիմ, լուս կերեզման խամբուրիմ,
Թարսայ դրեց ձեռս սէ, այբ, զա (սազ):

Սազս թարս ի, խօսքերս դիւզ ի,
Միայն, թագաւոր, այեան է քեզի,
Չար սատանան չար կամ արիւր խեղ մեզի,
Մէջ աչկին տնգուի կէն, այբ, զա (կազ):

Կազ տնգուի մէջ աչկին, ըլի երկու աչկէն կուր.
Մոլորի ճամբախն, չին է էթայ դեօր,
Կիրկեօր Լուսաւորչին Տրդատ թալեց մէ փոս խոր,
Էն էլ ընդարն արաց խէ, ո, զա (խոզ):

Խոզ արաց, քցեց աշխարհքը,
Չաշ տուէց գէօրութիւնը, հրաշքը,
Վրան էլ տրէց հազար մէյկ վանք ապաշխարանքը,
Էն էլ դարմէն էկաւ վէվ, այբ, զա, (վազ):

Վազի արի, աշուղ Յարութիւն, չեա խաօնի աշխարքիս տակը
Կիրկեօր Լուսաւորչու խէրն էր Անակը,
Միտս էլ ինչ կինի՝ դժոգքի կրակը,
Կալարակեմ, կըլեմ մէն, այբ, զա, (մազ):

Ա Ր Բ Ե Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Լսեցէք խմիչքի յատկութիւնն ասեմ,
Մէկ բաժակ խմողը կը լինի պատմաբան,
Քիմքը կըքաղցրանայ, պահանջ կստիպէ,
Երկրորդին կ, դառնայ պատառող ասլան:

Երրորդին թերում է իր գլխի գլխարկ,
Կարմրում է վարդի նման ընդունակ,
Բոլոր ընկերներին յայտնելով փափագ,
Չորրորդին կ՝ճարէ քանիմ օգնական:

Հինգերորդին, «բեր» ասում է անկասկած,
Բացվում է գթութեան դռները փակուած,
Դառնում է իսկապէս անգուսպ արարած,
Այլ չի լսում իշխանութեան հրաման:

Վեցերորդին խելքը առնելով ցրիւ,
Սեղմելով ատամներն իրար անհաշիւ,
Աչքերը բներից դուրս կ՝գան լրիւ,
Կստանայ մի տիպար իսկ հրեշական:

Եօթներորդում մէջքից քաշելով դանակ,
Փախչում է ամեն մարդ հէնց այդ ժամանակ,
Յիր ու ցան անելով թէ շիշ, թէ բաժակ,
«Գինի բերէք», կասէ, այն, անվաղձան:

Ութերորդում ծափ տալով կ՝հրճուի,
Իններորդում մտածելով կ՝տխրի,
Տասներորդում նորա մտքում կ՝ծագի—
Տասն և մէկում երթալ տեսնել սիրական:

Տասներկուսում նա կ՝մտնի սրճարան,
Ընկերների հետ կ՝վարուի անբնական,
Գետնով կտայ աղն ու հացը իսկական,
Տասնհինգում ընկերքն իրան կուրանան:

Որպէս անդամալոյծ՝ թին է քաշ անում,
Մերթ սուրճ է պահանջում և մերթ նեղանում,
Մերթ հագում է, մերթ թքումէ, վեր ածում,
Փշրում է ձեռքիցն ընկած ամեն բան:

Գլորուել է գետին որպէս թոյլ, տկար,
Էլ ոտքի կանգնելու չի գտնում հնար,

Ոչ գիծ է երևում և ոչ ճանապարհ,
Յեխերի հետ մարտնչում է քրտնաջան:

Վերջապէս նա մի կերպ գնում է իւր տուն,
Նեղացնում է զաւակաց և ընտանուն,
Անկողին է մտնում հագած վերարկուն,
Մռմռում է, մլաւում կատուի նման:

Կնոջն ասում է — «մայրիկ ջան, քիչ ջուր տուր»,
Ջարթել է քնից, էլ չի գալ քուն ազդու,
«Գլուխս ցաւում է, բերէք ինձ թթու,
Առաւօտեան շուտ կ'գտնեմ դեղ-դարման»:

Գիշերային ցուրտը ազդել է նրան,
Կտրուել է շունչը, յոյս չիք արձակման,
Ուշքը գինու տկճորին է գինետան,
Մոռացել է սուրբ աղօթք տէրունական:

Ոտից մինչև գլուխ բացուել են վերքեր,
Ո՛ւմ գիմ է օգնութեան, մինչ է մուլթ գիշեր,
Չեռքը գրպան տանի չի գտնի փողեր,
Մտած վերմակի տակ՝ ողբում է ներկան:

Աղքատութիւնից ստիպուած՝ մեր տխմարն,
Հպարտացել, զոռոգացել է անսահման,
Աչք տնկած իրեղենների իրանց տան,
Իւր կնոջից ծածուկ ծախում է կաթսան:

Հարուստն աղքատին երբէք չէ հետամուտ,
Չեռք չի պարզէ հանել վիճակից տղմուտ,
Եթէ այս խմիչքից լինէր մի օգուտ,
Հահրին ձահ կ'լինէր, Ղուրպանին Սուլթան:

Թարգ. Խայաթ

Վ Ա Ն Թ Ա Ռ Ս Ի Մ Ի



Երջացաւ մեր այգին, վերջ եղաւ ու վերջ,
Անտէրութեան ձեռքից աւերակ մնաց.
Երբ տունկերն սկսան մնալու ստերջ,
Միանգամայն անջուր, անվտակ մնաց:

Հինգ հարիւր տարուայ չափ չ'զալով անձրև,
Ծառերը չորացան, ծծելով արև,
Ինքը բոլորովին բնաջինջ եղև,
Միայն լոկ անունը յիշատակ մնաց:

Ջիւան, խնդրէ նա քաշէ պատուհասը,
Ով որ հասուց այս մեր այգուն վնասը,
Աստ և անդ ցրուելով ամեն մի մասը,
Մնացածն էլ այլոց ձեռի տակ մնաց:

ԹՕԹԽԱՆԵՑ-ԳԻՒՆԵՆԻ



Ո փափագով վառվում եմ. արի, սիրական, ուրտեղ ես,
Երկնային ամպերով մէջ նստող ծիածան, ուրտեղ ես.
Ճանապարհդ նայելով աչքերումս լուս չ'մնաց,
Ե՛կ երևույթ տեսանեմ, աղնիւ սիրական, ուրտեղ ես:

Ի՛նչ պատահաւ, անուշիկ, որ դու հեռացար ինձանից,
Քաղցրախօս անուշ լեզու, անուամբ գովական, ուրտեղ ես.
Քանի մէկ քանի չարաչար տանջուիմ այլոց ձեռով,
Ո՛վ վեհապանձ անուանի կեանքիս պահապան ուրտեղ ես:

Մեր սիրոյ վայելչական տեղերն ուրիշ մարդիկ առան,
Դուն արի՛ ի միասին գնանք դատարան, ուրտեղ ես,
Թող միայն ասեն Ջիւան, սիրեկանդ կուգայ,
Թող տատանիմ քո սիրով մինչև յաւիտեան, ուրտեղ ես:

Կ Ը Ղ Ձ Ո Ւ Ա Ն Ի



տարի բնական գիտութիւնիցը,
Իմ հայ պապի տուած խրատը լաւ է,
Փարիզու զարդարուած քառանկիւնիցը,
Ինձ համար Անույ մէկ պատը լաւ է:

Ուրիշ տալիք չունիմ թարց կեանքիս մահէն,
Ինձ ի՞նչ կուտան օտարը իրանց մեծ շահէն,
Ինձ համար Փարիզու վեհ կայսեր զահէն,
Աշոտի քանդուած պալատը լաւ է:

Ի՞նչ հասկանամ անհոտ բուրաստանիցը,
Ո՞վ է գոհ անաշխատ այգեպանիցը,
Անօգուտ, անողորմ, վատ իշխանիցը,
Ազգասէր, ողորմած աղքատը լաւ է:

Յ ո ը ղ ո թ ա կ

Ով որ իր ազգն ուրանայ,
Երկու աչքով կուրանայ,
Յետեւալ աղքատի նման
Դռնէ ի դուռ մուրանայ:

Կշտին դիպչի գեղարդը,
Սրտից թափի լեարդը,
Դժոխքի բռնցկելիք
Լինի ազգուրաց մարդը:

Կեղծ ու պատիր հնչողին,
Կատուի պէս մոնչողին,
Աստուած աշխարհից ջնջէ
Հայ անունը ջնջողին:

Զիւանի

Բ Ա Գ Ո Ւ Ս Ո Ւ Լ Ի



Օրը մէկ տրտմութիւն, տարին հազար ցաւ,
Քաշելով՝ ինձանում ոյժ էլ չի մնաց.
Հացըս, աղաղակըս եղան ոչ սակաւ,
Քանզի զիմանալու յոյս էլ չի մնաց:

Ստուերի պէս անցան օրերս բոլոր,
Ո՛հ, ես անմխիթար, ո՛հ, ես սգաւոր,
Ամիսը, շաբաթը, մինչ օրը մէկ նոր,
Ականջիս չի հասած զոյժ էլ չի մնաց:

Այս անբաղդութիւնը է իմ մեղացէս,
Յետ կացէք իմ ջուրէս, իմ կերած հացէս,
Մալիւս իրաւ կասեմ, բացի կենացէս
Ինձ տալու աշխարհին՝ տոյժ էլ չի մնաց:





ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Ն Ա Ռ Ն Ե Ր Գ Ե Ր

Ա Ղ Զ Կ Ա Յ Գ Լ Ո Ւ Խ Ը

ԳՈՎԵԼՈՒ ԵՐԳ



Խշի, հարսնարդ էկաւ
Վերի կալերէն,
Քեզի հինայ բերին
Թղթի ծալերէն:

Ախրէր, արի, ախրէր,
Եզները բառնանք,
Էրթանք զարիւ երկիր,
Թէզօք յետ զառնանք:

Կանչէ, կռունկ կանչէ,
Քանի գարուն է,
Հարիւրներու սիրտը
Գունդ գունդ արուն է:

Կանչէ, կռունկ, կանչէ,
Չէնդ բարակ է,
Եարիս լեզուն թաղա
Մեզրամ կարագ է:

Կռունկ, էզամ տեղը
Չայիր-չիման է,
Աշխարհը արեգակ՝
Ինձի զուման է:

ՓԵՍԵՑԻ ՀԸՆԴԵՐՉՆԵՐԸ ՀԵԳՏՆԵԼՈՒ ԳՈՎԵՍՏ

Ասենք շընհաւոր, ասենք շընհաւոր,
Մեր թագաւորի չուխէն շընհաւոր:

Հայ նազինան - նազինան,
Քեաբար բիշար քեօզինան,
Չու հարանլարն սօզինան,
Գեաթը չուխայի գէյզըրըն:

Գէյզըրըն հա, գէյզըրըն,
Բիւմազիսա՝ բիւզըրըն,
Օղլան հալալ գաղա սան,
Ղօրխուրում եալտաղա սան:

Սուրբ Կարապետի սուրբ զօրութենով —
Զօրութենով ծառս ծաղիկ է,
Ծառ ծաղկեցաւ, ծառ կայնեցաւ
Կանանչ ու կարմիր:

Մեր թագաւորն է աջ,
Աջն է խաչ ու մաչ,
Սօլերն է կարմիր,
Արեն է կանանչ:

Բայազէտցոց ըարքառով
(ընդդիմախօսութիւն)
Տղտն եւ աղջիկը.

Ախչի, քեօ անուէն ինչ ա:
— Զան տղայ, քեօ դաւին ինչ ա:
— Ախչի, արի վարդ քաղեմ:
— Գէն կորի, քեօ գլուխը թաղեմ:

— Ախչի, քե տամ վարդի ջուր:
— Կորի, սիրտդ մտնի սուր:
— Ախչի արի մէ պաչեմ:
— Կորի, ձեռներդ խաչեմ:
— Ախչի, ընձի եք կառնես:
— Էն օրը՝ որ դու մեռնես:
— Ախչի, տանեմ քեօ դաղէն:
— Աստուած քցայ քեզ պատէն:
Մ. Չիլխաչոյեան

Ս Ի Ր Ա Յ Ա Ր Ի Ե Ր Գ

Ախ, իմ սիրեկան, ինձմէ հեռացար,
Քեզ ինչ գէթ արի, որ ինձ մոռացար:
Վերջդ թէ էդ էր. էլ ուր մօտ կացար,
Քու սրտի սէրը ինձ ուր խոստացար:
Սուր էշխիդ նետը սրտիս խփեցիր,
Քո սիրոյ կրակը ջանս քցեցիր:
Սրտիս եարերին մըհլամ չը քսեցիր,
Էրուած ու խորուած, մտէդ գցեցիր:
Արի, սիրեկան, ինձ մէ ոահմ արան,
Երեսդ մի շուռ տուր, ինձ մտիկ արան:
Խղճա՛ քո զուլին, մի ականջ արան,
Քո քաղցը ձէնին ինձ արժան արան:
Գ. Սունդուկեան

Ս Ի Ր Ա Յ Ա Ր ՄԱՐԶԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Աբարան զնացող եղբայր,
Սիրականիս բարե արան,
Սիրտս այլովում է չարաչար,
Սիրականիս բարե արան:

Երինք մէջերս անսուտ երդում,
Ուրախ անցնել օրերս տրտում.
Նա ծնունդ է Մելիք-քեանդում,
Սիրականիս բարե արն:

Ի՞նչ եմ անում զանձն աշխարհի,
Երբ չեմ բռնում ձեռքն իմ եարի,
Մելքոն քեօխովի հարսին բարի,
Սիրականիս բարե արն:

Սիրելիս հագին ալ ունի,
Ուսին թանկագին շալ ունի,
Սալուին սիրուն ման զալ ունի,
Սիրականիս բարե արն:

Ես էլումեմ սիրականից,
Չկայ մէկը ինձ կարեկից,
Չիրակեցի Մարջանեանից
Սիրականիս բարե արն:

«ԱՅ ԻՄ ԱՐԱՋ»

Սրտդն էկաւ լափին տալով,
Ժեռ քարերին ափին տալով,
Ո՛րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Չոր զլուխըս տափին տալով:

Ա՛յ իմ Արագ, ջուրըդ վարար,
Սիրուն եարիս եարար տեսար,
Ես չը հասայ իմ մուրազին,
Արագ, եարար կաբօտս առար:

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին,

Աստօծ սիրես, էրուած սրտիս,
Ջուղար բերես էկող տարին:

Քշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասունքս գետ կը շինեմ,
Արագ, ծէգը ջրիդ չառած,
Իմ սև դարտը քեզ կը բերեմ:

Կասես՝ շողքը քարին ընկաւ,
Կրակն իմ սրտի մէջ ընկաւ,
Կամար ունքից, թուխ աչքիցը,
Յաւն իմ ջիւան ջանին ընկաւ:
Յ. Յովնաննիսեան

ԿԱՔԵՐԻ ԵՐԳ ՎԵՆԵՑՈՅ

Ա՛յ խօրօտիկ խօրօտիկ
Ա՛յ սիրունիկ կեաքեաւիկ,

Արե տէպաւ սարին վերէն,
Կեաքեաւն էլաւ իր բեռնէն,
Բարե արեց ծաղկըններէն,
Թռաւ, էկաւ սարին վերէն:

Երբ կեաքէւուն ձայն կը լսեմ,
Երդիսն ի վեր տիւս կ'երիշկեմ,
Կեաքեաւ կիւկեայ կրկըրալով,
Քեարին վերէն շորորալով,
Ա՛յ խօրօտիկ եւ այլն:

Քեռ բեռն հինած ծաղկըներով,
Ռըհան նարկիկ նունուֆարով,
Քեռ տեղ լցուած է շաղերով,
Դիւ կը մայլիս անմահ հոտով:
Ա՛յ խօրօտիկ

Դ Ա Ր Ք Է Դ Ա Ր

Աւարմ միր վախճաբ, գիտիս ինչ կենէինք կը,
 Ինչ քէֆիր, ինչ գաւղ ու սաֆէք քշէինք կը,
 Միր տունը, ձիր տունը վիվ էր ջոկջոկողը,
 Վէրտիդ էղնիր, մինք քէֆիրս կենէինք կը:

Խաչը վկայ, էնդից յետիվ, գիւլուգ իմ մեռիր,
 Աչաբ միր ահապով ինչին ինք էրիր,
 Միանձուկը միր ձեռքէն ինչին է քաշիր,
 Լեզու յէլիր խօսիր՝ գիւլուն ինչին կենէինք կը:

Սալըղով ըսիմ, օր հասկընաք, Պլստան քարը,
 Զորս բուլուրը բռնէինք կը միր Ղարսայ պարը,
 Զիր դատէն տանիր Զուֆլակ Ափարը,
 Ղումղումէն հետնիրս՝ ման կուգայինք կը:

ՎԱՆԵՅՈՅ ԵՐԿ.

Արեն առեր մըջ բաղանին,
 Մէրիկ մէռնէր ուր Վարդանին:

Արեն առեր մըջ խաչերաց,
 Մէրիկ մէռնէր թռչա աչերաց:

Դօնեա—գեալին թափիր բամբակ,
 Խալլըթ կտրեց չորս հատ ջանդակ:

Վարազայ սար բացուեր կակաչ,
 Խալլըթ կտրեց ութ հատ անկաջ:

Վարազայ սար բացուեր սուսուն,
 Խալլըթ կտրեց չորս հատ թօսուն:

Սէլեր էկան ճրճըռալէն,
 Մէրեր էկան մըռմըռալէն:

Ամման, ամման, Խալլըթ աղա,
 Օրօրոցին խաթը արա:

ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐՆԵՐ

(Դարալագեազի բարբառով)

Տղան եւ աղջիկը

—Ասիմ, գեօղալ, շէօղ էրէսդ քրտնիր ի.
 —Ասաց, տօ լաճ, մէ առատուան շաղ եմ ես:

—Ասիմ, գեօղալ, զլֆերդ ապրշում ի.
 —Ասաց, տօ լաճ, բազի բաղի բանդ եմ ես:

—Ասիմ, գեօղալ, ինչ ես կայնել ես մէջ պագին.
 —Ասաց, տօ լաճ, էրվամ գէմը արգէկին:

—Ասիմ, գեօղալ, զըյմաթ ունես, չկայ գին,
 —Ասաց, տօ լաճ, դիւռ ջաւահիր լալ եմ ես:

—Ասիմ, գեօղալ, շատ հարիֆ ես, ֆեանդ կանես.
 —Ասաց, տօ լաճ, դու իմ զարդին ման կեանես:

—Ասիմ, գեօղալ, շատ բազրգեան բանդ կեանես.
 —Ասաց, տօ լաճ, շատ մայաներ թաղեմ ես:

—Ասիմ, գեօղալ, եարոջ խնձոր թալեցիր.
 —Ասաց, տօ լաճ, դեօր թամանդայ արեցիր:

—Ասիմ, գեօղալ, էշխէդ ինձ էլ հալեցիր,
 —Ասաց, տօ լաճ, սըտիդ մէջը պաղեմ ես:

—Ասիմ, գեօղալ, ինչ նման է քո մարդ ա,
 —Ասաց, տօ լաճ, քեանց բլբլիլի կը կեարդայ:

—Սըհակ—Օղլին ասաց, բացուիր ի վարդը,
 —Գեօղալն ասաց-նասիր ըլի քաղեմ ես:

ՂԱՐՍԵՑՈՅ ԶԱՐՍԱՆԵԱՅ ԵՐԳ



աղնեց ճամբէն չալին սազըդ,
 Նիս օր մտնիս կուգայ հազըդ,
 Զխտակ նաթըր հիւսին մազըդ,
 Ախշի, մի լար, մի հեկեկար:

Էս հինէն էնպէս հինայ չէ,
 Էսուր զըկողն ինչդ մանչ է,
 Եփօր տեսնիս՝ հապա ճանչէ,
 Մի կայնիւր ինատիդ, ախշիկ:

ՍՕՍ ԵՒ ԳԱՐԵԳՐԻՆ

(Վարդիթերի տեղը)

Ս օ ս .

Բան եմ ասում ականջ դիր, ականջիդ մատաղ Վարդիթեր,
 Ինձ մի քցիր չօլերը, կրակիլ սաղ-սաղ, Վարդիթեր,
 Հանգիստ ու դադար չունիմ, դառել եմսարսաղ, Վարդիթեր,
 Աստուած սիրես խնայի, թո՛ղ մնամ խաղաղ, Վարդիթեր:

Գ ա ը ե գ ի ն .

Հրամայիր որ լսեմ, դու ինձ համար վարդ, Սօսի ջան,
 Պատրաստ եմ ես կատարել ամեն հրամանդ, Սօսի, ջան,
 Թէկուզ սաղ աշխարհքն ինձ ասի վատաբաղդ, Սօսի ջան,
 Չեմ թողալ քու սրգումդ մի կորկի չափ դաղ, Սօսի ջան:

Ս օ ս ը

Աղջի, երբ որ քեզ տեսայ, թռաւ երեսիս գոյնը,
 Թէ արեգ կ'սիրես, մի կտրել իմ անուշ քունը,
 Տուած խօսքդ պինդ պահիր, որ հաստատուի սրտիս սիւնը,
 Սէրիդ կապը նորոգի, իմ ոսկի վարաղ Վարդիթեր:

Գ ա ը ե գ ի ն ը .

Ինձ պէս հասարակ աղջիկը, որ հող եմ քու ոտի տակին,
 Ինչպէս կարամ քունդ կտրել, որ գերի եմ քու պատկերքին
 Իր խօսքըցը չեմ դառնօղն արժանի ա թէ՛ծ կրակին,
 Սէրիդ կրակը նոր ա նոր, էրուած սրտիս շաղ Սօսի ջան:

Ս օ ս ը .

Ուղում եմ քեզ մէկ գովիլ, վախում եմ էդ իմ բանը չի,
 Թէ արեգակ կասեմ կասեն, նրա նմանը չի,
 Արեգակը աչք ծակող է, էդ սրա նշանը չի,
 Բաս լուսնեակ ես կէս ամսուան իմ լիս ուշաւաղ Վարդիթեր,

Գ ա ը ե գ ի ն ը .

Գովասանքը դարդակ բան է, սէրն ամենից է գովելի,
 Արեգակ, լուսնեակ ասելով՝ ոչինչ չէ դուս գալի,
 Թէ գովելու ջանն ես ուկում, քեզ պէս էլ ո՞ր մինը կըլի,
 Համ քաղցրածայն համ պարզաւիրտ, համ կտրիճ դօշախ
 Սօսի ջան:

«Սօս եւ Վարդ»

ԽԱՆՈՒՄ ԷՎԱ ԶԱՆ

Բերդիցը դուրս ելայ Ալագիադ տեսայ,
 Խանում էւայ ջան,
 Արարան աչքերիս դուման ա դառել.
 Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,¹⁾
 Հալով ողբալով, քեօչ ու բարխանով,²⁾
 Խանում էւայ ջան³⁾:

Ոչխարն էտին կարծայ, Լնդին դառները,
 Վանչցեր ա ծաղիկները ծառները:

1) 2) 3) Ամեն երկու տողից յետոյ կրկնել այս տողերը

Արի էրթանք քու ման գալած արտերը,
Քեզի տեսայ թաժացաւ իմ դարդերը:

Ձեռ ու ոտս կապին՝ բերդը գրեցին,
Չուխայ, շալվար լալով տունը բերեցին:

Ես Աղէկն եմ-Չամուլեցի մէկ ջիւան,
Տուլթսազ էգայ ըստուց չուրի էրեան:

Ս Ի Ր Ա Հ Ա Ր Կ Ի Կ Օ Ն

Բլբուլ թռաւ բարձր քեարին,
Կիւլայ դարտեր իւր ջիկերին.
Ես լէ դուրբան կեղնիմ եարին,
Ծիկ մօտ տարէք Սիփնա սարին:

Սիփնա սարեր դուման մըժ է,
Ես ան կենիմ, էն լէ փօշ է,
Կասեն արախ դարդին խօշ է,
Էլպէթ Կիկօն ճիպ սէրխօշ է:

Ես սէրխօշ եմ սիրով էնջախ,
Քօռ ու ջահնամ էղնի արախ,
Եար դու մարես իմ տան օջախ,
Քեզնից մահրում կէնիմ ան, վան:

Եարս որ կենէր կիջնէր պախչան,
Կու սառսուար ճայտին մախճան,
Աչից շողքէն խովցաւ իմ ջան,
Իմ հեշտ կեանքի տուեց վախճան:

Կիզեամ, եար նստեր վըր խոտին,
Չուշան ցանեմ ես քեօ ոտին,
Թեւքս կեղնին մէջիցդ դոտին,
Տէրտէ կօխնա մեր ներօտին:

ՂԱՐՍԵՅՈՅ ԲԱՐԲԱՌՈՎ

Ը ն չ է ն է

Բիւրիւլ իս, բերնիդ էլ՝ լիզուիդ էլ մէնիմ,
Բագի բիր միր տունը չիս գար, ընչէն է.
Գիտիս օր կարօտովդ սավղովդ կէրվիմ,
Աղէրսանքս մէկ չիս լսիր, ընչէն է:

Յէրէկ կերթայիր կը էհրամ գործ տալու,
Ես էլ յաշկերտներուս տարայ ման գալու,
Եփ տեսայ էրիսդ վառ վառ ու խալու,
Քիչ մնաց օր խիւքս էրթար, ընչէն է:

Էրնէկ թէ սավղէն Ասված չըստեղծէր,
Օր ընձի քու սավղիդ գիրիֆտար չէնէր,
Դուշմանս էղաւ սապապ՝ թէ Ասվըժմէն էր,
Վարոսիս եարալի թողին, ընչէն է:

յ ո ը ո ը ա կ

Ես բիւրիւլ իմ, վարդս ուր է.
Արի, Գիւլգեազ ջան, արի,
Սէրդ սրտիս մէջը սուր է,
Արի, Գիւլգեազ ջան, արի:

Պառկիր իս անուշ բնիր իս,
Պտուղ պտուղ քրտնիր իս,
Թէ որ Ասվածդ կը սիրիս,
Արի, Գիւլգեազ ջան, տուն արի:

Ո՛րտեղ է ձիր հաւի թառը,
Լսէ Թաղոսիս բարբառը,
Քու օղուրիդ մօրթիմ գառը,
Թող էղնի մատաղ, տուն արի:



Նաց աշուն՝ էկաւ գեարուն,
Աղբրանց-արուն մըջ քեարերուն,
Դեղին-սուտան վըր սարերուն,
2է-կեօ էկաւ բարի գեարուն,
Քե կառնեմ վըր իմ թեքերուն,
Թռում վըր բանձրիկ ծառերուն,
Բուն կըղնեմ մըջ ճիւղերուն,
Յերդիս բանամ դէմ խով քեամուն:

Վայ լէ՛ լէ՛ լէ՛ հայ լէ՛ լէ՛ լէ՛
Վայ լճ՝ լճ՝ լճ՝ չան լճ՝ լճ՝ լճ՝:

Ընչի կ'թափես կիւց կիւց արուն,
Կեհա լցուի բարակ առուն,
2է-կեօ էկաւ բարի գեարուն,
Քե կառնեմ վըր իմ թեքերուն,
Տանեմ խանեմ վըր սարերուն,
Բուն կը շինեմ մըջ քարերուն,
Թոնիր թաղեմ մըջ այրերուն,
Ծուխ կը խանեմ խըտ ամպերուն Վայ լէ՛ եւն:

Քեա սե-սեաւոր աղջիկ, ⁽²⁾
Քեզի կիտամ Վանայ խոջին,
Կեարմիր ֆէսին,
Նախշուն յօղին վըւյ:

Քեա, սե-սեաւոր մարէ, ⁽²⁾
Ես ինչ կեանեմ Վանայ խոջին
Կեարմիր ֆէսին նախշուն յօղին,
Ղուրբան կեանեմ գիւմ Սախօին վըւյ
չուլ քեազախուն
ծակ քեօլօղին,
չարխի թէլին.
ձեռի փէտին: վըւյ

Հով, հով, հով էղնի,
Եարս քեամարով էղնի,
Հով, հով, հով էղնի,
Եարիս տունը ծով էղնի,
Դէ թռէք, թռէք, թողը հանէք,
Մեր զուշմանի գեօղը հանէք,
Դէ զանէք զանէք, թողը հանէք,
Մեր զուշմանի գեօղը հանէք:

Գնաց գեարուն՝ էկաւ աշուն,
Կտրաւ ձէնիկ բիւրիւններուն,
Կտրաւ խօտիկ ծաղկներուն,
Կտրաւ ձենիկ կեարվըներուն, Քե կառնեմ եւն.
Կտրաւ ջրի բարակ առուն:

Զ է Ծ

Գացէք, տեսէք ո՞րն ա կերել զէծ,
Գացին տեսան զէլն ա կերել զէծ,
Գէլն ըզիծուն, էծն ըզտկուն, տիկ զարևուն,
Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ, հալալ է,
Էս ինչ քեաֆուր դարու հասանք, հալալ է,
Էս ինչ խըտար կրմօ ստացանք հալալ է,
Դէ զնա կիզամ, դէ զնա կիզամ, շուտ կիզամ,
Կարմիր սօլերս հազնիւմ իզամ, շուտ կիզամ:

Գացէք տեսէք ո՞րն ա կերել զգէլ.
Գացին տեսան արջն ա կերել զգէլ.
Արջն զգիլուն, գէլն ըզիծուն, էծն զտկուն, տիկ զարևուն
Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ, հալալ է,
Էս ինչ քեաֆուր դարու հասանք հալալ է,
Էս ինչ խըտար կրմօ ստացանք հալալ է:
Նազ մի աներ, նազ մի աներ, նազ աղջիկ,
Մինթանովդ թող մի հաներ, շան աղջիկ:

Նազ կու էնեմ կու, Նազ կու էնեմ կու,
Նազ կու էնեմ, Նազ կու էնեմ, Նազ տղայ,
Մինթանովս թող կու էնեմ, շան տղայ,
Խօրօտիկ, խօրօտիկ, խօրօտիկ — մօրօտիկ իմ հարն է:

Գացէք, տեսէք, ո՞րն ա կերել զարջ,
Գացին տեսան առիւծն ա կերել զարջ.
Առիւծ զարջուն, արջն զգիլուն, գէլն ըզիծուն,
էծն գտկուն, տիկ զարեուն,
Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ. հալալ է,
էս ինչ քեաֆուր դարու հասանք, հալալ է,
էս ինչ խըտար կրմօ ստացանք, հալալ է:
Ծառը ես եմ, բարը դու ես, Աննա ջան.
Սրտով սիրած հարս դու ես, Աննա ջան:
Ծառը դու չես, դու, ծառը դու չես, դու,
Ծառը դու չես, ծառը դու չես, չար տղայ,
Սրտով սիրած հարս դու չես, շան տղայ:
Խօրօտիկ, խօրօտիկ, խօրօտիկ — մօրօտիկ իմ հարն է.
Գրիգորն եմ, Գրիգորն եմ, ձեր մայլեցի Գրիգորն եմ:

Բ Ա Ր Ե Կ Ե Ն Գ Ա Ն Ի Ե Ր Գ

Գնացէք տեսէք ո՞վ ա կերել այգին.
Գնացին տեսան այծն ա կերել այգին,
այծն ու այգին, ձեզ բարեկենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք տեսէք ո՞վ ա կերել այծը,
Գնացին տեսան գայլն ա կերել այծը,
գայլն ու այծը, այծն ու այգին, ձեզ բարեկենդան,
մեզ բարի գատիկ:

Գնացէք տեսէք ո՞վ ա կերել գայլը.
Գնացին տեսան սուրն ա կերել գայլը. *

սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին,
ձեզ բարեկենդան մեզ բարի գատիկ: *

ՔԵՑ ԵՆՐՆ ԵՄ ԵՍ



Իւ արի ես, դիւ արի ես,
Խիւանդ եմ ես, խիւանդ եմ ես,
Առ խնձոր արի ձի տես,
Քեօ եարն եմ ես, քեօ ջանն եմ ես:
Եարն ի դադրեր կարմնջին,
Ոսկի օղեր ակնջին,
Փաթուլթիլի ուր եափնջին,
Քեօ կրակով զիս երեցիմ.
Խիւանդ եմ ես, խիւանդ եմ ես,
Առ խնձոր արի ձի տես,
Քեօ եարն եմ ես, քեօ ջանն եմ ես:
Գիշեր հաղեամ գիւս էլամ,
Մօրմօրիկ ձիւն մ'էլ եկաւ.
Մէ բորիկ խետ մ'էլ գնաց,
Ընկամ խաթան, խետ էն խեթին գնացիմ,
Գնացիմ խասամ եարոջ դիւ,
Դիւս բացիմ երիշկացիմ,
Եար տուն չէր նստամ լացիւ.
Խիւանդ եմ ես, խիւանդ եմ ես,
Առ խնձոր արի, ձի տես,
Քեօ եարն եմ ես, քեօ ջանն եմ ես:

Այս երեք աների նման շարունակել հետեւեալները
ժանկն, իւղը, մուկը, կատուն (ով ա տարիչ):
հարսին, փեսին. Աստուած:

Ք Ա Ի Է Ք Ի Բ Ա Ր Է

Պէ չանէ, բէա բէա քարեր,
Դեռ չէ լուսցեր, արևն առեր,
Էրկու խօրօտ եար եմ ճարեր,
Փալաք զարկեր մէկն ա տարեր:
Քաւէ քիբարէ դալիշ դզանէ նզանէ:

Մեր տան առաջ մանտը ուռ էր,
Չեր տան առաջ մանտը ուռ էր,
Քանի քաղենք կասեն ժուռ էր,
Փալաք զարկեր մէկն ա տարեր,
Քաւէ քիբարէ. . .

Մեր տան ետե կալ-կալ բոքի,
Չեր տան ետե կալ-կալ բոքի,
Աստուած առնի սարբի հոգին,
Դորմ չթողեց զլոխ դնի,
Թէլի ճամամի չոքին:
Քաւէ քիբարէ. . .

ՂԱՐՍԵՑՈՅ ԵՐԳ



արս միտս ընկաւ յէլայ գնացի,
Ինձի հետ խօսած չունէր մէկ խօսեցուցի,
Թիւռլի խօսքերուն էլ դուռը բացի,
Մէկ պաքըմ ուզեցի հերսոտաւ՝ ընչի . . .

Քեամիլը պըծիր է գուգայ օխախէն,
Պաքէի յէրիսը յետիւ բոխախէն,
Ճաքրի պէս պոնկիս համ տուեց՝ ընչի . . .

Դուն մէկ գիտուն մարդ իս, խօսք կ'հասկնաս,
Թիւռլի խօսքերուն էլ դուռը կ'բանաս,
Մէկ պաքըմ յուզեցի հերսոտաւ՝ ընչի . . .

ՂԱՐՍԵՑՈՅ ԵՐԳ

Եար, քու սէրդ ընձի էփիր—վառիր է,
Էդ քու սիւ աչքիդ խիլքս տարիր է,
Էսօր չիմ տեսիր՝ դամըդ ընձի առիր է,
Չիս օր էրեվար՝ չէղնի ֆէլըտ դառիր է:

Անմարելի կրակ սիրտս քցեցիր,
Հափըսխանէն էրիր՝ դուռը գոցեցիր,
Անդանակ, անդամա ընձի խոցեցիր,
Ընչի էդպէս սիրտըդ ընձէն սառիր է:

Էդքան մի զըմըշիր, հըլա ջահիլ իմ,
Կլոր սուրալ՝ թաւադ բօյիդ մայիլ իմ,
Ընձի հիտդ դժուխք տանիս՝ գայիլ իմ,
Թաք թող ըսին-յէզսանը Մ'կօյին առիր է:

ՊԱՆԴՈՒԽՏ ՄՇԵՑՈՒ ԵՐԴ

Եօթ, օր, եօթ գիշեր
Ճախկամնի գօտիս թոռմշեր,
Եար մգիկ զըռնէն դուս չիլնայ
Փշուրմի սիրտ մըզիկ խովնայ—
Վայլէ, վայլէ, վայլէ, վայլէ . . .

Էրթամ Ստանբօլ,
Դատիմ փարա բօլ,
Իմ եարի խամար
Առնիմ ջուխտ մի սօլ,
Արի, եար, արի,
Խոռօ մի կենայ,
Աստուորիս բան՝
Եար, մգիկ չի մնայ:

Առնիմ գտանքուրէն
Յէլնամ քու մամու յէրթիս,
Ձիմ կաքվու անուշ ձէննի լսիս,
Եւր, անուշ քնէդի զարթիս,
Վայլէ, վայլէ, վայլէ, վայլէ....

Կայներ ես յիգին
Խաղող կու քաղես,
Համամ ծծերով՝
Հաքար կու մաղես.
Ալմաստ բիշաղով՝
Ձիմ սիրտ կու դաղես.
Արի, եար արի....

Վայ, սանխէր Կիվկիվ,
Դու գացիր ի Մուշ բարով,
Էլ չըս յիգայ հազար տարով,
Խարս պարկե տղայ բերէ,
Առջընեկ լէ գութան կու վարէ—
Վայլէ, վայլէ, վայլէ, վայլէ.

Քամբախ Բուլանըխ
Ինչ անուշ գեղ է,
Էրկուսս մէ շապիկ՝
Փողպատնի նեղ է,
Եարիս մէ պագնի
Սրտիս ի գեղ է,
Արի, եար արի,...

Մկլօրսի քամբախ էրկըն
Խարրիկ մէ էկեր—
Թ՝ Տաճիկ լցուեր գեղ,
Ջրմէն թալներ ու տարեր,
Վայլէ, վայլէ, վայլէ, վայլէ,

Խայեր, վախ, Խայեր,
Հիւար էք մացեր,
Չիմնաք մըր էրկըրի
Լացերն ու թացեր:
Արի, եար արի....

ՍԱԼԱԹ ՄԵՅՐՈՒ ՏՂԻ ԵՐԳԸ

(«Գրող տանի» երգի նղանակով)

Ես ձեզ մեռնիմ, Սասնայ ծուեր,
Էն հրն ա կիգայ մըր լուներ,
Քսան քրդի գըլնին թեռներ,
Դրած զար-զաւաթով կիգայ:

Դէն իրիշկէք, ձըր Ասու սիրուն,
Իմալ արուն գեօլեր թրուն,
Թըռպէ անխիղճ քրտերուն,
Վարագի ճանկ թաթով կիգայ:

Ձըր Ասու սիրուն, դէն իրիշկէք,
Առէք գէնքեր, գրահ հագէք,
Թոթվէք ձեռքըն, սիրտն պագէք,
Տեսէք ինչ խվաթով կիգայ:

Սպաներ է ֆաթ—Ջանգին,
Գլօխ զարկեր է թվանքին,
Մեռնեմ էն պուտ պուկին,
Իմալ սանթանաթով կիգայ:

Արնով է սորվի լողը,
Բարութով է կտրի դողը,
Քրտի դասապ՝ թուրքի գողը,
Խօրտ զար-գիննաթով կիգայ:

Ախլախնձոր տեփուր յերես,
 Չատ դուշմանի կեանք թորկել կէս,
 Նարինջ ձին տակ, ասլանի պէս,
 Իմն շաշխաթով կիգայ:

Սառնայ վիշապ ազնաուր բէտ,
 Չար աչք, քօւցի, մի իշէ խէթ.
 Արիգրնացի Լևոն հեւ,
 Արծուի ղօլ խանադով կիգայ:

Մէկ խարցուցէք-գալող զնն է,
 Քաջ Արարօ բաղդաւորն է,
 Կարմիր իրիցանց գինւորն է,
 Առաքելսի զարդով կիգայ:

Արարօյիս բաժնն բօղուն,
 Բարութ գիւլէն ուր բնադուն,
 Կը թափէ ձրը վախկոտ արուն,
 Հայ անարատ կաթով կիգայ:

Ոտքի կայնի, կտրիճ խէրան,
 Զօրքով դնա առաջ ուրան,
 Սալաթ-Մէյրին բաժին դուրպան,
 Արարօս ղօլվաթով կիգայ:

Փահրանտ

ՂԱՐՍԵՑՈՑ ԵՐԳ

Ես վերէն կուգայի՝ դուն դուռը բացիր,
 Ձեռքդ ծոցդ տարար՝ ախ էրիր լացիր,
 Ես էլ քեզի չառայ՝ տունը մնացիր,
 Գընը՝ դապլի խային, եար չեղար ընծի:

Ես սարէն կուգայի, շալակս բուրդ էր,
 Լեզուդ ընծի համար վառած քուքուրթ էր,
 Բօյդ դարդու դամիշ, յէրիսդ թուխթ էր,
 Գընը՝ դապլի խային, եար չեղար ընծի:

Երկինքը ամպիր էր, ինչ անուշ թոն էր,
 Էկայ դռնէն անցայ, ջանանս հոն էր.
 Էրեցայ-վառեցայ, էս ինչդ տուն էր: Գընը . .

Էսօր շաբաթ էղնիր, էգուց կիրակի,
 Եարըս դռնէն անցնիր էրթար կրակի,
 Լիզուն բանլիք էղնիր, ծուցը ֆռանկի: Գընը .

Լիզուովդ աշնայ իս՝ մտօքդ խային.
 Գլօխս առնիմ էրթամ վըր յէլման չային,
 Մատնթ, հասէք Անդրէասի հաւարին,
 Եար, մարամդ էն է օր՝ սըպանիս ընծի:

ՍԱՍՈՒՆՅՈՑ ԲՈՂՈՒՔԸ



, աղբրտանք, վոլա թուլմուլ էք, վըղըծար,
 Մըք կտրեցինք ու կըտըրուեցանք,
 Դըք էք կանաք ու շուարեցաք,
 Կինաք շուրվա ապուր է կը գըղթար:
 Մըք աղբըրներ ու տիրացուներ,
 Վրժապետներ ու վրժաճետներ,
 Ըգատ երկիրներ գինի կըխըմէք,
 Մըկ երկիր կը սուքէք, մէկ լէ կաւրէք,
 Կը ծընծակ ու խնտակ՝ արծիւ էք,
 Թա վըր կռիւ տեսնէք՝ անծեղ էք,
 Մընակ մըթլով Սասուն կաղըտիք,
 Ըգորտ աւրուաւ մըք էրկիր ու սարեր,
 Կտրեցին մըք քուլֆաթն ու ճըժեր,

Տարան զհարսներ ու ջրհել աղջիկներ,
 Ամա էմէ մըք կանք ու կը կենանք,
 Էմէ կապրինք ու կը մեռնինք,
 Լը դուք վը՛ր օրուայ էք, աղբըրտանք,
 Մըք վըէն էկան քսան աշիրաթ,
 Տասը հազար լը ասքեար ու գապութ,
 Մըք բերդն էր Անդոր ու Կէփին,
 Փըռփըռ—Քար ու ջուխտակ ծեր Մարաթին,
 Դուշմնի ձեռք կըր այնալի սև կոթ,
 Լը մըք ձեռք չախմախլի գըռկոթ:
 Մըք չունինք հըց. կերանք ալնի խոտ,
 Ու ըպայ էս հալով ու խուզըրաթով
 Չուզինք թուրքին հալել ու մաշել
 Ու հետըրթեն ամեն օր քաշել,
 Մըք մեռաք առօք ու փառօք,
 Լը դուք մամոնի ձեռօք:

ՎԱՆԵՑՈՑ ԳՈՒԹԱՆԻ ԶՕՐՈՎԷԼ

Երիէլ, էրիէլ, մուսլի գէօմէշ.
 Չեռս եմ թալեր Աստըծու փէշ.
 Զիս իմ կռուան պակաս չանես:
 Աղուր ի, այ կռուան, աղուր ի,
 Կլորուի ակներ քոյ իտե,
 Կլորուի, խանի դար ի վեր:
 Բարէօվ առեց, հա բարէօվ առեց,
 Յառէվէլ ասա, վոժաուն վար, յառէվէլ,
 Առաւօտման խօվ, խօվ դան անուշ,
 Ես քե մեռնիմ մուսլի գէօմէշ.
 Արեն առեց վէր չիմընին,
 Կռուան մեռնեմ թուխ բըռչըմին:
 Յառէվէլ գեռոժ պիւլու ի, չար մուրըրի:
 Ակնախան ի, հա, ակնախան ի,

Չարկմի խոգին կը խանի:
 Չարի որ շարական.
 Չուռ տու դիմաց արեգական,
 Արեգակ դատրի քե օգնական:
 Առվոտ ի, ծէր կապոտ ի,
 Կուրնու քթին անուշ խոտ ի,
 Կէս-օր ի, դանի կեախ ի,
 Չատ կապըններ քչէցեր ի,
 Կուրնի աչքեր թուխ ի,
 Սիրտն ուրախ ի:

ԽՂՃՈՒՎԻ ՉԷՆ



նցաւ տարին Հայոցս էլ փառք ընցաւ հետ,
 Դրախտի սարէն գարունն յետին բարե ետ,
 Կտրիճք առան զէնքերն իջան տակ հողին,
 Վախ մըք գլխուն, սև մուր էկաւ էն օրին:
 Հայու աչքեր, թող մեզ լան,
 Ախ մեզ լան, վախ մեզ լան:

Հայեր, գերի եղանք բաղդին անողոր,
 Աստուած, հրեշտակ, մարդ չ'լսեց մըք բողոր,
 Մըք լալերու ձէն ծածկուաւ ճարնոյ տակ,
 Մշու դաշտեր պահեն սրտից հառաչանք:
 Հայու աշուղք թող մեզ լան,
 Ախ մեզ լան, վախ մեզ լան:

Մըք աշխարհի քակվուկ շէնքերու ներքե,
 Նստուկ մամ, պապ՝ ճըժեր մացին անարե,
 Նօթի՝ տկուղ, ախ, չկայ տէր տիրական,
 Անգութ քրտու գըլմին էղած ենք խուրպան:
 Խարիպ աղբերք թող մեզ լան,
 Ախ մեզ լան, վախ մեզ լան:

Մատղաշ աղջիկն ու հարս հալաւ մի չունի,
Որ իր մարմինն անօրէնին դէմ ծածկի.
Էնպէս զրաժ ձեռքերն աչից ամշըկոտ,
Գութի, սիրոյ, ողորմութեան է կարօտ:
Հայ աղջկներ թող մեզ լան,
Հայու հարսներ թող մեզ լան:

Կեցէք, Մշու դաշտի քամիք, քիչմ կեցէք,
Մըր ողբաձէն բարեն էլ ձըր հետ տարէք,
Ու եր ընցնիք սուրբ օրէնքի կամարից,
Հոնկուց ըսէք խարիպ մըր հայ աղբերից:
Էլ ինչ պէտքէ որ մեզ լան,
Ա՛խ մեզ լան, վա՛խ մեզ լան:

Մացէք բարով, իմ հէր ու մէր, քուր, աղբէր,
Մացէք բարով ծանօթ սարեր ու դաշտեր,
Դուցէ մեռնիմ, էլ չը տեսնիմ այսուհետ,
Դարտ մի էնէք, դուշման տարեր եմ իմ հետ:

ՂԱՐՍԵՑՈՑ ԵՐԳ

Ընձի կըսին—եարըդ տեսար.—
Վէ՛վ է տեսիր, վէ՛վ է խօսիր:
Կըսին—էնոնց յերթիկն էիր.—
Վէ՛վ է յերթի, վէ՛վ է քերթի:
Կըսին—քէնիդ լօխմա տւեց.—
Վէ՛վ է առիր, վէ՛վ է կերիր:
Կըսին—եարիդ ծոցնիս մտիր.—
Վէ՛վ է հանուիր, վէ՛վ է քընիր:
Կըսին—յերսըններնիս պաքիր.—
Վէ՛վ է պըռունկ յերկընցուցիր:
Էսքան բանը դօմսիր էին՝
Էլի տարայ, էլի տարայ:
Էնքան տարայ՝ խեղճ Վարդուխ
Ջիզըրին բուսաւ անսաղ հարա:

ԹԻՓԼԻՋԻ ՔԷՓ



է սիրումիս թամաշա՝
Պըտիս տեհնի քաղքումը
Ինչ ին անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը:

Ծալապատիկ ծառի տակ
Միը լօթիքն ին նըստոտել,
Տկճուրներն ու խելադէք,
Իրանց բոլոր մօտ արել:

Մին մինի կենաց ին խմում—
Մեռելոց ու կենդանեաց,
Մին մինի բողազն ին խըում
Չամփուրներով խորոված:

Հաղար-փէշէն լի զինով,
Կըկըլացնում, խմում ին,
Տիկը բռնած պինդ ձեռնով,
Իսկի, ասիս, թողնում ին:

Քաշալ գլուխ գունդաչին
Հառալօ է որ փշում,
Տիմպլիպիտօն լըսողին
Ղուզն ու ախանջն է տանում:

Միը պատուելի քաղքցուն
Աչքը ճակտին է թըռել,
Դամաղին կպել լիզուն—
Է՛լ չի ուզում նա լըռել:

Քաղքցու գօղալ քալին
Մարդիցը յետ չի մընում,

Ձեռին առած մինձ կօվղին,
 Ձօռ է տալի կախէթուն:

Դրբմփացնում է դահիրան
 Իրա փափուկ մատներով,
 Պար է գալի լեզգիական
 Աղունակի փուտներով:

Էստի՛ Կիկօն «Ձուլօին»
 Քնաթաթախ զըռում է,
 Էնտի՛ Վանօն Ձալօին
 «Էրթի քալին» մըռում է:

Էս ին անում համաշա
 Մարդիկ իրանց բաղչումը,
 Թէ սիրում իս թամաշա,
 Պըտիս իլի քաղքումը:

Գ-Ք.

ԽՂՃՈՒԿԻ ԼԱՅԸ



մալ պըտի էնինք, ես լէ չըմ գինայ,
 Որ չը թորկինք քոչինք մըր տուն ու վաթան,
 Չունինք խաց ու խալաւ, խեղճ ինք չուր մըկայ,
 Հիմկուց յետև տըսնանք, փոխինք, զմեր բան:

Իդա խարիպուլթեն աւիրեց զմըր տուն,
 Կը թորկինք հեռենանք ճըթերսի սիրուն,
 Լալով մընք հաց կուտինք չուրի յիրիկուն,
 Էլ եր միտք կու բերինք մըր խեղճ խայաստան:

Սէֆիլցեր՝ կը գողանք քրտերու առաջ,
 Տաճկին գանգատ կէնինք, չի էնէ աւանջ,
 Ծանորացուցեր է մըր վըէն խարճ-խարաջ,
 Խեղդերին պարտքնտէր, քեաֆիր խարկախան:

Թորկած խօրօտ հանդերս, թորկած սիրելիս,
 Թորկած Ջաւաշ եզս, թորկած Մարաշիս,
 Էա ստամբօլ կերթանք, եա թէ չէ Թիֆլիս,
 Էնտեխ աչքերս առած ինք սև գերեզման:
 Գ. Տալեան

ՊԵՆԴՈՒԽՏ ՎԵՆԷՏՈՒ ՎԵՌ ԻՂՁԵՐԸ

Ենկեայ թաղէ թաղ աղչեմ ճարեցի,
 Տըվի թապաղեմ թըղթիկ առիցի,
 Աչքիս արտասունք թանաք արիցի,
 Ճողշողուն մատկերս՝ կալամ արիցի,
 Ստամբօլ քաղաք էօրէօխկեցի:
 Կարիպնի նստեր վէր օտար փուղին,
 Կարիպն ան կանի իր խօր խէրանին:
 Կանչեմ ջան արե, սարեր լացուցեմ,
 Չատ կարիպ, կուրբաթ ճամփէն դարձուցեմ:

Ծովուն խավքմ կէր՝ անունն էր Արօր,
 Վզիկն էր էրկէն, սըտիկն սեաւոր,
 Կապեմ պէշարէն էրթամ իւէտ ինոր,
 Էն իմ տարտ գիտէր, ես էլ կէօ ինոր,
 Պէօստան եմ դբեր վեր էնա դարին,
 Չէլաւ մէկ շամամ էօրէօխկեմ եարին,
 Աստուած շէն պախէր էս տարվան տարին:
 Չէլաւ մէկ շամամ էօրէօխկեմ եարին,
 Չամամ թօռօմաւ, իմ եար խռովաւ.
 Արե, եար արե, խռով մի մնայ,
 Աստըվորիս մալ, ծի, քե չի մնայ:

Պաղչեմ եմ տնկել վարդ խաղար թավուր,
 Մէջ հըմէն վարդին իմ վարդն էր քեաֆուր,
 Չահ-պլպիւլն իջաւ վէր իմ վարդին խուր,
 Լեզուս քե գինի, սիրտս քե խուրուվու:

Աչքերդի թուխ թուխ ընթերցող Փէրիշան,
Իմ մատի մատնիկ կուտամ քե նշան,
Որ չես ավատար, կէօ հան Սուրբ նշան,
Թարթըմներդի կըռնկու ճիւղան:
Արե, եար արե, խռով մի կէնայ,
Աստըվորիս մալ, ծի, քե չի մնայ:

Էրկինքնի ամպեր, կիւզայ մարմար ձիւն.
Գլխալի, կաթի վէր մալիւ մարդիւն,
Մէկ էս եմ մալուլ, թէ աշխարհս պիթիւն,
Էսօրնի ամպեր կուզայ անձրե ու ձիւն.
Ախ երբ կէլնի, որ իմ եար պայ մեր տուն,
Էսօր ինչ օր ի—ուրբաթ ու պախս ի,
Ճուխտըմ եար ունիմ տէլ նորախարսի,
Խորած վարդապետ կասի չխաս ի:
Կանչեմ, եար արե, խռով մի մնայ,
Աստըվորիս մալ՝ ծի, քե չի մնայ:

*
* *



ճ, լճ, լճ.—Սիփանա սէգ սարի վերայ,
Կտրիճները շտապով դալիս են միանում,
Այնտեղ անվախ որդիք հսկայ լերան վերայ,
Ջէնք ու զրահի են ընտանում: (կրկնել)

Ահա վառում են՝ զինում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,
Արիւնը նրանց բորբոք սրտի մէջ եռում,
Թռչում, անցնում անհամբեր,
Ջերթ Սիփանայ պինդ քամին,
Սլանում են դէպի ցած,
Դաշտի միջին թշնամուն պատահում են
Եւ մեծ վրէժ անմոռաց —

Ահեղ կռվում նրանից առնում,
Հատու սուսերը հանում,
Ցեղապետին են սպանում,
Եւ զերթ կիզող հուր վառվում: (կրկնել)

Այժմ բոլոր ցեղն ոտի կանգնած՝
Թշնամու դէմ մահառիթ մարտի է կանչում—
Արեան մեծ վրէժը թշնամուց պահանջում,
Եւ թշնամին պարտում:
Թողնում փախչում սարէ սար՝
Ցեա ձգելով մեծ աւար: (կրկնել)

Արիւն թափեցին, արիւնի փոխանակ
Արիւն քամեց ծարաւի սուսեր,
Նրան յագեցած՝ դրեցին պատեան,
Ելնում են ի լեռ—սէգ Սիփանն ի վեր,
Մէգ Սիփանայ կանանչ գլխին յաղթող
Ցեղն անում է ոհ, մեծ խնդում,
Ամպերի թանձրութեան միջից
Սիփանն ամբողջ է թնդում.
Էլ չեն գալ մեզ մօտ թշնամիք,
Սուր տեսան մեր պողվատիք:

Բ Ա Յ Ա Թ Ի Ք



ապուտակ ձին հստեղ եմ,
Արազին մօտացել եմ.
Արագ, ինձ մի ճամբայ տուր,
Մասիսին կարօտցել եմ:

Անի, Անի, ախ Անի,
Քանդողիդ տունը քանդուի,
Քեզ որ ազգը չպահեց
Մէկ սուգ անողն ինչ անի:

Ունիս բազում նահատակ,
Պարկել են սև հողի տակ,
Քեզ պէս քաղաք չէր լինի,
Ափսոս, եղար աւերակ:

Երեսըդ բաց ու ետ տար,
Երբ ուզենաս հողիս ան.
Թող մէկ հողըդ, ան, մանեմ,
Էն վախտը սէրդ էլ ետ տար:

Բաղդը մեզի հալածեց,
Երկրէ երկիր տաւածեց,
Մենք էլ մի երամ էինք,
Դէպքը այսպէս հարուածեց:

Տար էդ հաւին՝ այ ուրուր,
Աշխարքս դանակ ա ու սուր,
Ջօռ մարդի թուրն ա կտրում,
Խեղճն ուր կորչի, ան, ուր, ուր:

Ա՛խ Հայաստան, Հայաստան,
Մնացիր անդառատան,
Այլոց օթեան դառար,
Ո՛ր են քո Արամ, Տիգրան:

Երկնքի կանանչ կարմիր,
Ա՛յ սիրուն կանանչ կարմիր,
Լերդս ու թոքս չորցել է,
Սար ու ձոր կանանչ կարմիր:

Ընկել եմ, ան, սարէ սար,
Դարման չունիմ, ո՛չ մի ճար,
Ուզում եմ գամ քո ոտը,
Առաջս ծով, սար է, սար:

Վանանչ են ան, սար ու ձոր,
Ձէնս բարակ, սիրտս խոր,

Հողիս էլ տամ չես լսիլ,
Ի՞նչ ես ընկել սար ու ձոր:

Պ. Ժ. Դ.

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԿՈՌԻՆԿ

Կոռնիկ, ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կոռնիկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս.
Մի վազեր երամիդ, շուտով կու հասնիս,
Կոռնիկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Թողեր եմ ու եկեր մըլքերս ու այգիս,
Քանի որ ան կանեմ կու քաղուի հողիս,
Կոռնիկ, պահ մի կացիր՝ ձայնիկդ ի հողիս,
Կոռնիկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Աստվորիս բաներն կամաց կամաց է,
Եթէ Աստուած լսէ դանակն բացցէ,
Ղարիբին սիրտն է սուգ, աչերն ի լաց է,
Կոռնիկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Աստուած, քեզնէ խնդրեմ մորվէթ ու քերիմ,
Ղարիբին սիրտն է խոց, ճիկերն է վէրէմ,
Կերած հացն է լեղի ու ջուրն հարամ,
Կոռնիկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Գրեր եմ մէջ թղթիս, թէ հոս մնացի,
Օրիկ մի օրերաց զաչերս չը բացի,
Սիրելիք, ձեզանէ կարօտ մնացի,
Կոռնիկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէպտիր,
Երամ ես ժողովեր հազարներ ու բիւր,
Ինձ պատասխան չը տուիր. ելար գնացիր,
Կոռնիկ, մեր աշխարհէն գնա հեռացիր:

Վաննցի տիրացու Մկրտիչ.



այնը հնչեց էրզրումէն, Հայոց լեռներէն,
Թունդ-թունդ ելան Հայոց սրտեր գէնքի շաշիւնէն:
Հայ դիւզացին դարուց ի վեր սուրը չ'տեսած՝
Դաշտը թողուց սուր, հրացան բահի տեղն առաւ:
Անմիտթիւն, տունը քանդող Հայոց խեղճ ազգին,
Հրաժարուեց, տեղի տուաւ միութեան ձայնին:
Հայ տիկինը ստիպում է ամուսնուն զնալ,
Պատերազմի դաշտի վերայ վէրք տալ, ստանալ:
Քնքոյշ կեանքը ծանր է թուում հայ օրիորդին,
Ձէնքը ձեռքին սիրտ է տալիս Հայոց քաջերին:
Հայ ծերունին ցուպը ձեռին, լալով խնդրում է,—
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնել:
Եւրոպային հասաւ լուրը հայ գեղջկի շարժման,
Ուրախական ողջոյն տուաւ հայրենասիրին:
Լսեց թուրքը ու սառեցաւ արեւնը խեղճին,
2էր երագեր հայուն տեսնել նա այս վիճակին:

Ա Ռ Կ Ռ Ո Ւ Ն Կ



անապարհս ընկաւ Տըփիսիս,
Կրակ լցուաւ մէջ իմ սրտիս,
Բարեւ արն սիրականիս,
Երկրորդ խումբ, երրորդ խումբ, չորրորդ խումբ
կոռնկ, սրտորդի ձեռքից վերատը կոռնկ,
Որսորդից փախած դու սիրուն կոռնկ:
Լալով գնում եմ ճանապարհ,
Նա իւր տանն է ես եմ օտար,
Ասն չընտրէ նոր սիրահար: Երկրորդ. . .
Մատաղ լինիմ քու երամիդ,
Անուշ կռկռան բերանիդ,
Ասն տեսայ սիրականիդ: Երկրորդ. . .

Ա Ռ Պ Ա Ն Դ Ո Ւ Մ Տ Ն



Ձափէմըն, խէր հաթի դիար Թիֆլիզի. ¹⁾
Մըր նուպոյէն ըսկի ինչ խըսա ունիս,
Ընձի խէր խապար տուր, ես մըռնիմ քըզի,
Մըր նուպոյէն ըսկի ինչ խըսա ունիս:

Խօշ խապարէ բըտէ դիարէ դեանձէ ²⁾
Էն անիծուկ քուրդը խային կու տանջէ,
Ա՛խ, քօթի, մըռտալոյ, խարապ կուրմանջէ, ³⁾
Մըր նուպոյէն ըսկի ինչ խըսա ունիս:

Սեարէմըն դիւ բէժի, նուպոյ չի դըբէ, ⁴⁾
Ի՛մալ, ուրախ է թէ՛ շիւան ու սուգ է,
Մըր քաւշանն անոնշ է, թէ՛ ձուն ու բուք է,
Մըր նուպոյէն ըսկի ինչ խըսա ունիս:

Խյօզի. դիւ նահաթի խուրպաթի սեարըն, ⁵⁾
Դու իմալ թորկեցիր զօզալ աշխարըն,
Սնդ են իմ պապ ու մամ, ես չէ իմ եարըն,
Մըր նուպոյէն ըկսի ինչ խըսա ունիս:

Կուռէմն, բըրէմն դեանձ է, սալամաթ, ⁶⁾
Խայու էրկըն մէ՛ լուր տուր մըզի խաստատ,
Յակէի ցաւ շատ է, օր պատմէ խատ խատ,
Մըր նուպոյէն ըսկի ինչ խըսա ունիս:

- 1) Աչքի լոյս, բարով էկար դու Թիֆլիզու:
- 2) Լաւ լուր տուր մեր աշխարհէն, ինչպէս է.
- 3) Ա՛խ անպիտան, գարշելի փշացած քուրդ.
- 4) Գլխաւորըն. դու տաս, նուպօն ինչպէս է.
- 5) Երանի դու օտարութեան չը տայիր գլուխդ.
- 6) Որդիս, եղբայրս լաւ են, առողջ են

ՍԱՍՈՒՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ



անկունք, երբոր հրացան բացուաւ,
 Գոռուն, գոշուն լեռներն ընկաւ,
 Քուրտ խոտի պէս գետին թափուաւ,
 Խեղճ սասունցոյ օգնող չեղաւ:

Ահա Վալին էկաւ Բաղշէն,
 Զօրք, թնդանօթ բերեց Մուշէն,
 Եւ ուրին զօրք չորս կողմերէն,
 Խեղճ Տալուորցուն ջնջել կուղեն:

Խեղճ սասունցիք կանչին—Աստուած,
 Անօթի ինք, տո՛ւր մըզի հաց,
 Ամենքս մէկ և անկասկած,
 Զարկինք ջարդինք մինչ կատարած:

Հայեր, տեսաք քաջ Տամատեան
 Ի Տալուորիկ նստաւ գրդան,
 Ծնաւ Նորայր, Արամ, Տիգրան,
 Կանգնել զանկուն զհինգղարեան:

Իրաւ, յանկարծ այս փոթորիկ
 Ծագումն առաւ ի Տալուորիկ,
 Խեղճ Տալուորցիք մերկ ու բոբիկ,
 Հրացան վերցին մարդ, ընտանիք:

Ահա ութ հազար զօրք Քրտուն,
 Հայոց միայն թուով ութսուն,
 Գէմ յէլան բարի լուսուն,
 Դասպար բռնաց—զարկէք զայդ շուն:

Անգութ քրտեր վերցին զբալան,
 Դասպար բռնաց կորեան նման—
 Տղէկներ, զուք իք Վարդան, Վահան,
 Առիւծի ձագ Մամիկոնեան:

Յանկարծ էրկինք էրկիր ձայնեց,
 Սարեր, ձորեր ձայն արձակեց,
 Որոտաձայն գնդակ թափեց,
 Քրտերու զօրք իսպառ լափեց:

Յայնժամ կասէ մեծն Խումանտար—
 «Էդ Հայերուն դու ձեռք մի տար,
 Հայեր վառուած ին չարաչար,
 Զմըզի կէնին ամօթահար»:

Անդից Վալին կասէ.—«Աւաթ,
 Հայոց ազգն է թերահաւատ,
 Մըր պառեկն է հզօր Մահմատ,
 Աղոնց հազար՝ ու մըր մէկ մարդ»:

Վալուն կասէ Գելու իշխան.—
 «Հզօր Մահմադ ձըզի պաշտպան՝
 Սուրբ Կարապետ մեզ օգնական,
 Զարկինք, ջնջինք զճաճկաստան»:

Վալին կատղած կրսէ,—օգուլ,
 Մշու դաշան է բիրինջի խօլ,
 Կտրիմ զգլուխդ՝ խաղամ ի հօլ
 Զմարմինդ ճամբիմ էրթայ Ստամբօլ:

Անվախ Պետօն կասէ Վալուն—
 «Ես նստեմ իմ վըր էս սարուն,
 Բռնիմ զքու ձեռք զարկիմ քարուն,
 Ստամբօլա գօլ լցուի արուն»:

Կատղած Վալին կասէ,—«անգէտ,
 Քու ձեռք չըկայ կտոր մի փէտ,
 Բռնիմ զքեզ, քէրթիմ զլիւսէզ,
 Քո մորթ կ'ըլնամ կորեկ ու յէրզ»:

Պետօն կասէ Վալուն, — «քելէ,
Այս խօսք քեզնէ շատ աւել է,
Ես առիւծ իմ, ձագերս գել է,
Քեզ կը պատուին, անտէր մարդ իս»:

Վալին կատղած կասէ խըշման —
«Ինչ կը խօսաս, Գէլու իշխան,
Ես Տէր ունիմ Ալի — Օսման,
Սուլթան Աբդուլ — Համիդ քաջ իսան»:

Պետօն կասէ Վալուն — դադան,
Մեզ աջակցեր է Եւրոպան,
Թողում ըսել զմերձական,
Զանպարտելի Ռուսն ու Անգլիան»:

ԿՏՐԻՃ ՍԱՍՈՒՆՅԻՔ

Մընք սրտով կտրին ու բաժով պարթե,
Ունինք հաստ — հաստ թե ու վագինք թեթե,
Հէսրութենի մէջ մըր սիրտ կ'հալի,
Տուէք մըզի, հայեր, մէկ — մէկ աշխալի:

Մընք քար կը հալցունք, ջուր դարձունք զերկաթ,
Ափսոս չինք մնանք վատ Տաճկին ըռիաթ,
Հէսրութենի մէջ մըր սիրտ կը հալի,
Տուէք մըզի, հայեր, մէկ — մէկ սիրմալի:

Անտք, Ծովասար, Կէփին, Մարաթուք,
Կանչին, — հարի եր մեռուկ մնաք դուք,
Բէզրանք նստելով, մընք կուր կուզենք:
Միայն թէ, հայեր, տուէք մըզի գէնք:

Զիր մըր առջեւն փախնի քընց կատու,
Ափսոս չինք մնանք Տաճկին հարկատու,

Սլտերսի չեն վատ, քաջ տղէք կան շատ,
Ունինք լուս հաւատ, յորի չինք ազատ:

Մըր սուրբ Մարափէն էզնի ձեզ վկայ,
Աշխարհք քընց մըզի կտրին մարդ չկայ,
Հանգէ կը կանչինք ու յառաջ վագինք,
Զուտով մըր վըզէն լուծ, շղթան խզինք:

Անօթի, ծարաւ, աղ լէ չմնաց,
Կուտինք չոր արմատ, չընք յուզի արծաթ,
Մէնակ մընք կուզինք ձըզնէ ծակ էրկաթ,
Ընտրով մընք Սասուն ու զՄուշ կազատինք:

ԿԻԿՈՆ Ի ԳԱՍԸՍ-ԲԱԾԱ

Մըր խօր պապկէ գերեզման,
Թողի հոնտեղ կիզամ ման,
Խոզիս կէլնի իւքի տակ,
Խաւտա դժուար ա վաստակ,
Վայլէ, լէ, լէ, լէ, լէ, լէ: ¹⁾

Քանի դուրպաթն եմ ընկեր,
Միջացս գօտին չըմ քակեր,
Խարսնուկ անուշ անթառամ,
Քեզնից գատ կինն է հարամ:

Հիմիկ լաճերս ինչ կանեն,
Մեռան կորան, ինչքան են,
Սիրուն Զուշօն ներօտիկ,
Կըրպօն, Մըրտօն խօրօտիկ:

Հիմիկ իմ արտ ինչ կեղնի,
Ընձնից մահրում կու գեղնի,
Ցամքի ուհան, նունուֆար,
Գոմից պակսի մըր տաւար:

1) Կրկնել իւրաքանչիւր տան վերջում:

Արև շողցեր ա պայծառ,
Նախշուն ա դաշտ, ձեզն ու ծառ,
Զէրդիս վերև են հաւքեր,
Կու ճըլվըլան մըր խաւքեր:

Ախ, շաշխուն եմ, ինչ էրի,
Ղարիբ ընկայ, սիրտս կէրի,
Տղայ, սուս կաց, ինչ պէտք երգ,
Կիզամ, կիզամ իմ տղէր:

ՈՒՐ ՄՈՒՐ ՄՆԱՅԻ

Մի գեղեցիկ պատահեցաւ ինձ յանկարծ,
Չը հասկացայ ինչ ցեղից էր նա ծնուած.
Անտուր մորթեց, առանց կրակ խորովեց,
Խաղաղ սիրտս ու հոգիս արաւ խոցալից:

Ուրը—մոլոր մնացի,
արինն արցունք թափեցի,
այնպէս հրեշտակ տեսայ,
բայց, աւանդ, շատ զրկուեցայ:

Սուր սուր նետեր սիրտս խփեց ու թռաւ,
Հէնց այն օրից արեւ խաւարեցաւ,
Էլ ուր փնտռեմ, սրտեղից գտնեմ նորան,
Որ իւր ձեռքով նա ինձ գնէ գերեզման:

Ուրը մոլոր, . . .

Չը գիտեմ թէ նա օդի մէջ սլացաւ,
Թէ մի հրեշտակ էր երկինք վերացաւ,
Դուցէ երազիս մէջ ես տեսայ նորան,
Որ խոստացաւ իննի ինձ սուրբ սիրական:

Ուրը մոլոր, . . .

Գ. Տախան

ԱՅԼՍԱՏԱՍԷՐ ԵՐՈՐԱԳՈՐԾ

Մութն էկաւ աշխարհ պատեց, հոգիսի խմբաւ,
Քունն եկաւ աչքերս կոխեց, մարմինսի թմբաւ,
Երագներ թափան վրէս, շատ դէլ տուեցի,
Աղամամութն օր հասաւ՝ յըմմէն էլ ցրուաւ:

Ծէգէծէգ զըս չէր էղած, ես հըբամ դարթայ,
Լուսաստղը դեմ աղօթրան շատ պայծառ տեսայ,
Կշեռքն ու Քեարվանդանն Բուլքին են մօտեցած՝
Իմ ջուխտակ եզներ լծած՝ ես իմ արան հասայ:

Մանկէնն ու արօր լծած իմ վար վարեցի,
Հետ առին գացի էկայ ու դունդունացի,
Ճաշ կոտորաւ, ակըրդղահ էր, վարելուց պըծայ,
Իմ վարած սըոսուռ արտի չրիս տափնեցի:

Ժողովեցի իմ հար-հաճաթ դարձայ դիպա տուն,
Բըղուն մի չոր հաց կերայ, մտայ ես ի քուն,
Մէկել օր լուս չը բացուած՝ առ ափ քաշեցի,
Վարեցի, հերկ էրեցի շուրի իրիկուն:

Իմ վար ու վաստակ ծլաւ, էկաւ շուր գօտիկ,
Փաթթութուաւ մըջ փիլոնին, քիստն էր խօրօտիկ,
Դեղնաւ ու խնկագունաւ դարձաւ քընց մէշայ,
Կուլթներ կախ—կախ ընկան, հա, քաղն էր մօտիկ:

Քաղեցի, եղըն դրի, տարայ զիգեցի,
Ծեծեցի, թեղ քամեցի, ցորեն հանեցի,
Չուքը էղայ իմ Աստծուց, հազար բերան շուքը,
Իմ ճակտի տաք քրտինքով պարտքեր տուեցի:

Հազար ու հազար բերան շուքը իմ Քենէ, Տէր,
Փշուր մի հաց տուր մըղի, մի թորիկ անտէր,
Մըր խաւտի դուշման մի թորիկ ծիծղայ վըր մըղի,
Խայ ազգին, Տէր, Դո՛ւ գինաս, տուր փշուրմի սէր:

ԳՈՒԹԱՆ Ի ԴԱՇՏ

Մութն ընկաւ գութան թորկին,
 Մաճկալն, հոտաղ կու պարկին,
 Եզնարած եզներ տարաւ,
 Խանբաջին փլաւ բերաւ,
 Մրտօն պարկէ մէջ առուին,
 Կու մըռմըռայ վըր պառուին,
 Լուսաստղ ուր քիթ քցեց դուս,
 Գութան քշէք դարի դուս,
 Մսրայ գոմէշ լծան տակ,
 Թըխ գլորի պղտիկ ալ,
 Գուշման մօտէն կիւրիշկաւ,
 Ափօի վրէն բինիշ կայ.
 Հօտաղ, քե զուրբան, պարկի,
 Թըխ մեր գուշման ալըռի,
 Քունն անուշ պղտկին — մենծին,
 Դառներ զմաքիք կու ծծըին.
 Արտուտ թռաւ ուր բընէն,
 Լուս ծագեց աղօթըրնէն,
 Քամին անուշ շընկշընկայ,
 Թուփն ու ծաղիկ տընկտընկայ,
 Հոտղներ, շուտ վեր ելէք,
 Խարազանն ու լծեր լծէք,
 Մաճկալ, իշկէ դէմ աղօթըրան,
 Փառք տուր Աստծուն մէկ բերան,
 Հոռովիլ տուր, մաճկալ ջան,
 Իմ ջան քու ջանին զուրբան:

Ն Ա Ի Ա Վ Ա Ր

Նաւափար դու, ինչու այդպէս,
 Մտածմունքով անձդ տանջես.

Նայէ՛ մէյմը հորս բոլորըդ,
 Հարիւրաւորք են քեզի պէս:

Ալեաց կոհակքն ալ տարուբեր,
 Խորտակեցին նաւիդ լաստեր,
 Հատ մի տըտմիր, յուսն ի Տէր,
 Հարիւրաւորք են քեզի պէս:

Բաղդը չի թողուր միշտ մարդուս
 Ճրագը վառ մինչև ի լոյս,
 Պատէ բոլոր մառախուղ փուտ,
 Հարիւրաւորք են քեզի պէս:

Գնան ի տես սիրուն վարդին,
 Սոխակաց հողիքը զարթին,
 Ա՛խ, երբ դառնաս գոյն սաղարթին,
 Հարիւրաւորք են քեզի պէս:

Պահլաւիկ, դու յոյսդ մի կտրեր,
 Սա կաղաչեմ Աստու խաթեր,
 Նաւիդ դէկը ձեռքդ բռնիր,
 Հարիւրաւորք են քեզի պէս:

Ղ Ա Ր Մ Ե Յ Ո Յ Ե Ր Գ



Իմ գիտիր ինչ պիտիւր տանիս դուն զունյի մալէն,
 Մէ պաքըմ կուզիմ կը չիս տար յերեսիդ խալէն,
 Կտորճիկըմ հասկնալիր դուն իմ անվալէն,
 Ղըսմաթ էղնիր քցէի գիւլուդ ալ վալէն:

Խաթըրբանդա չեղնիս, օր բանըմ ըսիմ,
 Բիր մէ իզի յերիսըդ յերեսիս քսիմ,
 Օր էղնի՛ օր բանըմ ըսիս իս էլ լսիմ,
 Հէշ չիմ կշտանար էդ քու յերեսիդ խալէն:

Ի՞նչ կեղծի օր, մէկ հիտս էնիս խօսքդ,
 Հէշ չիս ճանչնար դիւշմանդ, դօստըդ,
 Քեաշկեամ մաղտաշ վախտըդ կօռտիր օրուցքդ,
 Չըթչի Թաթունն իմ. քօռցա իս լալէն:

ԷՐՋՐՈՒՄՅՈՅ ԲԱՐԲԱՌՈՎ



արլի, պախճալի ես, անընիդ մեռնիմ,
 Պտղէտ մէ պտուղմ քաղէ, տո՛ւ ընձի,
 Ծծերդ եա մեղր է, եա շաքեար նարաթ,
 Չեռքդ արմաղ ա՛ռ մաղէ, տո՛ւ ընձի:

Սափղա յընկայ վրադ, պէտքէ իմանաս,
 Ես օր կ' դիմանամ դուն ալ դիմանաս.
 Սիրտս կտրաած է, դրած է մաս—մաս,
 Կուգես մասին մէկը աղէ, տո՛ւ ընձի:

Հոգիս կրակի մէջ, անձս գողինքն է,
 Կըսեն ցաւիս դեզը յերեսիդ քրտինքն է,
 Քրտինքդ տուր ծծեմ, եարիս բժիշկն է,
 Սերոջն եմ, քանի օր վաղ է, տո՛ւ ընձի:

յ ո ը ղ ո ը ա կ

Ապրին թանը թթու թան է,
 Էկօ՛. ձագուկս, տունն էկօ՛,
 Հոգիս սրտէս դու մի հանէ,
 Էկօ՛, ձագուկս, տունն էկօ:

Արգիւրումու ջուրն անուշ է,
 Բորիկ մի քալէ շատ փուշ է,
 Դու պղտիկ ես, սէրդ անուշ է,
 Էկօ՛ ձագուկս, տունն էկօ:

Մեռնիմ ալագեօղ աչերուդ,
 Հիշտիկով քաշած ընքներուդ,
 Սիրտս էրաւ վառ—վառ սիրուդ,
 Էկօ՛, ձագուկս, տո՛ւնն էկօ:

*
* *

Պարտիզում վարդեր բացուած կըսպասեն սոխակին,
 Առանց սոխակ թառամած՝ կարօտ են պտակին,
 Արգեօք ով է, դունն է թակում, ախ, սիրտս կղողայ,
 Իմ սիրունիս ո՛ւր է գնում, ախ, սիրտս կղողայ:

Գետակի ալիքները գնում են խայտալով,
 Սիրահարի աչերը նայում արտասուելով:
 Արգեօք ո՛վ է...

Թիթեռը ճրագի մօտ շրջում է անդադար,
 Մինչ իր վերջը սիրակարօտ շունի նա օր դադար,
 Սիրունին տանը նստած՝ սպասում է ետին,
 Քնարը ձեռին առած՝ նուագում լալագին:

Գ. Տալեան.

ԱՐԱՐՅՈՅԻ ԵՐԴԷ



ասունայ սար փչէ ուր հով,
 Արե կշտէդ ընցնի ամպով,
 Չուր եր քնիս երագներով.
 Զարթնր, լաօ, մոնիմ քրզի,
 Ե քէ մոնիմ, օգնէ խայուն:

Բորիկ էրթամ Մարմառ—Քումբէթ,
 Եօթ—Անունն էլնի քո խեա,
 Քրդու արուն կաթմ թրէդ: Զարթնր . .

Բոքիկ ոտքով չուր Այլթամար,
էրթամ յիլամ քըզի համար,
Քե խետ էղնի սուրբ Տիրամար: Զարթիր . . .

Քրդու զըհէն էղնի պօղօս,
Խայու Խայրիկ քե բարեխօս,
Թուրդի օրհնէ մըր Քիրիստոս: Զարթիր

Գրոզ տանի քուրդ Արոյին,
Ըսպաններ է ջոջ Ափոյին,
Իլլաջ մացեր Արաբոյին: Զարթիր

Չուր եր մնամ էլու դռներ,
էրթամ գտնիմ զիմ խեղճ զառներ,
Սուքեմ զիմ բախչայի ծառներ: Զարթիր

Դէն իրիշկէ, գալող ո՞րն է,
Քաջ Արաբօ բաղդաւորն է,
Կարմիր իրիցանց զինուորն է: Զարթիր

Խեղճ Մշեցին մնաց լալով,
Հեռու երկրներ մանգալով,
Մեռաւ թուրքի պարտքը տալով: Զարթիր

Ոտքի կայնի, կտրիճ Խերան,
Զօրքով գնա՛ առաջ ուրան,
Սալաթ Մէյրու բաժին դուրբան: Զարթիր

Սեֆիլ, շիւար մացած Հայեր,
էղած անտէր – բնաւեր հաւքեր,
Տէր, դու փըրկէ, պահէ արթուն: Զարթիր

Փահրատ



ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏՈՒ ՆՐԳ

Սուրբ Կարապետ չայիր չիման,
Բոլոր բարձր մէռմէն զիւան,
Վանքերն հեռուէն կերեան,
Սուրբ մասունքդ վանեց զիւան.
Մշու Սուլթան Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ գեղին մօտիկ
Երեք օր վաղեցի բոքիկ.
Ինքն կանէ մարդու մօտիկ,
Մեծ, զօրաւոր Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ աղբուր ու ջուր,
Ոտքդ կուգայ շատ կաղ ու կուր,
Դու ամենուն մուրազը տուր,
Մուրազատուր Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ կայնեցուցին,
Լուսեղէն հանդերձ հագուցին,
Քրիստոս գիրկը մկրտեցին,
Մկրտարար Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ յելման գետեր,
Մէջն է բուսեր կանանչ խոտեր,
Քենէ կուգայ խնկի հոտեր,
Չանկլի — Դիւան Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ բանձր բոլոր,
Ճանփէք ունի ոլոր-մոլոր,
Ուր դուռ կերթայ շատ ուխտաւոր,
Որ ոտաւոր՝ ո՞ր ձիաւոր:

Մուրազ կուտայ ոտաւորին,
Օսկէ խնձոր ձիաւորին,
Ջուխտակ աղբուր մըջ ուր բակին,

Ուր դուռ կերթայ դառն ու մաքին,
Մատաղ կէսին լուս կիրակին:

Կաղ դեն ասաց—եաման, եաման,
Ընձի մի թալի գընդան,
Ես քեզ կեղնիմ փոշեհան,
Տանիմ թափիմ Փիրէ-Բաթման: ¹⁾

Սուրբ Կարապետ քեօշայ—քեօշայ,
Դուռդ կուգայ բազ ու փաշայ,
Ճամփէք ունիս ղօշայ—ղօշայ,
Լուս—գերեզման Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ է մէջ դաշտին,
Սրբանունքն իրեն հետ հաշտին,
Հատ խաչապաշտ իրեն պաշտին,
Մշու Սուլթան Սուրբ Կարապետ:

ՏԱԼՈՒՈՐԻԿՅՅԻ ԿՏՐԻՃ



ալուորիկցի կտրիճ եմ խորթ,
Քաղքցու պէս չեմ թուլամորթ
Սարի գաւակ, քարի ողդի,
Հին քաջ Հայոց եմ մնացորդ:

Տալուորիկցի գաւակ եմ քաջ,
2եմ խոնարհիւր թուրքի տուաջ,
Քարոտ լերանց ես ազատ լան,
2եմ տեսեր՝ ո՛չ արօր, ո՛չ ման,

Երբոր բացի աչքս այս աշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար:

1) Փիրէ-Բաթման բլրի անուն է, որը գտնվում է Սուրբ Կարապետից
24 ժամ հեռու, դէպի Բաղամասրի կողմը:

Մինչև փակեմ աչքս ի խաւար,
Պիտ չ'կոխէ հօս ոտք օտար:

Իմ պապ ծնաւ զիս պալու ծոց,
Ինձ ընկոյզ կոճմ եղաւ օրոց,
Տկլոզ ծնած, մեծցած տրկլոզ,
Դէմ արևու, սաստիկ հոգմոց:

Ոտքս բորիկ, սիրտս միշտ բաց,
Ի՛նչ փոյթ՝ թէ քոյրս ալ մերկ մնաց,
Ինձ մօտ մէկ է արև, բուք, ցուրտ,
Բաւ՝ չէ իշխեր վրաս թուրք, քուրտ:

Յորենի տեղ կուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ,
Հինեմ փէտատ, խոփ, խաճրկաթ,
Ծանր է դատումս. բայց եմ ազատ:

Հարստութիւն, ուսում, հանճար,
Պատիւ և փառք չեն ինձ համար,
Բաւ է՝ ունիմ ճար, թուր, խանճար,
Բաւ՝ չէ իշխեր վրաս օտար:

Ձէնքս է միակ իմ խաղաղիկ,
Կ'ատեմ հանդարտ կեանք խաղաղիկ,
Կը սիրեմ որս, կռիւ աւար,
Կսպասեմ երբ ընկնի հաւար:

Գիշեր գէնքս վրաս քնեմ,
Երազիս մէջ կռիւ կընեմ,
Կռուելը ինձ մօտ խաղալ է,
Կռուով մեռնելն ինձ հալալ է:

Կռուի մէջը մեռաւ իմ պապ,
Այդ կերպ մահն է անուշ մրափ,
Ես ալ կուղեմ մահ մէջ կռուի,
Որ իմ անուն անմահ գրուի:

Այս սարերը անմատչելի
Իմ քաջ նախնիք երբ ընտրեցին,
Ըսին,— ազատ որդոց որդի,
Քաջաց սերունդ թող հոս ապրի:

Եւ իմ խելօք ջոջ պապ Յարէ,
Աստուած հոգին լուսաւորէ,
Ինձ կըսէր միշտ,— ազատ ապրիր,
Մի ծուր վիզ, հարկ մի վճարիր:—

Տալուորիկն է սև-սև սարեր,
Խոր, մութ ծործորք, սեպ-սեպ քարեր.
Վերև ջուխտակ ծեր Մարաթուն.
Հոգիս մատաղ մեր Մարաթան:

Մեզմով պարծի այսօր Սասուն,
Մենք ենք խրախոյս Հայոց նկուն,
Տալուորիկ սար, ժայռոտ Ջէյթուն,
Տան իրարու ազատ ողջոյն:

ԹԻՖԼԻՉԵՅՈՅ ԴԱՆԴԱՏԸ

Տեհար մէկը շլապայով,
Քաշած ձեռին շան կաշի,
Չուշի կտորն աչքերին,
Լուս ընկաւ քո առաջին:
Էսննց է, մողս է, մողս է, մողս է '):

Պետերբուրգումը միթօմ
Աւարտիլ է իր ուսում,
Փիլիսոփայ է, կօսիս,
Խուրը տրկէմէն է խօսում:

1) Կրկնել իւրաքանչիւր տան պերջում.

Մէկ էլ տենում իս պուշը
Թռն է տալիս դայրաթով,
Կօսիս քուշի աւիլը
Վիռ է կալել փուտրաթով:

Մէկ էլ տէնիս բժիշկը՝
Իւր վիզիթի փուղն առած,
Դեռ ինքն էլ տուն չի հասած՝
Հիւանդն էլ յետնէն մեռաւ:

Մի ձեռը նա փրուելով
Ունի շալուարի ջիբում,
Կոտրատուելով միւս ձեռով
Իւղած մազիւրն է քօքում:

Ու բերնում ծխելով
Սատանայի բուրվառը,
Մէջքը կոտրած կատուի պէս
Երբ չափում է բուրվառը:

Մէկէլն ոչխարի նման,
Էղնէն կախիլ է դմակ,
Կօսիս դարբնի մեծ փութսով
Փշած ըլին իր քամակ:

Ա՛խ էն դամբի պէս գործած
Էրէսներ ին քուղը,
Սապոկների ճոճոցը՝
Քանդում ին իմ ըղուղը:

Զիմ կանացի, հախ Աստծու,
Բարկութիւնը իմ սանձել,
Սկսում եմ վաճ տալով
Միւր կնանիքն անիծել:

ԱՍՈՒ ՏՐՏՈՒՆՁԸ



անի մէկ բորբոքում, քանի մէկ վառում,
Մայրիկ, ուր է սրտիս մխիթարանքը.
Հէյ, նազանմ հէյ, ջանանմ հէյ, ուժուամ հէյ, սիրելի:

Տայ Աստուած, որ ես էլ մեռնիմ սպառում,
Այսուհետեւ ինչո՞ւ է պէտք իմ կեանքը:
Ձէ, չէ, չէ, աղբէր չէ, չէ, ջանքւմ չէ, չէ, հոգի, չէ:
սիրելի¹⁾:

Երանի էր ինձ չը ծընէիր մայրիկ,
Չունենայիր ինձ պէս տարաբախտ աղջիկ,
Դուք էլ ինձ հետ եղաք խեղճ, ապերջանիկ,
Մաշեց, քանդեց մեզի դառն փորձանքը:

Ասլին²⁾ եմ, չը փոխուաւ իմ օրս լաւի,
Կարմունջ դառայ ես հոգսերի ու ցաւի,
Եթէ Աստուած չը կամենայ, յիրաւի,
Չի կատարուի ո՛չ մի մարդու բաղձանքը:
Թարգ. Զիւանի

ՎԱՆԵՑԻ ԿՐՈՋ ԶԳԱՑՍՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԻՆՐ ԱՍՈՒՍԻՆԸ

Քեամբախ Բէյօղլի, պլէր Իւսքիւտար,
Որ չանէր իմ եար վէր ձիկ դարբէզար,
Քեամբախ Բալխլի ինչ անուշ տեղ էր,
Մէջ քէօ էրկու ծոց քնելու տեղ էր:
Արէ, եար արէ, մալուլ մի մնայ,
Կուրբաթ ես ինկե, արէ, մի մնայ,
Պէանցրիկ սարերաց յըմէնին տէր կայ,

1) Բոլոր տները այս տան նման երգել:

2) Աչըղ Քեարամի սիրուհին:

Յըմէն եղնիկին մէկ էլ մարդ մը կայ,
Ես խօրօտ եղնիկ, ընձիկ տէր չկայ.
Վով ձիկ չը սիրե, ուր սիրտ սէր չկայ . . .
Ստամբէօլ քաղաք վէր սե ծովերաց,
Վաթան կուրիսէ վէր կարիքներաց,
Կարիքիս մեռնեմ, ուր ճամբխներաց,
Որ չ'էրթէր մնէր յետե սարերաց . . .
Վանայ չիւմ Պօլիս մէկ էօրէօխկեցի,
Չատ կարիք—կուրբաթ՝ ոտով դարձուցի,
Արէ, եար արէ, արէ, ջան արէ,
Վալլահ կու մեռնեմ, խոցերսի խաս է . . .





Ե Ր Ր Ո Ր Դ Բ Ա Ժ Ի Ն

ՊԱՐ-ՆԲԳԵՐ

Ն Ա Զ Ե Ր Ո Վ



դջիկ, նազերով, նազերով,
Դիլբար, նազերով, նազերով:
Աղջիկ, մի գար մեր կալերով,
Դիլբար, մի գար մեր կալերով:
Դիլբար, ձին էր նալերով,
Աղջիկ, մի գար մեր կալերով:
Աղջիկ մի գար, մեր տուն ծուխ ի.
Դիլբար մի գար, մեր տուն ծուխ ի.
Կարմիր իրես աչքեր թուխ ի:
Արի էրթանք հորդկա խոտիկ,
Դիլբար էրթանք հորտկա խոտիկ,
Տեսնենք վրե հարն ի խորտակ:

* *

Շարաֆով, թուխ փուշով աղջիկ, ըտրր յէրես,¹⁾
Ձրմ գինա յո՛ւտի կիգաս, դուն մուրներ ես²⁾

Ախջի, քու գլխին է դրած կարմիր ջրղայ,
Խերիք է, խըղ վըգնոցիդ մալուլ մը խնդայ,
Ես ու դու արի հար էգնինք, խորտ Նազկուլ,
Բալալու աղջիկ իս դու, ես լէ խեղճ տղայ:

Իմ ու քու նանէի մէջ, թըխ Աստուած դատէ,
Եագգուլ ջան, մէ իրիշկելըդ ձիկ շատ է շատ,
Մօտկցի, մը վախենայ, քու անուշ ետըն իմ,
Փաթթութիւն, իմ վիզ գրկէ. մը ասի ետտ է:

Քու խէրանց դուռ ու յէրդիս մենծ պար ու խաղ է,
Էդ սիւտակ դօշիդ խամար. իմ սիրտն դադ է,
Զիմ սէֆիլ բալալաւ բաշ: Խօրօտիկ Սաւգուլ,
Զըմ գինա յօրի ըղման սիրտդ վրէս պաղ է:

Պիտվական ու խօրօտիկ բճեր իս խաքի,
Լուսվընէ շուր իրիկուն ձըր դուռն իմ չոքի,
Քու սէրսուփ խաթեր խամար յըմէն լուս ու մութ՝
Վըր ծնկան ես չոքէջօք խօրդ ձեռն իմ պաքի:

Աշխրբի դարդ-խասավաթ քըզլի է տուած,
Օրթէ զիս գետին կու տըփիս, ախ անաստուած,
Քու սէրըն էփեց ու վառեց. շիւար մացի,
Զընք գինէ, թը դու յիսնէ էիր խռոված:

Քու ձեռնէն բրորաւ սիրտս, էղայ դարբէդար,
Քանդեցիր իմ տուն ու տեղ, քսեցիր չոր քար,
Հարի եր մնամ բրինդար, չէ քու Խլղաթն իմ,
Մեղք արի, խանչէ քու քով, իմ բէֆալու եար:

Կող ու կուշտս կպաւ գետնէն ճամբախտի իշելով,
Մեռայ ես շատ տըլպայ քու փէշ քաշելով.
Զիս մոռցար, աղբըտի պէս դռնէ դուռ քըցիր,
Թորկեցիր շիւար ու խեղճ, ախ—վախ քաշելով:

Մըռնիմ քու սըռսուռ ծամին ու բարակ բաժին,
Քու ծամերն ու թուխ աչքեր աշխարք կու աժին,
Իլլահի քու թելլու բօյն ու կեռ—կեռ ունքեր, . .
Ինչ կէզնի ըզ քու մատներ հաղմ գլօխս մաժին:

ԴԱՐՏԻՑՍ ԽԱՐԱՐ ՏՈՒՐ, ԲԱՐՈ

Աղջի, արի քե ֆաս առնիմ,
Փասի պիւլոր ոսկի կարեմ,
— Զեմ ուզի դադօ, չեմ ուզի, բաբօ,
Դարդիցս խաբար տո՛ւր բաբօ:

Աղջի, արի դալմա առնեմ,
Դալմի պիւլոր սիւրմա կարեմ,
— Զեմ ուզի, դադօ, եմ.

Աղջի, արի ճղմայ առնեմ,
Ճըզմի տակեր նալչա գարկեմ.
— Զեմ ուզի եմ:

Աղջի, արի քե տամ շհար,
— Զեմ ուզի եմ:

Աղջի, արի քե տամ Հաւանց,
— Զեմ ուզի, դադօ,

Աղջի, արի քե տամ Հալիւր.
— Խա, բաբօ ջան, բաբօ,
Դարդիցս խաբար տուր, բաբօ,
Տըանանայ կօ ես էլ կերթամ,
Տըանանայ օղորմի քեօ խօր:
Քնար վանեցոց

«ԱՅ ԻՍ ՆԱԶԱՆԻ ԲՈՅԸՍ»

Աղբէր, բաղդ անուշ է,
Բաղիդ միջինը նուշ է,
Այ իմ նազանի բոյըս¹⁾
Թէլլու նազանի բոյըս²⁾

Ախպէր խաթրդ չը մնայ,
Եարս քեզնէն անուշ է:

Էս սարը բանձը սար է,
Տակը զանջրու քար է,
Առածս մէկ ու ճար է,
Հաքածը ըռուքեար է:

Էս տներ պուճուր տներ,
Միջին կար օսկէ սներ,
Սուն ու գերան պար պիտէր,
Սիրով սիրած եար պիտէր:

Ջուրս տաք է, ջուր բերէք,
Հնդստանու հունդ բերէք,
Էլ ու գիւնս թամամ է,
Ղարիւր եարիս տուն բերէք:

«ՍԻՐՈՒՆԻԿ ԶԱՆ, ԿԱՅՆԻ ՏԵՄՆԵՄ»

Աղբէր, հանաքիդ մեռնեմ,
Ոսկէ դանակիդ մեռնեմ.
(Սիրունիկ ջան, կայնի տեսնեմ¹),
Ճամբա էրթող շէկ աղբէր,
Դուքեան բաղարիդ մեռնեմ:

Առուիդ արասին դուրբան,
Դինուդ կարասին դուրբան,
Ճամբից գալով շէկ աղբէր,
Սրտիդ հաւասին դուրբան:

Մի ջաղաց էրկու դռնի,
Բարձ գրէք եարս կռնի,

1 Այս տողը կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Ես ու դու մի բաղում պտենք —
Ես չինարի դու նըռնի:

Կայնել ես կանչում էլ չես,
Բոյիցդ ամանչում էլ չես,
Էկայ կշտովդ անց կացայ,
Տէր ես՝ ճանանչում էլ չես:

Բերդիս կտերը ցել ունեմ,
Ալ արըշում թել ունեմ,
Թելիկ — մելիկ սարկաւադ,
Ես քեզանից մեյլ ունեմ:

«Չամբարումի տալըմ տաշա՛)
Բիթի խան դըր սիրի փաշա».²⁾

Աղլուխս կորաւ ձեր դուռը,
Սրտէս դուրս չի դայ մըմուռը,
Բաղդն ինձի քցեց էդ կուռը,
Անուշ տղայ, տո՛ւր աղլուխս:

— Քու աղլուխդ ինձ մօտ չ'կայ,
Ես կը երգուիմ «Աստուած վկայ»,
Ով գտել է թող բերէ տայ —
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:

— Աղլուխս եարի բաշխած էր,
Ալ արբեշումով հաշխած էր,
Պատկերս վրէն քաշած էր,
Անուշ տղայ, տո՛ւր աղլուխս:

— Քու վարմունքիդ ինչ անուն տամ,
Քիչ է մնում որ անվերջ լամ,

1) 2 Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Մօտս լինի՝ բերեմ կուտամ —
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:

— Մուժտէդ կուտամ աղլուխս բեր,
Դու ամեն օր կեր կաթի սեր,
Ինձի քարերուն մի խփեր,
Անուշ տղայ, տո՛ւր աղլուխս:

— Սէրդ քնձէն վաղուց է սառեր,
Տուած քօսքէդ ետ ես դառեր,
Հաւատա՛, որ ես չեմ առեր,
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:

— Ի՜նչ ջուղար պիտի տամ մօրս,
Սիրտս կտրաւ ընկաւ փորս,
Խաբար տարէք մեծ ախբօրս,
Անուշ տղայ, տու՛ր աղլուխս:

— Աղլուխիդ տեղը չեմ գիտեր,
Ինձի մի անուշ ետ պիտեր,
Աջար տեսնես ո՞վ է գտեր,
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:

«Հաւար—հաւար Դէրիքօ
Դաստէ քուքէ Բէրիքօ»:

Ամպեր, ամպեր, հեռացէք. (կրկնել)
Սարերի վրայ կացէք,
Հաւար հաւար Դէրիքօ
Ամպեր, թէ Աստուած սիրէք, (կրկնել)
Կաթիլ անձրեւ մի ածէք:
Հաւար—հաւար Դէրիքօ (կրկնել),
Հաւար մաղաթ Դէրիքօ,
Դաստէ քուքէ Բէրիքօ,
Վայ լէ եաման Մամրքօ:¹⁾

1) Հետեւեալ աները այս տան նման պէտք է երգել:

Ախշի, դռնից դուրս արի,
Ինձ չիկին թառիկ կարի,
Երբ որ գլուխըս դնեմ,
Ուրախացի՛, ման արի:

Բուխէրիկը վառել ա,
Աֆքեարըդ ինձ առել ա,
Քանի որ քեզի սիրել եմ,
Ուշք ու միտքս դառել ա:

Մեր արտը հէրդ վարեց,
Քաթիպէն դերձիկ կարեց,
Ընչ ու ունքով իշմարըդ,
Ինձի ջանդահան արեց:

Հանդում բուսնել ա սոկոն,
Մէրդ թխել ա բոքոն,
Մեռնիմ ծոցիդ նռներին,
Դմանի վարդի կոկոն:

ԱՄՐԱՆ ԱՆԵՐԷՆ ԱՐԻ

Աման ալքէն արի,¹⁾
Կանանչ կալէրէն արի²⁾

Չայնիկ բերէք չայ անենք,
Մեր դիւթինին փայ անենք,
Մեր դիւթինը սաղ ընի,
Հայոց թաղաւոր ընի:
Աղբօրս անունն Աղասի,
Քիսէն լիբը արասի,
Քիսէն խարջիլդ չը մնաց,
Քօմմա օղուրիս գնաց:

1) 2) Գրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Թէջ եմ արել մաղրմ եմ,
Ձեռքէդ բռնել խաղրմ եմ,
Նստողներ, լաւ սէյր արէք,
Սաղաքեարին դստեր եմ:

ԱՅ ԳԼԶ, ԲԻՐ ՄԵՋԱՆ ՏՈՒԴՈՒՐ

Այ գրգ, բիր մազա տօլոր, ¹⁾
Սուի թաք տուզա տօլոր ²⁾
Գնացի հանդ կրակի,
Ոտքս դիպաւ փռանդի,
Չան գեաղին արի թաղի,
Հրկեցի լափստրակի:

Մանի մանի մի բերան,
Սէլը տանի ջուխտ գերան,
Գէշը սիրունի ծոցին,
Հայ վախ ու հարուր բերան:

Ես ինչ կանեմ ամակը,
Ստացել եմ նամակը,
Բաղդիցս գանգատ կանեմ,
Խաւար է արեգակը:

Ամպեր, մի քիչ հով արէք,
Անձրե թափէք, ծով արէք,
Գէշ մարդու էլ ու գիւնը
Սե հողի տակով արէք:

Ձեռիդ փունջ կայ անթառամ,
Մին էլ ես տամ անթառամ,
Ես ու դու իրար հետ ապրինք
Միշտ անքեաղար, անթառամ:

1) 2) Գրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

«ԱՅ ՊՈՒՃՈՒՐ ԱՂՋԻԿ»

Այ պուճուր աղջիկ, տալոլմն արի, ¹⁾
Պուճուր աղջիկ, զալում ես,
Ջան պուճուր աղջիկ, տալոլմն արի, ²⁾
Մաղերդ սղալում ես.
Խունջիկ — մունջիկ մի էղնի,
Ինձ առնելու կամ ունես:

Հարաֆիլ եմ՝ տալ չունեմ,
Խաս իգիթ եմ՝ եար չունեմ,
Եարս էկաւ անց կացաւ,
Ջահիլ եմ՝ խապար չունեմ:

Եւր կանչեմ, արի, արի,
Բաղումը տեսայ, արի,
Եւր, արի մտի պարը.
Ես էլ ասեմ էս խաղը:

Էս բակը բակ լմանի,
Գլխունը թափ լմանի,
Ջան տղէն անցաւ զնաց,
Իրմովը բակ լմանի:

ԱՅ ՍԻՐՈՒՆ ԿԱՔԱԻ

Այ սիրուն կաքաւ, բռնէ պարը բոլորի, ¹⁾
Պարի մէջը ժուլիկ գեաղէն մոլորի ²⁾
Սարի տակը մշուշ ա,
Իմ եարը բանկլի զորշ ա,
Էդ ո՞վ ա ասում գէշ ա,
Մեղրից ու շաքրից անուշ ա:

Հով այվանում քնել ես,
Սալամ կաքաւ բռնել ես,

Վարդին ջուր կաթաց վրէդ,
Իմացար քրտնեկ ես:

Բիւլբիւլ, արի մեր բաղը,
Ասան իմ հարի խաղը,
Խաղիդ միջով բարես
Հասցրու հարիս թաղը:

Նոր եմ եկել հնձանից,
Դու մի փախչի ինձանից,
Չեր տունը Աստուած քանդի,
Թէ որ շուռ գաս ինձանից:

ԱՅ ՍԱՐ ՈՒ ՍԷՅՐԱՆ

Այ սար ու սէյրան ու եար,¹⁾
Մարալ ու ջէյրան ու եար²⁾
Չաղացս մանի մանի,
Քունս անուշ կ'տանի,
Իմ հարը սարում, քոլում,
Իմ քունը մնաց կը տանի:

Բաղումը կար բաղմանչի,
Չուին ամէր ու կանչէր,
Թաբուն դառած դուրս թռան,
Մինն իմ հարի նման չէր:

Մի բարձ եմ արել իմն ա,
Մինն էլ եմ արել իմն ա,
Դեանջու քեարվան գալիս ա,
Միջի թաւազն իմն ա:

1) 2) Կրկնել իւրաքանչիւր երկու տողից չստոյ:

Սարից գալիս ա քամի,
Դու չես մնում մի համի,
Ամեն աժող չաժողի
Մի թողնի միսս ծամի:

Քեահլան ձին գոմում կապած,
Սիրտդ սրտիս է կապած,
Տանու դուշման մարդիկը
Ինձ ու քեզ լու են խափած:

Աղչի, ինադ մի անի,
Վեր կաց կայնի դու բանի,
Չեռդ տար սրտիս մէջը,
Դարտերս մէկ-մէկ հանի:

«Լ ՈՒ Ր Ի Կ»

Առաւօտուն թունդիր մուխ,
Կլոր աչքեր ընքներ թուխ,
Սժիր Մուշն ու Բուլանուխ:
Լուրիկ, լուրիկ, լուրիկ, լուրիկ,¹⁾
Բարխէմ, լուրիկ, լուրիկ, լուրիկ²⁾

Առաւօտուն էրկու մարդ,
Աչքս առաւ էղաւ դարդ,
Դու կու մանիր քաֆուր վարդ:

Դացի արտեր բոնի լոր,
Քըզի տեսայ եալի ձոր,
Կարմիր իր, մանիւր խնձոր:

Առաւօտ բարի լուսուն,
Քո խալան հարուր յիսուն,
Վերցի գարկի վրը քուրսուն:

1) 2) Կրկնել իւրաքանչիւր տան վերջը:

Առաւօտ թափիր փոշին,
Իմ դօշն առնի քո դօշին,
Ինչ օր հալուէն մըջ լօշին:

Իրիշկէ դէմ աղօթարան,
Դաշա կու բանի ձրը զուլթան,
Քընց զըմէն քաղցր է վաթան:

Արեւն առաւ կանփընոց,
Մանտրիկ թփեր յերեսնոց,
Արի էնենք գիրկ ու ծոց:

Հաքի քու զուլթնի կապէն,
Ալ զընափուղ է քօբէն,
Էղնիմ ձըր տան մարարէն:

Արեւ դիպաւ սարերուն,
Կաքաւ թռաւ քարերուն,
Եղսօն կայնէ վըր դարուն:

Ձունն էկաւ նստաւ կալին,
Թըմահ չունիմ ձըր մալին,
Կարօտ իմ յերսիդ խալին:

Ջուր կիդայ գոչգոչալէն,
Հէշ չըս խաբցու իմ հալէն,
Դիխուդ ես քցի վալէն:

Լուսնակ մտաւ ամպի տակ,
Քու չորս բոլոր քցեց բակ,
Դու ես իմ բարակ արեգակ:

Քու թեւեր զուլած — զուլած,
Մըզնէ մի ընկնի դօլած,
Օր քե չառնի ոէսի լած:

ԱՍԻ ԵԱՐԱՆՍ ԵԱՐԱՆՍ

Ասի եարանս եարանս,¹⁾
Սալուի ջանանս ջանանս,²⁾
Ախի, նստի կար արան,
Ինձի քեզի եար արան,
Բադի էն քուչովն արի,
Չեռքերդ չարդադ արան:

Ախի, էն օր մեռնէիր,
Որ կմտնէիր աւազան,
Արի գնանք մեր խողան,
Քեզի գովամ զանազան:

Ձուն է էկել հալել ա,
Լցուել գեօլը սառել ա,
Էդ էլօղլու գէշ խօսքը
Ինձի մոմի պէս վառել ա:

Պարկել ես կակուղ հողին,
Մուրազս փորս թողին,
Կարմիր գիւլուէն դիպնի
Գէշ մարդու կուշտ ու կողին:

Գնա, էլի դէմի սար,
Սէր ու սավղէն հետդ տար,
Քեզի էգտեղ քցողը
Բալքի էղնի դարբէզար:

«ՍՕՆԱ ԵԱՐ»

Արազը հեշտացել ա,
Ճամփէքը կոշտացել ա,

1) 2) Կրկնել խրաքանչիւր տողից յետոյ:

Խաղար տարէք իմ նանին,
Մուշտարին շատացել ա: ¹⁾

Արագն—նըզանըմ գեամին,
Գեօքսիս ա տալիս քամին,
Ես մի զարիբ ջան ունեմ,
Հասրաթ եմ ծոցի համին:

Քեանքիւիդ կալին մեռնեմ,
Էրեսիդ խալին մեռնեմ,
Լսել եմ կարգացել ես,
Սաղմոսիդ կողին մեռնեմ:

Էս օր գութանը մէրն ա,
Մաճ բռնողը իմ հէրն ա,
Եզնարած շէկիկ տղէն,
Ալամ գիտէ իմ տէրն ա:

Արի մի փաթ պար խաղանք,
Տընկող մանք, չը կաղանք,
Հարսանիքիդ ալուրը
Մուզնու ըխտից փաղ աղանք:

Գնա՛ ոչխարը կըթի,
Օճօռքի տակ մի փըթի,
Քիրս զարկեմ ձեր տունը,
Մի էրկու ֆինջան կաթի:

Եթում եմ, հեր—մէր չունեմ,
Ուրիշի հետ սէր չունեմ,
Քեզնից գիւման եար չունեմ,
Գլխիս ուրիշ տէր չունեմ:

Փող ես ուղում, քեզ փող տամ,
Ոսկի տամ, ոչ թէ հող տամ,

Թէ զրան էլ դայիլ չես,
Հողիս հանեմ քեզ փոխ տամ:

Աչքերդ շատ չալ-չալ ա,
Ամեն թշիգ մի խալ ա,
Ա՛խ, էն օրը երբ կգայ,
Գլխիդ քցես ալ փալա:

«ԿՍՅՆԻ ՍԷՅՐ ԱՆԵՄ»

Արի էրթանք սարը սէյրան,
Դու գըլմանիս չօլի ջէյրան,
Սէֆիլ տղէն քեզի հէյրան,
Կայնի սէյր անեմ, սէյր անեմ,
Բօյիդ հէյրան եմ, հէյրան եմ:

Դու ման կգաս վէրի—վէրի,
Կրակն ընկել սիրտս կէրի,
Քու մօրն ըսա՛ մէկն էլ բերի,
Կայնի սէյր անեմ. . .

Դու ման կգաս կտրները,
Սաղրի մաշիկ կըրնկները,
Գիւլարաթին պըրնկները,
Կայնի սէյր անեմ. . . .

Դու ելել ես կերթաս ի բէր,
Ոչ բէրն ըլնի, ոչ բէրատէր,
Ինձի թողիր խեղճ ու անտէր,
Կայնի սէյր անեմ. . . .

Դու կայնել ես լուացք կանես,
Չամամ ծծերդ բաց կանես,
Ինձ տեսնելիս սուտ լաց կանես,
Կայնի սէյր անեմ. . . .

1) «Սօնա եար» կրկնել ամեն մի տողի վերջը:

«ՏՆԿՈՋ ՔԵԼԷ, ԵՆՐ ԶԱՆ»

Արի, սիրելի ջան,¹⁾
 Տնկող քելէ, եար ջան:²⁾
 Կայնել ես նաւի վրէն,
 Չինարի ծառի վրէն,
 Փինս ֆասը թէքել ես,
 Անկլիկ քեանքիւլի վրէն:

Իմ եարն ընծի եար պտի,
 Չեռումը ֆանար պտի,
 Իմ եարի կանգնած տեղը
 Մեկ չինարի ծառ պտի:

Արագի մէջ սաչաղ ա,
 Գառի ոտը դապաղ ա,
 Հրեղէն ձին հեծնելիս,
 Աստուած բանդ յաջողա:

Սարը կոխել ա դուման,
 Գտակղ աժի մի թուման:
 Սէրդ սրտիս մէջն ընկաւ,
 Աստուած վկայ, անգիւման:

Փամի պատը տաշած է,
 Քեզի վրէն քաշած է,
 Աամբիդ պաշարի համար,
 Չաղ հաւերը խաշած է:



«ԿԵՐՃՐԼԻԿ-ԿՈՒՐՃՐԼԻԿ»



արակ ճամփէն մտել եմ,
 Վայ գիտի զալըմ,¹⁾
 Կորցրածս գտել եմ,
 Կարճըլիկ — կուրճըլիկ փնջըլիկ Գուլէ²⁾
 Սրտիս սիրածն ինձ տուէր,
 Մի ասէք թէ փթել եմ:

Արեւ գնաց մտաւ,
 Սիրած սիրածին գտաւ,
 Թէգ արաւ, ելի էրթանը,
 Պահած զատերս փտաւ:

Աղչի, արի մեր բաղը,
 Պոկեմ շամամի թաղը,
 Քո երեսի շաֆաղը,
 Հանել ա սրտիս զաղը:

Մի բարձ եմ արել իմն ա,
 Մինն էլ եմ արել իմն ա,
 Գեանջու քեարվան զալիս ա,
 Միջի թաւատն իմն ա:

ԲՈՐԻԿ ՄԻ ՔԵԼԷ

Բորիկ մի քելէ, վայ, փուշ ա,¹⁾
 Սիրունի պաքն անուշ ա,²⁾
 Այ տղայ հրեշտակ ես,
 Լուսնեակ ու արեգակ ես:

1) և 2) տողերը կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

1) 2) կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Մէ եար ունեմ աւշի ա,
Մէչքը բարակ զամշի ա,
Չը գիտեմ անըմն ինչ ա,
Մի գեղի բօյախշի ա:

Եարս նստել ա զօշկին,
Ուշ ու միտքը փեշակին,
Խմել ա նռան զինին,
Հոտ կանէ մանիշակին:

Իմ աղբէր ծառի տակին,
Սաղմոսը կռան տակին,
Սաղմոսը գիր ա դառել,
Լեզուն բիւրբիւ ա դառել:

Մեր տան յետնէն բաղչա կայ,
Բաղչի միջին ռեհան կայ,
Ռէհանը քաղող պիտի,
Ծոցումը խաղող պիտի:

Մամալար—[Թար մամալար,¹⁾
Ինձի[Թմա եար մամալար,²⁾

Բօյդ սալվի չինարի,
Կանչում եմ մօտս արի,
Աշխարքիս մալ ու մուլքը,
Անճախ քո հետ զին արի:

Կայնել ես դռան բաշը,
Սիրտս էլաւ հալ ու մաշը,
Արեւիքից արեւմուտք,
Եկել են քո թամաշը:

1 և 2 տողերը պատճէ կրկնել ամեն երկու տողից յետոյ:

Գլուխս եմ դրել քարին,
Սիրտս է լիքը արին,
Եարիս էփած մայլամը
Դրէք իմ սրտի եարին:

Սիրտս լցուել ա կրակ,
Ինձ աղատէք՝ թէ կարաք,
Թէ չէ՝ էգուց կըմեռնեմ,
Ես անխանչալ-անդանակ:

Անձրեւ, արի գեօլ արա՛,
Ղամաթներս բօլ արա՛,
Եարս ո՛ր կռնից կուզես,
Դիպաւ մեր տուն թօլ արա՛:

Դռան տակին թաք կացայ,
Երբոր գալըդ իմացայ,
Ոտներս սև ջուր իջաւ,
Ա՛խ մէկ ձէնդ չիմացայ:

Դեալ-գեալ եանըմա հա գեալ—գեալ¹⁾,
Դատան ջանըմա գեալ—գեալ²⁾



ու[Թանը հաց եմ բերել,
Բերանը բաց եմ բերել,
Տես քեզ ինչքան եմ սիրում,
Չկնով տապալած եմ բերել:

Չիթ մինթանէդ հնամաշ ա,
Ունքերդ դալամքաշ ա,
Ախշի, ինչ ես միտք անում,
Իմ ջանը քեզ փէշքաշ ա:

1) 2) Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Աշըղի պէս խաղ ասան,
Բիւլբիւլի պէս խաղ ասան,
Ինչքան որ գովես՝ աժեմ,
Իմ նանի ազիզ փեսայ:

Ամպեր, մի քիչ հով արէք,
Անձրե թափէք, ծով արէք,
Դէշ մարդու էլ ու գիւնը
Սե հողի տակով արէք:

ՈՂՁԻԿ ԵԱՐ ԱՆԵՆՔ



ու կայներ ես աղբրան ախան,
Փէլքդ կտայ արեգական,
Կտրմիր երեսդ արուն կաթան:

Աղջիկ եար անենք, եար անենք¹⁾
Եարալու սրտիս ճար անենք: ²⁾

Ջուրը կերթաս երիշ կանես,
Մահրամիդ տուտը քաշ կանես,
Դու ինձ հալ ու մաշ կանես:

Ջուրը կերթաս ջուղդ դորակով,
Սիրտս կերես բոց կրակով,
Քեզի փախցում ալ քուռակով:

Դու էլի ես կերթաս ածուն,
Սայէդ սիպտակ ինչ որ մաժուն,
Աչքով կանես շէկիկ լաճուն:

Դու էլի ես կերթաս յիգին,
Դու ու քո ջուխտակ տէգերկին,
Կը շորորաք ինչուր մարին:

1) և 2) Տողերը կրկնել իւրաքանչիւր տան վերջում:

Դու էլի ես կայնիլ ես դուռ,
Մէշքդ բարակ խանչալի բուռ,
Քեօ խօրն ու մօր աչքերն եկուր,
Տղէն տեսաւ, աղջիկն ետուր:

Դու յուստ կգաս, էն խընրսայ,
Խէրով էկար, բարով տեսայ,
Արի նստենք մանդը խսա,
Քողքըմ մտնենք խասար,
Կուզին խարիւր՝ կուտամ խաղար,
Բարով էղնեմ քեօ խօր փեսա:

ԴԷ ԴՆԱ ԿԻԴԱՄ

Դէ գնան կիգամ, վայ գնան կիգամ շուտ կիգամ,
Նխշուն միգարս առնիմ յիգամ, շուտ կիգամ:
Դէ գնան կիգամ, վայ գնան կիգամ, շուտ կիգամ,
Կարմիր սօլերս հագնիմ իգամ, շուտ կիգամ:
Դէ գնան կիգամ, վայ գնան կիգամ, շուտ կիգամ,
Խօրօտ բըճերս առնիմ իգամ, շուտ կիգամ:
Դէ գնան կիգամ, վայ գնան կիգամ, շուտ կիգամ,
Դլխուս լաչին առնիմ իգամ, շուտ կիգամ:
Դէ գնան կիգամ, վայ գնան կիգամ, շուտ կիգամ,
Թափալիկներս առնիմ իգամ, շուտ կիգամ:
Դէ գնան կիգամ, վայ գնան կիգամ, շուտ կիգամ,
Ապըռջաններս առնիմ իգամ, շուտ կիգամ:
Դէ գնան կիգամ, վայ գնան կիգամ, շուտ կիգամ,
Միգրիս կապերն առնիմ իգամ, շուտ կիգամ:
Դէ գնան կիգամ, վայ գնան կիգամ, շուտ կիգամ,
Էրեսնոցներս առնիմ իգամ, շուտ կիգամ:
Դէ գնան կիգամ, վայ գնան կիգամ, շուտ կիգամ,
Դեզ ու դեզվիրս առնիմ իգամ, շուտ կիգամ:

ԴՈՒՐԳԵԱՐ Է ԱՂԲԷՐՍ

 ուրգեար ուրգեար է տղբէրս¹⁾
 Ստօլ շինող է տղբէրս²⁾,
 Էլայ քիւմբէթի վրէն,
 Նայեցի ներքի վրէն,
 Տասներկըսնոց, չորսնոց,
 Էն էլ դօլվաթի վրէն:

Եյ տղայ, հաղար ըլնես,
 Իմ աղբօր սաղար ըլնես,
 Թէ ինձնից ջոկ եար բռնես,
 Դու սրտապատառ ըլնես:

Ղշեր, թևերդ բացէր,
 Ազիզիս քեօլկա արէր,
 Բարակ քամին որ փըշի,
 Դուք հետը նանիկ արէր:

Աղբէր, եօլտաշներդ եկան,
 Եօլտաշներիդ ես զուրբան,
 Նրանց միջի պզտիկը,
 Ինձ արեւ ա հոգեհան:

Շըխ-շըխ քիլագուկ ոլընայ—ոլընայ¹⁾
 Սալլանէր հտիւս եօլընայ—եօլընայ²⁾



արս զրկել եմ թըթի,
 Աղշի, քու վիզը փըթի,
 Որտեղ խաղալու գնաս,
 Ման արի եարդ գտի:

1) — 2) Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

1, և 2 Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Մազերդ ոլորուել ա,
 Աչքերդ բոլորուել ա,
 Երեք օր է չեմ տեսել,
 Իմ սիրտս մոլորուել ա:

Երկինքը կամար կապեց,
 Սե մազերս սպիտակեց,
 Փիս մարդի սառ խօսքերը,
 Քեզ ինձանից շուտ ջոկեց:

Աչքերդ դեզ ես զրել,
 Ինձ գժի տեզ ես զրել,
 Անգգամի խօսքովը,
 Իմ վրա մեզ ես զրել:

Ղուշը կշտովս անց կացաւ,
 Թռաւ զնայ—անցկացաւ,
 Էրկուսիս մէջ տեղովը
 Ա՛ր սրտամեռն անցկացաւ:

ԶՕՄԱ ԶՕՄԱ



Ինչ ու զինչ տամ լողվորչուն,
 Զօմա զօմա էր:

Զիմ լաճն տամ լողվորչուն,
 Քեօմա քեօմա էր:

Ոչ էառ ոչ խաւեցաւ,
 Զօմա զօմա էր:

Ոչ էլսան ծամկալ ծովէն
 Քեօմա քեօմա էր:

Զինչ ու զինչ տամ լողվորչուն,
 Զօմա զօմա էր:

Ձիւմ շապիկ տամ լողովորչուն,
Քեօմա քեօմա էր:

Ոչ էառ ոչ խաւնեցաւ,
Ձօմա զօմա էր:

Ոչ էխան ծամկալ ծովէն,
Քեօմա քեօմա էր:

Ձիւնչ ու զիւնչ տամ լողովորչուն,
Ձօմա զօմա էր,

Ձիւմ մէջկապ տամ լողովորչուն
Քեօմա քեօմա էր:

Ոչ էառ ոչ խաւնեցաւ,
Ձօմա զօմա էր:

Ոչ էխան ծամկալ ծովէն
Քեօմա քեօմա էր:

Ձիւնչ ու զիւնչ տամ լողովորչուն,
Ձօմա զօմա էր:

Իմ մէջքէս վեր տամ լողովորչուն,
Քեօմա քեօմա էր:

Ոչ էառ ոչ խաւնեցաւ,
Ձօմա զօմա էր:

Ոչ էխան ծամկալ ծովէն,
Քեօմա քեօմա էր:

Ձիւնչ ու զիւնչ տամ լողովորչուն
Ձօմա զօմա էր:

Լուսնեակ զիշեր պագ մի տուի,
Քեօմա քեօմա էր:

Խեռ էխան ծամկալ ծովէն,
Քեօմա քեօմա էր:



Ես օր մէկ զիւրարմ տեսայ,
Ձիւիֆները ուրած էր,
Բարե տուի, բարե չառաւ,
Մագեամ ինձն խոոված էր:

Դու հագել ես ալի լման,
Սիպտակ բօխախ խալի լման,
Տասնընգամ լուսնի լման,
Երեսներդ բոլորած էր:

Ունքեր ունիս կամար կամար,
Բարակ մէջքդ օսկէ քեամար,
Ձէյրօն կերէր քեզի համար,
Խելքը զլիւին մոլորած էր:

ԴԷՃԷ ԶԸՆԿ—ԶԸՆԿ

Ես օր ուրբաթ ի պաս ի,
Դէհէ զընկ-զընկ, զէհէ ջան')
Սրտիկ արծըլի թաս ի,
Դէհէ զընկ-զընկ զէհէ ջան
Սրտիկ, մալուլ մը կենայ,
Աշխարհը մարդի չի մնայ:
Սրտիկ սինի սնտուկ էր,
Կոտրաւ էն սինի սնտուկ,
Թռաւ էն կարիպ ճնճղուկ,
Թռաւ պանծրիկ սար էլաւ:
Էլնիմ պանծրիկ սարերաց,
Խովիւ ուշաթափ էնեմ,
Կոպալ ուր ձեռքէն առնեմ,
Թալեմ քիւրեն երեցիմ,

1 Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Մոխիրդ իտամ ոսկերչուն,
Մախչայ շինէ իմ ճակտուն,
Մատնիք շինէ իմ մատուն,
Կուպչայ շինէ իմ ձեռքուն,
Քամար շինէ իմ մէջքուն,
Գուլպազ շինէ իմ ոտքուն:
Ազբէր գիւ արի գնա,
Հապիկ քեօ խան ու գնա,
Մողքաջրով վլանամ,
Թափ տամ վէր կունի փռեմ,
Եարիկ տիւ արի գնա,
Հապիկ քեօ խան ու գնա,
Սապօն ջրով վլանամ,
Թափ տամ վրը ծառին փռեմ:

ԿՈՒԼԱՐԵՑԻ ՈՐՇԵՍԻ ԵՐԳԸ



« Արշակն եմ Կուլարեցի,
Գիշեր ցերէկ լօղկէն մացի,
Ճարս կտրաւ նստայ լացի,
Եարիս խօսքեր սրտիս մացին:
Շօրօրա, Սալաթ, շօրօրա,¹⁾
Լօղկէն Արշակին կօրօրա²⁾

Ես արշակն եմ կարմիր արով,
Կը խեղդուիմ ձկան յարով,
Քաղցը բալիս եմ կարօտով,
Եարիս ասեմ մնաս բարով:

Քամին էկաւ էրան-էրան,
Լօղկէն տարաւ ծովու բերան,

1 2 Կրկնել իւրաքանչիւր տան վերջը.

Դալդէն հասուց յանդունդ բերան,
Արշակի տուն սեւաւորան:

Բերէք զրէք իմ ջուխտակ սօլ,
Էրթամ տեսնեմ Արշակիս գօլ,
Սեցած սրտով, մտքամոլոր,
Ճամփաւ էրթամ ոլոր-մոլոր:

Ծովի զրազ մանդր ուռ ա,
Սալաթը ջիգեարից ծուռ ա,
Ծովի զրազ մանդր քար ա,
Արշակը միջին անճար ա:

« Բ Ե Ծ - Բ Ե Լ Ե Բ Ե Ն Ն Ե Բ Ը . . . »

Ե լել եմ Արաղեազը,
Վայ լէլէ լէ լէ լէ լէ լէ.¹⁾
Չեմ առնի մալամազը,
Բաշ-բալաքանները զարկեցէք:²⁾
Ախշի նստել ես բրջին,
Կը գործես խալի, խուրջին,
Ախշի, քու ծամը կտրի,
Խաբարդ է հասել Գիւրջին:

Աչքս քցել եմ սարին,
Ոտքս տուել եմ քարին,¹⁾
Աստուածներդ օր սիրէք,
Բան մի ըսէք իմ ետրին:

Մտիկ արէք էն զշին,
Ոտը զրել ա փըշին.
Գլուխս զուրբան կտամ,
Չալ աչքին, կարմիր թշին:

1) 2) Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Ընծրե էկաւ շաղալէն,
 Ուռ ու տերեւ զողալէն,
 Հրէս էկաւ իմ աղբէր,
 Ալ ձին տակին խաղալէն:

ԱՐՄՈՒԹԼԵՅՑԻ ԽՐԶՈՅԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲՈԹԻԻ

Ես խաչօն եմ Արմուծիցի,
 Ոչ բարով արտը գնացի.
 Եաման Խաչօ, եաման¹⁾
 Եաման եթում, եաման²⁾

Երեւնու էկաւ նուռը,
 Սապապն էկաւ էն ճմուռը:

Խեղճ խաչօի ոտներ բորիկ,
 Բուկը քցին քեանդը գոտիկ:

Բուկը քցին քեանդը գոտիկ,
 Քաշին տարան չակլին մօտիկ:

Համբարձման իրան օրը,
 Հօտղըները թափան ձորը:

Վարդկորի իրան օրը,
 Հէքիմն էկաւ լացեց փորը:

Յակօն կայներ գառ կը խուզէ,
 Մաքօն կայներ արունք կուզէ:

ԶՈՒԼՈՒ ԵՐԳԸ

Ես գուլօն եմ Մաստարեցի,
 Հինգ օր արի մեր տուն կեցի:

Դէմ աղօթրան եկեղեցի,
 Հաւար Զուլօ, մաղաթ Զուլօ,¹⁾
 Սանի գեօրդում եանդմ Զուլօ:²⁾

Մեր տան յետե ջուխտ մի պերան,
 Բոլոր յերես պղտի բերան,
 Քո սիրողիդ դռներ վերան:

Մեր տան յետե արտ մի եօնջա,
 Թխիմ դաթա, ճամբիմ խօնջա,
 Առնիմ Զուլօն շրջիմ գեանջա:

Դու կայնել ես դարգեանի դուռ,
 Մէջքդ նմանի խանչալի բուռ,
 Զիս էրեցիր սաւալու ծուռ:

Աշխարհ—ալամ քեզ կ'գովեն,
 Օրմ չեւար սէլի հովեն,
 Ծամերդ քաշած Վանայ ծովեն:

Հէլէլ վէլէլ Մսրու գըմէշ,
 Իմ ձեռ թալիմ Քեալաշի փէշ,
 Զուլօն էդնի ընձի փէշքէշ:

Արեն ընկաւ խամուր բերդին,
 Քու սէրն ընկաւ մէջ իմ լերդին,
 Ես քեզ սիրեմ թող զիս քերթին:

Տանքով ընցայ ճրագն էր վառ,
 Դու կու մանիս Զօղանի գառ,
 Օրբեքրցի արի զիս առ:

Զաֆար աղի նըխշուն յօղէն,
 Նոր իմ էկի Զուլօի մօտէն,
 Զը կշտացայ անուշ հոտէն:

Ջաղցի բոլոր յըմէն ուռ էր,
Աշխար կասէր Ջուլօն ծուռ էր,
Մէջ իմ սրտին լալ ու դուր էր:

Թունդիր վառի էղեր է մուխ,
Կապե փուշին թորկեր է պուխ,
Ունքերդ կամար՝ աչքերն է թուխ:

Տանքով ընցայ թափ քելեցի,
Լանդով զարդի, դերթիս բացի,
Եարս տուն չէր նստայ լացի:

ԱԶՈՒ ԵՐԳԸ

Ես ինչ կենեմ կով ու կթան,
Որ մենք չունինք չութ ու գութան:

Ազի, ազի, ազի, ազի,¹⁾
Ազու դարդերն էր սարերով²⁾
Անուշ, անուշ, անուշ, անուշ,³⁾
Ջահել եմ, ջիւան եմ, չեմ էրթայ,⁴⁾
Ազի ջան⁵⁾:

Անարտո կաթ Աստուածածին,
Գու սաղ պահէ նանի բալին:

Արեն ելաւ կամար կամար,
էս լուրն էլաւ մեզի համար:

էլ մենք չունինք մխիթարանք.
Երկնուց գետին ընկանք—կորանք:

Սասունայ սարերը փուս էր,
Խեղճ Մշեցուն աչքի լուս էր:

1 2 3, 4, և 5 տողերը կրկնել ամեն տան վերջը:

Խաշը տարան քցին ջուրը,
Նոր էկաւ մեզի էս լուրը:

էկան զրեցիս ձիանը,
Տաճկից էղաւ մեր զիանը:

Ղշերն էկան ծառին թառան,
Անուշ բալիս ձէռնէս առան:

էլ ֆիդանս, մեր տուն չկայ,
Գիշերն աչքերս էլ քուն չի գայ:

Ալ քողքով հարսը տուն մնաց,
Բալիս տարան՝ սիրտը զնաց:

Խապար արէք մեր ճայրիկին,
Մէկ ջուր լցնէ էս կրակին:

Ես զնացի ղեռ քնած էր իմ եարը,¹⁾
Վարդն երեսին քրտնած էր իմ ջանը:²⁾

Ես մի անդալադ դուշ եմ,
Թայերիս մէջ նմուշ եմ,
Ինչ հարս աղջիկ որ տեսնես,
Ես բոլորից անուշ եմ:

Մեր գետը վարարել ա,
Սիրտս հետը տարել ա,
Ինձ պէս ջոմարդ աղջիկը,
Ծագկի պէս սալարել ա:

Կարմիր ազլուխը ձեռիդ,
Ալ բինիշը կռներիդ,

1—2. Գրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Զինաւոր Սուրբ Սարգիսը,
Բալքի հասնի հաւարիդ:

Սիրտս արնով լցրեցիր,
Կրակով խորովեցիր,
Աչքդ դուրս գայ, այ պըլոր,
Ի՞նչ շուտ ձենդ քցեցիր:

Այ գիշեր, տարի դառի,
Կերս թող ընի գարի,
Մենակ եարս ինձ հըմար
Սրտով կայնի իրխարի:

Այ աղջիկ, այ աղջիկ մեր կտրուլն արի, ¹⁾
Վայ գեալին, վայ գեալին ինչիտմա մանի²⁾:

Ես մի կանաչ խիար եմ,
Քու ջանին իսթիար եմ,
էրթաս — էրթաս, յետ կայնես,
Իմանաս՝ բէլու եար եմ:

Նագլու ջանան շորորալով,
Դու էլել կերթաս սէյրան,
Կաքաւի պէս սաքմիշ կ'լինես,
Կը նմանիս եղնիկ — ջէյրան:

Քաղցը լեզուդ պալի պալ է,
Թուխ աչքերդ դաշ ու լալ է,
Մէկ չինարի սալվի տալ է,
Տեսնողն կ'լինի բօյիդ հէյրան:

Տուն եմ շինել գետափին,
Բաղ եմ քցել առաջին,
Եարիս հետ քջիջում եմ,
Նստած ծառի շուաքին:

1 2 Կրկնել ի տաքանչիւր երկու տողից յետոյ:

Մի թռչուն սև թևերով,
Երգեց պէս — պէս ձևերով,
Ասաւ-խելօք մարդ քիչ կայ,
Աշխարհ լի է խևերով:

« Զ Ո Ն - Ի Մ Ո Ն »

Եւ երթիս երթիս, տփի,
Ջան-իման, ջան-իման¹⁾
Եարս տուն չէր նստայ լացի.
Ջան-իման, ջան-իման²⁾
Չինար բօիդ ես դուրբան³⁾
Ջան-իման, ջան-իման,⁴⁾
Սեւ աչերուդ ես դուրբան⁵⁾:

Դու յոստ կիզաս, դու խլաթա,
Բոլոր էրես՝ լմանի վաթա,
Պագիկ մի տո՛ւր տամ զօլաթա,
Կանչիմ եար արի շուտ արի:

Դու յոստ կիզաս, դու խա գեղու,
Դու կու քելիս ինչ օր մեղու,
Պագիկ մի տո՛ւր տանիմ դեղու,
Կանչիմ եար արի, շուտ արի:

Արի էրթանք Կոնկու-սար,
Բերդ մի շինինք մտնանք խսար,
Խարուր կուզին կիտամ խազար,
Թուխ աչքերուդ խաթրու խամար:

1). 2) 8. 4 և 5 Կրկնել առաջին և երկրորդ տողից յետոյ:



«ՈՒՆՋՈՒՄԻՒՓՈՒՆՋՈՒՄԻՒՄ ԻՄ ԵԱՐԸ»

Ելանք սարերը մօտիկ,
Ունջուխի-փունջուխի իմ եարը,¹⁾
Չունը էկել է գօտիկ,
Նայ նա նայ, նայ նա նայ, նայ նա նայ,²⁾
Ախչի, դու ինչ խօրօտիկ,
Արի մեր դուան մօտիկ:

Ախչի, շատ մազ ունես,
Սօղան ու փարուազ ունես,
Խօսքիս ջուղար տալիս չես,
Ի՞նչ շատ էշխ ու նազ ունես:

Սարի թրթնջուկ թազա,
Մեղր ու շաքար բեզ մազա,
Ինձ պէս նազանի աղչիկ,
Քեզ պէս տղին ո՞նց սազա:

Աշխարհքի մալն ինչ կանեմ,
Արի քեզ սարը հանեմ,
Թէ թևերս բեզարեց,
Գլխիս վրա կը տանեմ:

Իմ սրտիս դադ մի անի,
Ջիգարիս աղ մի անի,
Չեր դուանը, այ աղջիկ,
Ինձ տուժսաղ մի անի:

Էլի պարը բոլրաւ,
Եարս մէջը մոլրաւ,
Կայնայ քարին դուշ էղայ,
Սիրած եարիս դուշ էղայ:

1) Չ. Կրկնել առաջին և երկրորդ տողերից յետոյ:

Ջրի մէջի ճիւ խոտը,
Ջան տղի անուշ հոտը.
Ջրի մէջին հաւուզ է,
Հաղինդ դանաւուզ է:

Ախչի, բինէդ Կողբայ ես,
Տեղն ու տեղդ սօխտա ես,
Ախչի, բախտըդ բացուել է,
Վախտ ու վազէդ լցուել է:

Ջրի վրա սազ պտի,
Իմ օրգակը դադ պտի,
Ի՞նչ եմ անում թուլունդին,
Իմ եարը շահպազ պտի:

ԵՎ ԵՎԼՈՒ ԵԱՐ, ԲԱՎԼՈՒ ԵԱՐ

Էլլու եար Բալլու եար,¹⁾

Ես բու սիրուդ վառել եմ,
Վաճառական դառել եմ,
Քեզ թանկագին առել եմ,
Ո՞նց ծախեմ էժան, զիլբար:

Գեղէն ձորէն քեայրուբար,
Սիրաս ընկաւ սրտէդ քառ,
Դու ինձ էղար հոգէառ,
Աչքերդ շամամ զիլբար:

Ջէյրանն ընկել է ձորը,
Խապար տար մօրը,
Կամ թող ձագին ազատէ,
Կամ սուրը խրէ փորը:

1) Կրկնել երաքանչիւր տողից յետոյ:

Քեալլա—դադէն արտ չունեմ,
Հալղը գիտէ դարդ չունեմ,
Դարդը ինձ տարել է,
Ջահել եմ խապար չունիմ:

ԻՐԱՆԻՄ ԵՄ ԱՂՋԻԿ

Ելնեմ ժուռ դամ քու ման գալած արտերը¹⁾,
Կարմիր քամին դիպչի մօրդ, այ աղջիկ.
Էրվում եմ, աղջիկ, վառվում եմ աղջիկ:

Դու խօսք տուիր ինձանից չը դատուէիր,
Թէ դատուէիր՝ հախ Տիրոջէն դատուէիր.
Էրվում եմ աղջիկ, վառվում եմ աղջիկ:

Թուխ ծամերդ լծափուին՝ դու ուլան մնաս,
Օխտը տարի եօրդան դօշկի մէջ մնաս.
Էրվում եմ աղջիկ, վառվում եմ աղջիկ:

Ախպօրդ չեմ ասի՝ որ մէկ ու ճար է,
Ջիւան ջանէդ մահրում մնաս, այ աղջիկ.
Էրվում եմ աղջիկ, վառվում եմ աղջիկ:

«ԿԱՅՆԻ, ՄԻ՝ ԳՆԱԼ ՄԻ՝ ԳՆԱԼ»

Եյ նազանի նազլի դիւրար,
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,¹⁾
Կայնի, մի՛ գնալ, մի՛ գնալ,
Ի՞նչ քաղցր զրից ես անում,
Կայնի, մի՛ գնալ, մի՛ գնալ:

1) Առաջին տողերը կրկնել:

1) Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Կաղըզվանու ամպի հովը,
Փերուշան ես, հալիդ դուրբան,
Վարդենքերի վանքի հովը,
Բռնած խաղցած պօրիդ դուրբան:

Քու ազգդ ջէյրան է գաթի,
Խելքս գլխէս տարար գաթի,
Պըռկըներէդ մեղը կաթի,
Խառումառ եաշմաղիտ դուրբան:

Սազ ու քեամանին կը ճընկայ,
Ես քու սիրուդ հիւանդ ընկայ,
Հարաւ քամին կը շնկշնկայ,
Ջարկէ գիլիֆ, տալիդ դուրբան:

Հագիլ ես ալվանը ռախտը,
Դիւպար, ընկայ ես քու բախտը,
Սէյրանից ետ գալած վախտը,
Մաս-բարուն բաշմաղիդ դուրբան:

*
* *

Ես գիշեր լուսնեակ գիշեր,
Ձունն էկել գետին նախշեր,
Դօշըդ դէմ արա պաշեմ,
Կեռ ունքեր, կարմիր թշեր:

Քամին էկաւ հով բերեց,
Եղը ծնաւ կով բերեց,
Քո ջահել ջանին դուրպան,
Քեզի ըստեղ ո՞վ բերեց:

Ժամի դուռը հինած ա,
Հինածը հատած ա,

Կարմիր մովը փռած ա,
Եարս տակին քնած ա:

Հով այվանը մտել եմ,
Ամպհովանիս գտել եմ,
Ամպհովանիս տամ փեշքեշ,
Էղնիմ հարան ու եօլտաշ:

Դուժանը վարենք պտերով,
Քեզ թուցընեմ ճտերով,
Ինձ քեզանից ջոկողին,
Խանչալն ընկնի կողերով:

Այ տղայ, հալ ու մաշ եմ,
Արի պատկերդ քաշեմ,
Ալ շորերս սև հագնեմ,
Երեք տարի քեզ կաշեմ:

* * *

Ես ձորն ի վեր ծնեփակ,
Դու լմանիս արեգակ,
Արեգակը դուրս գալուս,
Մէկ տեղ էրթանք դարը դուս:

Մուրազատուր սուրը Սարգիս,
Դու հասնիս մեր էրկուսիս,
Ջիւան ջաներս պահես,
Դուշմանի աչքը հանես:

Էս ճամբէքը ոլոր ա,
Ես քեզ տեսայ մոլորայ,
Մոլորիս մէկ ճար արան,
Ինձ էլ քեզ ընկեր արան:

Դու նստել ես դօշակին,
Ուշ ու միտքդ փեշակին,
Խմել ես նռան գինին,
Հոտ կանես մանիշակին:

ՀԱԽԱԼԻ



ժ սրտով սիրած նարս, ¹⁾
Ջանից քեզարած նարս: ²⁾
Էսօր էգուց է կիրակի,
Ըրի մեր տունը կիրակի.
Չեօիդ ջրից դու խմցրու,
Երդկի ճոթին ինձ քընցրու:
Ժամի դանից դուրս ես գալիս,
Լոյս երեսըդ չես ցոյց տալիս,
Բարե տուի ինչո՞ւ չառար,
Ինձի տեսար շուտ ետ դառար:
Ինձնից հեռու դու մի ման գայ,
Հալբաթ խօսքիս մէջ մի բան կայ,
Մօրդ բարե տուր ինձանից,
Թող ինձ չը ջոկի քեզանից:
Թշիդ խալին վարդ է նստել,
Չեր կտուրը մարդ է նստել,
Ճամբէս հեռու է, չեմ գնայ,
Սիրտս ուզում է քեզ մօտ մնալ,
Ինքդ անուշ, լեզուդ անուշ,
Խօսած խօսքերդ են քաղցր նուշ:



«ՏՈՒՆ ԱՐԻ, ՏՈՒՆ ԱՐԻ, ՏՈՒՆ ԱՐԻ ՆԱՐ»

Երթիկ էրթիկ բռնել ես,
էրթկայ տակին կռնել ես.

Տուն արի, տուն արի, տուն արի, եար¹⁾

Մթնել ա, տուն արի, անջիգեար եար²⁾

Կանչըմսմ, եար արի, եարալու եար³⁾

Ձէն տուի՝ ձէնս չառար,
Մագեամ ընձէն ջորել ես:

Ձուն դնեմ թաւէն խաշեմ,
Ելնեմ էրթիկը աշեմ,
Տեսնեմ եարս դալիս ա,
Ձորեմ չաքմէքը քաշեմ:

Հանդէն գաս գեղը մտնես,
Իմ քցած տեղը մտնես,
Ընձէն գիւման եար բռնես,
Բէմուրվաթ հողը մտնես:

Ծառներ, դուք ծիրան միք տայ,
ձղներ՝ դուք էլ բար միք տայ,
Ես դարիբ եմ, դոնախ եմ,
Դարդերս իրար միք տայ:

«ԷՐԵՒԱՆՆԱՆ Օ՛Յ—Օ՛Յ»

Երէւաննան օյ, օյ, օյ եար եարմ, օյ, օյ¹⁾
Դուրիմ բաշըմա դուրսան, քիրմա շալմ օյ, օյ²⁾
էրեան ասի եարս,
Բաղադ խուրմադասի եարս,

1). 2). 3). Գրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

1) և 2) տողերը կրկնել իւրաքանչիւր տան վերջում:

Չաքի, Չիրուան, Չամախի,
Թաւրիգ աղասի եարս:

Ըյ տղայ մեր գեղըցի,
Բերանդ եկեղեցի,
Կարմիր քարը տաշեցի,
Բօյդ վրէն քաշեցի:

Դռանս փակ շեմակալ,
Խնձոր քցեմ արի կալ,
Քրոջդ եարի հետը
Ինձ շինել ես քենակալ:

Աղլուխս լու՛ն, դարկի,
Ախշի, դու ծաղկին պարկի,
Հէրիք հոգեհան անես,
Կամ ինձ սիրի կամ թարկի:

Լուսադէմին քուն կուգայ,
Կէս գիշերին տուն կուգայ,
էրուած ու վառուած եարիս
Սրտիցը արուն կ'գայ:

ԱԾԽԵՆԻ ԵՐԳԸ



ալիշու ճամբէն դուզ ա,
Եար ամման, ամման, ամման, ամման,
Էյ ամման, ամման, Էյ ամման.
Անտոն կայնել Աշխէն կուգայ:
Խօրօտ էր Աշխէնը, Կօլօտ էր Աշխէնը:
Անտոնի ձիու բաշը,
Աշխէնին դրին նաշը:

Անտոնի դռան դռեր,
Աշխէնին տարան զիշեր,
Անտոնի ձեռի վարդը,
Մեռնէր Աշխէնի մարդը:

Քուչէքը լիքը — լիքը,
Ախի, առայ քու միտքը,
Չեռով կանեմ, քեզ արի տես,
Վալայ, մատանի կտամ քեզ:

Աշխէնի կաքաւու քերք,
Տարաւ Անտոնի գլխու խելք.
Աշխէնի ծոցի նըռներ,
Անտոն զարկեց էլու դռներ:

Անտոնի ջէրի խաղար,
Աշխէնին քցեց բազար.
Անտոնի դռան գերան,
Աշխէնն ընկաւ բէրնէ բերան:

«Ծ Ա Մ Թ Ե Լ»

— Իմ գլխու փութէն կիտամ, (կրկնել)
Դէ խանա ծամթելն ի ծովէն.
— Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն.
— Իմ գլխու չանբար կիտամ, (կրկնել)
Դէ խանա ծամթելն ի ծովէն.
— Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն.
Եար ունի, եար ունի,
Եարսի եօթ ախպէր ունի.
Եար ունի, եար ունի,
Եօթն էլ զապած բանելու,

Եար ունի, եար ունի,
Նախրազնէն ուռի ծառ,
Եար ունի, եար ունի,
Խնձոր թալեմ արի տար,
Եար ունի, եար ունի,
Խնձորի կէս խածած էր,
Եար ունի, եար ունի,
Չորս բոլորն արծըթած էր.
Եար ունի, եար ունի,
Աղբէրս ուզեց չը տուի,
Եար ունի, եար ունի,
Անուշ եարի խրկած էր: ¹⁾
— Իմ խարի շապիկ կիտամ, (կրկնել)
Դէ խանա ծամթելն ի ծովէն.
— Իմ դօշի սրտնոց կիտամ, (կրկնել)
Դէ խանա ծամթելն ի ծովէն.
— Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն.
— Իմ թեի թենոց կիտամ, (կրկնել)
Դէ խանա ծամթելն ի ծովէն.
— Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն,
— Իմ վզի վզնոց կիտամ, (կրկնել)
Դէ խանա ծամթելն ի ծովէն.
— Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն.
— Իմ յերսի ճըթիկ կիտամ, (կրկնել)
Դէ խանա կայլն.
— Իմ սերսուփ ծամեր կիտամ,
Դէ խանա ելն.
— Իմ մէյդան ճակատ կիտամ, (կրկնել)
Դէ խանա ելն.

1. Իւրաքանչիւր ութ տողից յետոյ մի տուն հայլի սրա նման պէտք է յորդորակ առնել:

- Իմ կամար ունքեր կիտամ, (կրկնել.)
Դէ խանա ելն.
- Իմ ֆինջան աչքեր կիտամ, (կրկնել.)
Դէ խանա, ելն.
- Իմ մեղրիկ բերան կիտամ,
Դէ խանա ելն.
- Իմ բոլոր յերես կիտամ, (կրկնել.)
Դէ խանա ելն.
- Իմ շարմաղ ձեռներ կիտամ, (կրկնել.)
Դէ խանա, ելն.
- Իմ սիվտակ դօշ քե կիտամ, (կրկնել.)
- Իմ բօյն ու բուս լէ կիտամ,
Դէ խանա, ելն.
- Իմ ծամի ծանրութենէն, (կրկնել.)
Ծամթելս կտրե ընկե ի ծով,
Իմ ծամթելն խան տո՛ւր ի զիս,
Քու չըհել արեն յարով:
- Իմ ջուխտակ աչիչ վրայ,
Ծամթելդ խանեմ իտամ քըզի.
Ե՛ք կիտա յըն օրն Աստուած,
Օր էրանեկ իտան մըզի:

Ինձի տար քու հէրանց բաղ,
Նայ նայ նայ նայ նայ,
Զեր վարդերին դրել շաղ,
Վայ լէ լէ լէ լէ վայ լէ լէ լէ լէ,
Հէրդ ընձի ուղէ քեզի՝
Աստըծուն կանեմ մատաղ:

Փալաք զարկեց սրտիս նետ,
Արտասունքս էղաւ գետ.

Այ ախշի, հոգուդ մատաղ,
Ինձ էլ չես տանի քու հետ:

Գալըդ մէրըդ չիմանայ,
Քեզի խայտառակ կանայ,
Ախշի, դու ու քու Աստուած,
Ընձի տես, յետոյ գնայ:

Սափորը ուտիս դրի,
Էրթամ աղբուրը ջրի,
Ինչ փուշ գայ իմ առջևը,
Դուշմանիս սրտով խրի:

ԻՆՋԻՆԵՐ ԵՐՐ ԶԱՆ, ՓՈՒՆՋԻՆԵՐ ԵՐՐ ԶԱՆ

Ինչինար եար ջան,
Փունջինար եար ջան,
Ո՛վ էր բան ասե,
Սիրական եար ջան:

Յուշի յուշերով,
Կանուան դօշերով,
Քոյրիկիս տարան,
Խաժուժ աչերով:

Յուշի յուշական,
Փարփի փիրական,
Սիրեր եմ կառնեմ,
Սրտով սիրական:

Էս եանը քամի,
Էն եանը քամի,
Արաղի վրէն
Բանըմ ա գեամի:

Էս եանը նուշ ա,
Էն եանը նուշ ա,
Կողբեցին էկաւ,
Կարմրաթուղ ա:

Ծառիցը պոկի
Տասներկու տաշեղ,
Ախպէրս էկաւ,
Խնունը Մուշեղ:

Մանէթը խուրդի,
Որի արասի,
Էն տղին կառնեմ,
Անունն Ազասի:

Էս եանը մուխ ա,
Էն եանը մուխ ա,
Ախպէրս էկաւ,
Հագինը չուխա:

Արագի վրէն
Բանըմա լօղկա,
Սիրածս էկաւ,
Գլխին շլապկա:

Էս եանը բուլբի,
Էն եանը բուլբի,
Քաղքցին էկաւ,
Հաքինը չուլբի:

Էս եանը փուշտա,
Էն եանը փուշտա,
Ախպէրս էկաւ,
Ոտներին չուշտ ա:

Ինչինար եար ջան,
Փունջինար եար ջան,

Թէ կառնես մարջան,
Քե կասեմ եար ջան:

Էս եանը պատ ա,
Էն եանը պատ ա,
Քաղքցուն կառնեմ,
Որ փողը շատ ա:

Էս եանը պոպոք,
Էն եանը պոպոք,
Քաղքցին էկաւ,
Հազինը սապօք:

Էս եանը ըռեխ,
Էն եանը ըռեխ:
Եարս տուն էկաւ,
Հազինը տրեխ:

ԱՐԻ ՄԵՋԻ, ՄԵՌՆԻՄ ԲԵՋԻ

Ինձի համար լուսնեակ ես,
Նայ նայ նայ նայ նայ նայ նայ նայ,
Եազուլթից անգին ալ ես,
Արի մեզի, մեռնիմ քեզի, ¹⁾
Աստըծու զազարին գաս,
Թէ զուռը ինձ դէմ փակես:

Դուշ ըլնեմ գամ ձեր բաղը,
Ուտեմ ձեր հացն ու աղը,
Աստուած սիրես մի պահի
Ինձանից խօսքի սաղը:

Բաղի բոլորը պատ ա,
Մէկ խօսքդ ընձի շատ ա,

¹ Բոլոր տները պէտք է երգել այս տողերի նման:

Աստծու առաջին կտրենք
Մինչի համբարձում վատա:

Ընկած տեղից վերցրո՛ւ,
Ինձ ծըտի պէս թըրցրո՛ւ,
Բռնումդ ձուածեղ արա՛,
Մի քեօլկա տեղ կերցրու:

Կապել ես քիրման դօտիկ,
Մարդ չես թողնում քեզ մօտիկ,
Համ տեսքով ես, համ հոտով,
Քան ըղձաղիկ խօրօտիկ:

Դուշը ձեր կտրին թառեց,
Սէքս սրտումս սառեց,
Խեղճ Քեարամին Ասլիի
Բորբոք կրակը փառեց:

Ձեր բաղից խնձոր քաղեմ,
Հօրըդ գլուխը թաղեմ,
Քեզ մտեհան չեմ անիլ,
Աշխարքում քանի սաղ եմ:

Ելէք մանչեր, ելէք քօշերը բառնանք,
Էրթանք վազալ ու Դիլիճան ետ դառնան:

Թաւէն ծակ է, եղ չկայ,
Փեսէն եկաւ տեղ չկայ,
Փեսին շատ երես միք տայ,
Փեսին էյթիպար չկայ:

Յնծա՛ արաղի թասին,
Բորլիկ կուգայ հաւասին,

Գլխին զարկէք քօռանայ,
Ձեռքից առէք արասին:

Սիրտդ պինդ ա քարիցը,
Հարցրել եմ սարիցը,
Հոգիս էկել կպել ա
էդ քու սև ջիգեարիցը:

Ետ ես զալիս կալիցը,
Պաշեմ ճակատիդ խալիցը,
Ի՞նչ կըլինի, որ մի տեսնես,—
Հասկանաս իմ հալիցը:

Կայնել ես կանաչ տափին,
Առուի զրադին—ափին,
Իշալլա մեր չարկամի
Թւեերը պըտի թափին:

Շաման տաղդան ուշադի ¹⁾

Կոռնկ տաղդան ուշադի ²⁾

Քեանջանըն գեաղըկլարի,
Ջարեարդըր եղըքլարի,
Աղըմայ գիլար աղլարամ,
Եարընա գէղըքլարի:

Ղարաբաղդա բաղըն վար,
Մանըմ զարդա սալամ վար,
Բայրաղդար, չաք բայրաղըն,
Գեօզի եօլգան կալան վար:

Ղարաբաղդա բաղ օլմադ,
Բանի զարդա տաղ օլմադ,

1 և 2 Գրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Ղօնշի զըզի սաւանըն,
Իրագընդա եաղ օլմադ:

ԲԱՅԱԶԼԻՏՅՈՒ ԿՈՍՏՈՒ ԵՐԳԸ

Ես Կոստոնեմ Բայազէտցի—
Յիգեար ջան ¹⁾

Ոչ բարով Իգդիր գնացի.
Նարալու եմ նարօ ջան: ²⁾

Իգդիրու ճամբէն քար ու քռա,
Թուր ու դամէն կը ֆըռֆըռա:

Էսդին աղա, էնդին աղա,
Ջիւան ջանիս կտրին վաղա:

Ասատուրի յօդի մէջը,
Ղամէն զարկին սրտիս մէջը:

Էսդին բաղ էր էնդին բաղ էր,
Մարօն գիտէր՝ Կոստօն սաղ էր:

Էսդին դուզ ա, էնդին դուզ ա,
Դոխտուրն էկե ջանդակ կուզայ:

ԳՈՎԵՍՏ ԳԵՆԵՐԱԼ ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆԻՆ

Եկաւ հասաւ Վանայ ծովուն,
Ուրախութիւն բերեց Հայուն,
Ուրախութիւն Տէր Ղուկասով,
Դրախտական Տէր Ղուկասով:

1) 2) Գրկնել իւրաքանչիւր մի տողից յետոյ:

Օրդուն քաշեց սարի հովին,
Դուշմանի հետ քցեց դաւին,
Իէպ օսմանցուն էկաւ պատեց,
Ջարախանի ճամբէն փակեց:

Հայն էրեսին հանեց խաշը,
Կանչեց Լուսաւորչայ աջը,
Ջարկեց, ջարդեց առիւծ քաջը —
Դրախտական Տէր Առկասով:

Քրդեր լսին Արշակ անուն,
Փախուստ տուին կռուի պահուն,
Հաստատ մնաւ քնոր անուն —
Փրկեց մեզի սիրով անհուն:

ԹԱՔ ՏԱՆԷԻՆ ՏԱՆԷԻՆ.

Թաք տանէին, տանէին, *)
Ցախաւելը թագաւոր էնէին,
Թաք տանէին տանէին,
Դոմէշը կէսրար էնէին,
Մատակը կէսուր էնէին,
Օսկու տեղ փուշ դնէին,
Իշու պոչը փուսկիւլ էնէին,
Թնդըին չուլը քողկ էնէին,
Նալերը պողմախ էնէին,
Ղազլէ շապիկ հագցնէին,
Իշու կաշին գուլբա էնէին,
Ջէշիմը խրխայ էնէին,
Ալոփը զոգնոց էնէին,
Փատէ պաշմաղ հագցնէին,
Թնդըին խուփը բարձ էնէին,

*) Կրկնել իւրաքանչիւր տողի սկիզբը:

Իշուն չուլը դօշակ էնէին,
Խսիրը եօրդան էնէին,
Դոմէշին կոտորը զուռնայ էնէին,
Ալրմաղը դրմալիկ էնէին,
Էշը դաուլճի էնէին,
Նախըրը հարսնառ էնէին,
Կատուն սարկաւաղ էնէին,
Խորոզը ժամկոչ էնէին,
Քուղան կսլոտ էնէին,
Խաչերկաթը խաչ էնէին,
Խոտի խալի փռէին,
Խըսըրի տեղը դնէին,
Մեյմունի պէս խաղցնէին,
Վեց օխտ օր ծում պահէին,
Օրը տասը ժում ծեծէին:

ԷՂՆԻՆԷ ՍԻՐՈՒՆ ԵՐԲ, ԷՂՆԻՆԷ ԵՐԲ



ողբայ քարեր մազան ա,
Էղնինք սիրուն եար, Էղնինք եար,
Իմ եարն ինձի բազան ա,
Վայ լէ լէ լէ լէ լէ վայ նանէ ջան,
Ասին եարդ հիւանդ ա,
Մարալ եղը մատաղ ա:

Ախ էս կուռը էն կուռը,
Քաղեցի Գեանջա նուռը,
Ես իմ սիրածը չառայ,
Աչքս մնաց էն դուռը:

Ջաղացս ման եմ տուել,
Սիրել եմ ջան եմ տուել:

Օխտը տարի սէրութիւն,
Մէկ օր պայման եմ տուել:

Մեր կտրով քօշ ա էրթում,
Քօշ քօշի մէջ ա էրթում,
էրնէկ էն քւոր աչքին,
Օխտը աղբօր մէջ ա էրթում:

Հ Ա Ռ Ր Ր Ա Ն

Հաբըրըան, Եայի բոլոր կանանչ է,
Տունը մեզի ճանանչ է,
Թոփով շամամը կանչ է,
Ջանէ ջան, Իմ դարդ քեզի այան չէ:

Հաբըրըան, էրկէն գոմը սալել եմ,
Ալ ձին մէջը կապել եմ,
Ալ ձին ինչ կանէ նալը,
Ջանէ ջան, Սիրունն ինչ կանէ խալը:

Հաբըրըան, Աղչի արի էս ըզին,
էրկու չէյրան բուրդ գզին,
Սիրած սիրածին չեն տայ,
Ջանէ ջան, Մեղքը հօրն ու մօր վզին:

Հաբըրըան, Էլայ գնացի բերդը,
Քաշել եմ կաթի սերը,
Չը տուին հէրն ու մէրը,
Ջանէ ջան, Պարտական տէրտէրները:



Նարմ նանայ, խանում աղջիկ,
Ջանըմ նանայ, մարալ աղջիկ:

Ձամբորդի հետ խաբար արի,
Որ չը մնաս էկող տարի,
Ես մալ ու դովլաթ չեմ ուզում,
Կարօտ եմ մի սիրած եարի:

Չատ մարդիկ վրէս խօսացին,
Անմեղ տեղը բամբասեցին,
Իմ ոսկու նման անունը,
Լըբերը քարին քսեցին:

էս տարին շատ չոր տարի է,
Կերած հացնիւս գարի է,
Իմ քոռացած սև բաղդիցը,
Լնուշ հարս սափարի է:

Չատ ջահել ջիւաններ տեսայ,
Մէկին չարի ինձի փեսայ,
Մենակ կուգեմ ալապեօզի,
Տղէն միշտ հետս խօսայ:

Ինձ վառեցին ուրիշները,
Սիրտս ծակեցին փշերը,
Վաղուց տան-տեղի տէր դառան,
Իմ հին հարան եօղաշները:

Մատաղ եմ արել արի կեր,
Սրտով սիրածիս հետդ բեր,
Առանց նրան՝ կերած հացս
Կուլ չի զնայ իմ բկէս վեր:

ԼՈՒՍՆԵԱԿ ՊԱՏԻՆ ԴՊԵԼ Ա

Հունեաւի պատին դպել ա¹⁾
Բազն արեւով լցուել ա²⁾

Քաղած արար հաց տարայ,
Եարիս տեսայ՝ ետ դառայ,
Էս ի՞նչ բէրախդ եար դառայ,
Խնձոր տուաւ ես չառայ:

Գիրմ գրա՛ հարցրա՛,
Մինն էլ գրա՛ դարձրա՛,
Թէ որ քեզ աղջիկ չեն տայ,
Հայրաթ արա՛ փախցրա՛:

Ես սիրեցի խալիսը տարաւ իմ սիրած եարը¹⁾
Օրթէ չառնիմ, ես կը մեռնիմ, իմ սիրած եարը²⁾:

Լուսնեակն է կայնել դարին, (եար)
Պատկերըն է քու պատկերին,
Հունեակ ջան, թէզ մի էրթայ (եար)
Չուր մէկ լէ գալոյ տարին:

Հունեակը նոր է, նոր է,
Եարիս երեսը կոր է,
Կոր սուրաթին մեռնեմ,
Հագինը ավան շոր է:

Հունեակը էրթկով անցաւ,
Թմբկի ետն անցկացաւ,
Մեր հայրի սիրուն աղջիկն,
Ինձի ընչի՛ թէզ մոռցաւ:

1—2 Գրկենի իւրաքանչիւր տողից յետոյ:

1 2 Գրկենի իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Աչքերդ բոլոր բոլոր,
Ման կ'գաս իմ չորս բոլոր,
Բիւր աչքերիդ մեռնեմ,
Մի աշի խոլոր մոլոր:

Սիրուն ես ծաղկի նման,
Կապուտ ես լեզկի նման,
Բիրդան թռար ձեռիցս,
Թեաւոր հաւքի նման:

ԼԷԼԷ ԵԱՄԱՆ

Լէլէ եաման —
Դու էլի ես կերթաս ի բէր,
Լէլէ եաման —
Ոչ բերն ընի, ոչ բերատէր,
Հաւար Գուլէ, մատաթ Գուլէ:

Լէլէ եաման —
Տօ պստիկ խարս, նոր սիրյ տէր,
Լէլէ եաման —
Ապրի քու հէր, ջուխտակ աղբէր:
Հաւար Գուլէ, մատաթ Գուլէ:¹⁾

Առաւօտուն — բարի լուսուն,
Քո կոճկներ խարիր յիսուն,
Ես դուրբան եմ էտ քու տեսուն,
Չուր եր պահիս դու իմ բուսուն:

Մըր տուն, ձըր տուն մէկ դառապով,
Յեղնաս մտնաս կանանչ կապով,
Ձիրար սիրենր Աստուածն յապով,
Քըզի դուլ էզնիմ մարաբով:

1) Հետեւալ տները այս տան նման երգել:

Մըր տուն, ձըր տուն զիմաց զիմաց,
Հար եր աչօք էնիմ իմաց,
Իմ երեսի հայէն գնաց,
Աստուած սիրես մէ զոշըդ բաց:

ՏԱՐԱՆ—ՏԱՐԱՆ ԶԻՄ ԵԱՐՆ

Խնուս զեղի մէջ տեխը,
Հրամայեց մեծ շեխը,
Թորկեց ի լաց ու շիւան,
Եարսի տարաւ մեծ պեխը:

Տարան տարան զիմ եարն,¹⁾
Տարան զիմ մէկ ու ճարն,²⁾
Հաւար արէք Սարօին,³⁾
Տարան խօրօտ Վառօին:⁴⁾

Իմ եարն անմեղ ճնճողուկ է,
Եարա սիրտս զեղուկ է,
Մեծ պեխի սուր խանչալից,
Իմ սիրտ ճեղուկ, ճեղուկ է:

Եարիս ծամերն էր օսկի,
Դագմա չըր յիգէ խօսքի,
Զօռ, հա, զօռ քաշեց տարաւ,
Էն մեծ պեխը անհոգի:

Վառօ էր եարիս անուն,
Խող քաշեցի իմ գլխուն,
Էն ծուռ թուրը մեծ պեխի,
Պտրեց թելեր իմ մէջքի:

Մացի ողբալով լալով,
Դիլխիս մագեր փետեղով,

1, 2, 3 և 4 տողերը կրկնել ամեն տան վերջը:

Մեռայ էն օրից դէսը,
Քարերն քուերն ընկնելով:

ԽՈՏՈՒՋՐՅՈՒ ՊԱՐ-ԵՐԳ *)

Խոտուջույին ջույն ա մօտիկ,
Խայսնեյ կուգան մանյատօտիկ...
Ախչի, վայ այի, վայ այի,
Վայ այի, մեզի հետ պայ այի:

Բանձըյ այվանին չայդադ կասին,
Ջըյի փայշին պայտադ կասին,
Հաւի ձագին փիյիճ կասին,
Ծույ էյկթին խըյիճ կասին,
Պզտիկ հայսին նահամ կասին:

Սէյն ինչ ա, սավղան ինչ ա,
Աս պայի դայտան ինչ ա,
Բանձըյ ծայ, քաղցըյ պտուղ,
Օյ չիմ հասնի ֆայտան ինչ ա:

Պիճի չայէն ջույ կուգայ,
Քու մայդ ինձի դույ կուգայ,
Տայ-տայ, տույ-տույ, տայ Սանօսին,
Տույ-տույ, տույ տույ, տույ Քէյօբին...
Տէ թըյի տղաս, տէ թըյի օյթիս:

Հ Ա Ր Ս Ի Ե Ր Գ

Խարս վեր արի, նազ, մի անե,
Փեշերդ տո՛ւր վեր, թող մի անե,
Խարս վեր արի քեօ թախտէն,
Դանգատ մ'անէ քեօ բախտէն,
Խարս վեր արի քեօ յօղից,
Դանգատ մ'անե քեօ բաղդից:

*) Այս երգում ք. ո, ե, լ, փոխվում են յ տառի:

Դ Է Ր Ի Ք Օ



Իւրդա օլդում, սարի տէր, (կրկնել)
 Գեալան գէտան եարի տէր,
 Եաման եաման դերիկօ,
 Եիվան հաթի բէրիկօ,
 Յակօն սպանած զեատիկօ,
 Դատա սովի մամիկօ,
 Տայէ քանն ստակիկօ:

Ճրագ մը ձէթ վառեցի,
 Ղուծնի իշիկ կարեցի,
 Տարայ օթախ խակիցի,
 Թուխ—թուխ պեխեր սանդրեցի,—
 Բալաք աչքեր դեղեցի,
 Սիպտակ քեօլօզ դրեցի,
 Եազմա եալըխ կապեցի,
 Խրեղէն ձինը խեծուցի,
 Դիւքան բազար ճամբխեցի:
 Եաման եաման դերիկօ, եւ այլն:

Յակօն իլեր կերթայ բազար,
 Դուռէջ առջի խարիր խազար,
 Քեօ տուն չարի, մօ Ղազար,
 Ընչի թօրկիր Յակօն էզար,
 Եաման եաման դերիկօ եւլն:

Կեմայ վերե աղբիւր մի կէր,
 Յակօյի աչքեր սե ջուր իկեր,
 Յակօն յառուն թոնր ի,
 Մատօն փեշէն բոներ ի,
 Քեաղօն խանչար զարկեր ի:
 Եաման եաման դերիկօ եւլն,

Կեմայ վերե շիման էր,
 Քեաղօն Յակօ կսպանէր,
 Քեալամ ցորեն կ'կաման էր,
 Պճեղ մը սոխ կ'կաման էր,
 Քեաղօն Յակօ կսպանէր:
 Եաման եաման դերիկօ եւլն:

Կեմայ վերե չաղը էր,
 Յակօյի ջալլաթ հաղը էր:
 Եաման եաման դերիկօ եւլն,

Խաբար տարէք հարին մարին,
 Յակօ սպանած Կեմայ սարին,
 Գրոոց ընկե վանայ քեարին,
 Խաբար տարէք գեղի ուսին,
 Թուղթ մ'ալ խրկէք Կաթղկոսին,
 Գողեր ճամբիւր դնի շուտ կորուսին:
 Եաման եաման դերիկօ եւլն:

Խաբար տարէք Աւօին,
 Ջուզար տարէք Աւօին,
 Տուն աւրաւ Յակօյին:
 Եաման եաման դերիկօ եւլն:

Օյ, օյ, իմ անուշ եար, ¹⁾
 Զիս էրեցիր դարբէղար ²⁾

Մաղիկն առնեմ զամ յերթիս,
 Ախշի քնէղի զարթիս,
 Ծաղկով զարկեմ քո թշին,
 Գլօխդ կապեմ ալ փուշին:

Արտեր ցանեն կորնկան,
 Եարսի էկաւ վըր ծնկան,

1) 2) Գրկնել իւրաքանչիւր մի տողից յետոյ:

Աչքեր թալեց իմ յերես,
 Իմ մէր մնաց սեւերես:

Ռէսի կալ բոլոր պար,
 Սաւորուսի մէջ կու խաղար,
 Ծամեր թալուկ ուր յետե,
 Կու թըռվըռէր շատ թեթե:

Խանդուղ կաշնե ժամի դուռ,
 Գօտին զարկէ Վանայ նուռ,
 Մէկ կիշկէ, մէկ շօրօրայ,
 Տեսնողի սիրտ տորորայ:

Կանանչ շայիր՝ չիման ա,
 Խաղ կանչեմ եարս իմանայ,
 Գլօխ դռնէն հանէ դուռ,
 Բալքի իմ աչքեր գայ դուռ:

Խաքեր է կարմիր սօլեր,
 Ընկե անվերի չօլեր,
 Քընց բալու մեղր տնուշ ա,
 Ման կիգա քօշա-քօշա:

„ Զ Ա Ն Գ Ի Ի Լ Ո Ի Մ “



առիս տակը մանիշակ,
 Զան, գիւլում, ջան, ջան,)
 Իմ եարը բանց քեզ շիշակ,
 Զան ծաղիկ, ջան ջան, 2)
 Ութ թումանից անցկենամ,
 Քեզ կանեմ եարիս մշակ:

1) 2) Գրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Ծաղիկ ունիմ նարնջի,
 Այ տղայ, վեր արի փընջի,
 Իմ մէրը քեզ աղջիկ չի տալ,
 Քանի մանգաս ետընջի:

Ծաղիկ ունիմ ալայ ա,
 Ալա չի ալվալայ ա,
 Եար բռնելը լաւ բան ա,
 Բաց թողալը բալայ ա:

Այ օրօն օրօն ծաղիկ,
 Կարմիր ու տորան ծաղիկ,
 Ալվալայ խալխ եմ կիտել,
 Էն էլ քեզ օրօն ծաղիկ:

Այ օրօն, օրօն ծաղիկ,
 Կարմիր ու տորօն ծաղիկ,
 Տարէնը մի հետ կ'գաս,
 Գամ քեզ օրօն այ ծաղիկ:

Ծաղիկ եմ քաղել դեղին ա,
 Իմ եարը ձեր գեղին ա,
 Հել ու մեխակ շատ ունեմ,
 Հըրէ եարիս ձեռին ա:

Ջան—գիւլում կասեմ կ'շարեմ,
 Տոպրակը կածեմ կ'կարեմ,
 Կտրէ-կտուր ման կ'գամ,
 Քանց քեզ լաւը կը ճարեմ:



Ծաղկաձորը ձուն կուգայ,
 Ծաղկաւորը տուն կուգայ,
 Օձը տայ իմ դուռմանին,
 Սև խաբարը ընձի գայ,

Ես տներ պուճուր տներ,
Միջին կար օսկէ մներ,
Սուն ու գերան պար պիտէր,
Սրտով սիրած եար պիտէր:

Արեւ մէրէ-մէր ա,
Օշխարը, գառը անտէր ա,
Մէրաւորը մէրն ընկաւ,
Անմէրը ինչի տէր ա:

Թարաքամէն իր օրէն,
Տուէք մինթանիս քեօրէն,
Մինթանիս քեօրէն լէն ա,
Իմ սիրած տղէն էն ա:

«ԷՐԹԱՆՔ ՄԵՐ ԲԱՂԸ»

Եայնել ես ախա բախա,
Վայ լէ լէ լէ լէ վայ լօ լօ լօ լօ¹⁾
Լաչակիդ տուտը կախ ա,
Էրթանք մեր քաղը, անենք մեր խաղը²⁾
Ձէկ տղայ՝ սպիտակ աղջիկ,
Բռնել էք իրար ետիս:

Ոշխարն արել եմ դուզը,
Ջոկել եմ դարադեօզը,
Աղլուխդ զրկի նախշեմ,
Թափ տուր քեանքիւլիդ թողը:

Բաղի բոլոր պատ ա,
Հէրն ու մէրը ինչ դատ ա,
Ես սիրել եմ, ես կառնեմ,
Վերեւ Աստուած շրհատ ա:

1) 2 Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Տուն եմ շինել զանանայ,
Ղառղու կտամ դիմանայ,
Կուռղ մէկնի ջուրն ինձ տուր,
Խմեմ սիրտս հովանայ:

Բաղի միջին կայ համեմ,
Սիրտս սրտիդ մէջ քամեմ,
Բիւլբիւլ գառնամ, սրտիցդ
Մի կուշտ անուշ ջուր խմեմ:

«ԴԻԼԲԱՐ ՋԱՆ.»

Եայնել ես կազ կը մանես,
Դիլբար ջան, Դիլբար ջան,¹⁾
Դիլբար ջան, դօշդ մի ըսնայ.²⁾
Նշանլու սալդատ եմ, ես չեմ դիմանայ³⁾
Արեգակի նման ես,
Դուռը դիր ու ներս գնա,
Ջատ մարդու ճամբուց կանես:

Ախշի, արի ըստեղ կաց,
Խնձորով անեմ իմաց,
Մինչի երբ մտնես խոր քուն,
Համբարձումն էկաւ զնաց:

Ժամի դոնէն դուրս կ'գաս,
Ճրագի պէս լուս կ'տաս,
Ընձի մտեհան չանես,
Թէզ—թէզ իմ մօտս գաս:

Սիրունը սիրունի յօղէն,
Սիրունի կապի քեօրէն,

1 2 3 Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Սիրուն ջան, Աստուած սիրես,
Մի հեռանայ իմ մօտէն:

«ԴՕՆ—ԱՐԻ. ԴՕՆ—ԱՐԻ...»

Ելայնել ես եռուի վրայ,
Դօն-արի. դօն-արի, դօն աղբէր,¹⁾
Զինարի ծառի վրայ,
Էրկու քուր ենք, մէկ աղբէր²⁾
Փուսքիւլլի ֆաս ես գրել
Սատաֆ մազերիդ վրայ:

Գնացի չայը լուացք,
Սապօնս էր ոսկեջրած,
Իմ հէրն ու մէրն ինչ անեն,
Ճակատիս էս էր գրած:

Ղարաֆիլս դեղին է,
Զեռ քցածս դեղինն է,
Միսս ոսկուէս ջոկեն,
Մէկ կտորս էն աղինն է:

Էս գիշեր երազ տեսայ,
Արտերս վառած տեսայ,
Ամօթ քեզ, այ տղայ,
Քու ետքը տարած տեսայ:

Համբարձման վիճակ հանենք,
Մի լաւ կերուխում անենք,
Աշնան անուշ օրերին
Էհթիշամով քեզ տանենք:

1—2 Գրկնել առաջին և երկրորդ տողերից յետոյ:

Ելանանշ արտի քեանարը,
Ո՛վ ա տեսել իմ ետքը,
Քարափի գլխի ետքը,
Սարախտան քօչենք սարը:

Բոյով աղջիկ մի թռնի,
Բարով քո մարդը մեռնի,
Զեմ զըմըշի բան ասեմ,
Քամին թեւերդ տանի:

Կապուտ թայը տակիս ա,
Ալ բաղդատին բըկիս ա,
Իջայ չայը ջուր խմի,
Չէկ քեանքիւլ թեւերիս ա:

Քեարամ աղէն նուռ բերեց,
Ամէնքին էլ զուր բերեց,
Աստուած, մեռնեմ դարգեհտիդ,
Էս զուլումը ո՞նց բերեց:

«Ո՛ՐՏՈՒ Ա, Ո՛ՐՏՈՒ Ա ԻՄ ՋԱՆԱՆՆԸ»

Ելարմիր վարդը ջամով ա,
Ո՛րտի ա, Ո՛րտի ա իմ ջանանը,¹⁾
Սիրած ետքը համով ա,
Էս դարն անցաւ էն դարը,
Ի՞նչ կանեմ դունչի մալը:

Ղարաֆիլ եմ՝ տալ չունեմ,
Ղօշ իգիթ եմ՝ ետք չունեմ,
Ջրերն էկաւ առուրներ:
Գրող խեղդէ պառուրներ:

1 Գրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Այ տղայ, հուր ես — մուր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես,
Արի՛ գնանք ուխտ անենք,
Մեր դուշմանին խախը անենք:

Չատր եմ զարկել զարին,
Իրդար եմ տուել եարին,
Ի՞նչ կանեմ էն թուլանգը,
Ինձ տուէք մին ու ճարին:



Մարմիր վարդիս վար չունեմ,
Չիմանաս թէ եար չունեմ,
Գիտես թէ ես մենակ եմ,
Մակեար սիրելի չունեմ:

Սպիտակ ձին նալն ի՞նչ կանի,
Սիրունը խալն ի՞նչ կանի,
Քեզի սիրող իգիթը
Աշխարհի մալն ի՞նչ կանի:

Ամպել ա ամպատակին,
Ծունկս ծնկանդ տակին,
Ես քեզ ո՞րտեղ սիրեցի,
Մեխակի ծառի տակին:

Տեղ եմ քցել փոթ կ'ղայ,
Բարձ եմ զրել սօթ կտայ,
Մեռնեմ միջի քնողին,
Անուշ խնկահոտ կ'ղայ:



«ԲԵԼԻ-ԲԵԼԻ ԲԵԼԻՐ»

Եհանքիդ, արեւիդ մատաղ,
Բալի բալի բալըր եարօ ¹⁾
Կանանչ տերեւիդ մատաղ,
Նամակով յիշել էիր,
Ղրկած բարեւիդ մատաղ:

Կողբայ քամին բոլորաւ,
Եարիս բեխերը ոլորաւ,
Եարիս գրեցին սալպատ,
Սիրտս փորս մոլորաւ:

Այ տղայ, արի գնա՛,
Չապիկդ տո՛ւր ու գնա՛,
Լուամ լուամ չիստըկուի,
Վարդաջրեմ կիստըկուի:

Դու նստել ես գերանին,
Ղառղու շուին բերանին,
Ոսկէ դալթան եմ գործել,
Կարեմ ջիբիդ բերանին:

«ԼԵ ԲԵԼՍՈ ԼԵ ԼԵ»

«Անուշ եար ջան, դոնէն դուրս արի՛ աշէ՛, ¹⁾
Էս իմ ջիւան ջանս քեզի փէշքաշ է, ²⁾»

Փնջով ծաղիկ ձեռին բռնած,
Նազելով դէպ ինձ կուգայ,
Փայլուն ժպիտը երեսին,
Անուշ բարեւ ինձ կուտայ:

1) Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

1) և 2) Կրկնել իւրաքանչիւր տանից յետոյ:

Իմ վիրաւոր սիրտս դիպաւ,
Անցաւ—գնաց սուր նետը,
Սիրտս դիպաւ իրան քաշեց,
Ու առաւ տարաւ հետը:

Սարի դօշի վրայ սե աճալ
Բարդ—բարդ եղած կայնած է,
Սիրուն վարդի թփի տակը,
Նաշխուն հարս քնած է:

ՏԱՐԱՅ ՏԻԿՈ ՐԵՐՁԻՆԻ

Ես կ'ը խաղամ բէրզէնի,
Չալող չկայ բէրզէնի,
Տարայ տիկօ բէրզէնի,
Արէք տղէք, պար բռնենք,
Գոգոր չալէ խաղ էնենք,
Տարայ տիկօ բէրզէնի:
Արէք էրթանք մեր հանդը,
Էնենք ջաղացի բանդը,
Ըսենք անուշ բէրզէնի,
Բէրզէնի պէս պար չ'կայ,
Աղչկայ պէս եար չ'կայ,
Տարայ տիկօ բէրզէնի:
Բէրզէնին անուշ պար է,
Խաղ ասողը մէկ ու ճար է,
Բէրզէնի հայ բէրզէնի:
Կանանչ կալի քեանարը,
Պար է բռնել իմ ետըրը,
Անուշ խաղում բերզէնի,
Դէ թուէք, թուէք բէրզէնի,
Թուէք օր թէզ պրծնի,
Տարայ տիկօ բէրզէնի:

Ի՞ժալ էնենք, ի՞ժալ էնենք, ¹⁾
Մըր դարդ շատ է շխարհեր ենք: ²⁾

Մշու խայու դարտերն է շատ,
Խարուստ չը կան, զըմեն աղքատ,
Էսկի չկայ պահող մըր դատ:

Քուրդ մըզի թալան կիտայ,
Իմ մամ մըր տան կու մտմտայ,
Իմ ցաւերուն ճար չգտայ,...

Չկայ իմցող խայու ցաւը,
Մըզնէ լաւ է ճանճն ու խաւը,
Տաճիկ տարաւ խարսիս լաւը,...

Դոր օր գացինք՝ չը գտանք ճար,
Մշու խային չկայ սըթար,
Քուրդն էրաւ մըզի խող ու քար...

Մեր ձէն հասաւ յըմէն էրկիր,
Մըզի քողցուց քրդերու բիր,
Վիր գանգատ էնինք իզա դիր. . .

Խայերն իսկի չունին թասիր,
Չուր եր մնան աղքատ քասիր,
Ուր մալն էղնի քրդու նասիր, . .

ԱԼԱԳԵԱԶ ԲԱՆՉՐ ՍԱՐ Ա

Չաղացիս դուռը տարթ ա,
Կտուրը լիքը մարդ ա,
Չըէս եկաւ իմ ետըրը,
Դոտիկը լիքը վարդ ա:

1) - 2 Այս տողերը կրկնել իւրաքանչիւր տան վերջը:

Ջուր ա գալի լափ տալէն,
Էրկու խնձոր ծափ տալէն,
Հրէս եկաւ իմ ետըրը,
Թուխ գտակը թափ տալէն:

Կռան տակին քուսքի ա,
Կայնած աղէն ոսկի ա,
Ինձ մոռացել թողել ա,
Սիրուն եարս խօսքի ա:

Լուսնեակը բոլորել ա,
Իմ ետըր մոլորել ա,
Մոլորած ճամբին մեռնեմ,
Քեխերը ոլորել ա:

Սիրելի, ջուրը պաղ ա,
Ետը արի ղէմս խաղա,
Սիրել ենք իրար կառնենք,
Քանի դուշմանը սաղ ա:

« ԿԵՅՅԷ ՀԱՅՈՅ ՀԱԻԱՏԸ »

Կեցցէ Հայոց հաւատը ¹⁾
Կառնեմ Գիրքու թաւատը ²⁾

Սարէն կըգայ սառը ջուր,
Տղայ արի տար քու քուր,
Քո քուրն ինձի հաւան չէ,
Տար իձանից լաւին տո՛ւր:

Ծառ եմ տնկել քիրազի,
Գիշեր քնա՝ երազի,
Ընկերտիք, Աստուած կանչէք,
Ես էլ հասնեմ մուրազի:

1) — 2) Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Ուռի ծառը կանանչ է,
Չարդ ու բարիդ ճանանչէ,
Գող մարդկանցից հեռացիր,
Որ խիղճդ քեզ չի տանջէ:

Տուն ու դուռը աւելցի,
Սեղանս պատրաստեցի,
Եկաւ իմ սիրած ետըս,
Ելայ կողքին նստեցի:

Բոստանը համեմ ցանի,
Դարդս քամին թող տանի,
Արի գնանք, իմ ետը ջան,
Վարդերն անենք Անի:

Կ Ի ՏՆ Ի Ռ

Կորեկն օր ականջ քցեց դուս,
Անտրի կիտուռ կտրեց իր բուս,
Աւեր ուր տուն, խաւրէր ուր լուս...
Վայ լըմըն կիտուռ, վայ լըմըն, թըթուռ, ¹⁾
Աւերէր բու տուն, դրուէր բու դուռ: ²⁾

Կիտուռն էլաւ գնաց աղբին,
Կերաւ կորեկ, թորկեց իր պին,
Կոտմի չեղաւ տէնք սոխի գին...

Կիտուռն էլաւ գնաց խոփեր,
Կերաւ կորեկ՝ թորկեց չոփեր,
Սէլըմ փաշէն կասից թոփեր...

Կիտուռ գնաց Ամրէի դուռ,
Աստուած զարկէր, կոտրէր ուր ճուռ,
Ընձի չէնէր սաւղալու ծուռ...

1 2 Կրկնել իւրաքանչիւր տան վերջը:

Խարաբանէ, խարաբանէ,
Կարմնջի կողք կորեկ ցանէ,
Անտրի կիտուռ պղտիկ բան է: ...

Կիտուռն էլաւ գնաց Բաղնոց,
Կերաւ արտեր, մտաւ բարդոց,
Մզիկ էղաւ կրակ ու բոց:..

Կիտուռն էկաւ նըհանջ տարին,
Կտրեց կերաւ ցորեն, գարին,
Ջրկեց խղճուկ ըռընչպարին...

Կիտուռն էլաւ էկաւ Վանայ,
Քեալլէն քանդայ՝ դան, կը հանայ,
Դարման կուտէ՝ դան կտանայ...

Կիտուռն էլաւ գնաց Խնուս,
Կտրեց ցանած հացերու բուս,
Երկնուց, գետնուց կտրաւ մըր յուս...

Կիտուռն ուրին տուեց յեզեր,
Կերաւ ցորեն խոտի դեզեր,
Պըծաւ՝ իր թաթեր կ'լիզէր...

Կիտուռ գնաց դէպ Արզրում,
Արտեր կերաւ խորում—խորում,
Յառէջ էլաւ պրակորում...

Յոնգուց էկաւ դըխ Արփաչայ,
Դումրին ընկաւ կրակ ու վայ,
Կիտուռն էղնէր սատանի փայ...



ՀԱՌԸՐԲԱՆ

Հաըըըան հաըըըան հաըըըան քեզ դուըըան, ¹⁾
Հաըըըըան, օյ, օյ, հաըըըըան, օյ, օյ: ²⁾
Սինամ սարեր օյ, օյ: ³⁾

Իրկունը մութը կոխեց,
Դռները շուքը կոխեց,
Էրի թէ եարս տեսնեմ,
Խայալ խայալի կոխեց:

Ջուըն առայ ելայ դարը,
2՝տեսայ ֆիտան հարը,
Ֆիտան եարը ինձ տուէր,
2ը քաշեմ ահ ու դարը:

Ջուըը մտել եմ խոր ա,
Քաթան շապիքս նոր ա,
Խարար տարէք իմ նանին,
Դիար-դիար ես կօրայ:

ՀԱՌԸՐԲԱՆ

Հաըըըըան, չանէ չան, ¹⁾

Հաց եմ թխել գարի ա,
Իմ եարը սաֆարի ա,
Եար ջան սաֆարիդ դուըըան:
Խօսքերդ շաքարի ա:

Պուճուը աղջիկ սկաւոր,
Խալխի դռները սաւոր,

1 2 և 3 Գրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

1 Գրկնել իւրաքանչիւր տան սկիզբը:

Գնահ, մէրդ կանչում ա,
Թող ինձ չանէ մեղաւոր:

Ծառատակին ջուխտմ զօշ,
Մինը փնջած՝ մինը ոչ,
Աստուած, դարգեահիդ մեռնեմ,
Մընին կտաս՝ մընին ոչ:

Լուսնեակը պահ ա մտել,
Անուշ եարս չեմ գտել,
Աչքս արտասուք լցուած՝
Ես տեղաշոր չեմ մտել:

Բաղիդ մէջ կայ Լըկու ծառ,
Տղայ՝ արի ինձի տար,
Աստծուն մատաղ կանեմ,
Էրկու շիշակ, էրկու գառ:

Չատ մի անի վար ու ցած,
Ես քեզ վաղուց եմ տեսած,
Մենք իրարու նման ենք,
Մէկ խնձոր էրկու կիսած:

Նոր տնկած բաղի բար ես,
Մեզի թագա նուբար ես,
Անունիդ մեռնեմ, ջիւան,
Աշխարհին բարերար ես:

Փափախդ ծուռ ես դրել,
Գոտիկդ նուռ ես դրել,
Ծոցումս դեղին ոսկի,
Դու էրկու բուռ ես դրել:



Հ Օ Յ Ե Ա Ր



Հոյ եար, Ծաղիկ Ծաղկեվանայ ես,
Հոյ եար, Ասլըդ Երեանայ ես,
Հոյ եար, հոյ եար, ազիզ եար ջան, դուռը քաց, *)
Հոյ եար, հոյ եար, ոտներս—ոտներս ցրտուն զնաց:?)

Հոյ եար. Տարէնը մի հետ կ'գաս,
Հոյ եար, Մագեամ նուբարխանայ ես:

Ջուր է գնում արխումը,
Արըշում է չարխումը,
Էն օրին էրնէկ կտամ,
Ջոմարդ կանգնես խախումը:

Մեր բաղումը բաղմանչի,
Սալուի ծառին նման չի,
Չատ հարս աղջիկ դուրս էկան,
Մէկն իմ եարին նման չի:

Ա Ր Ա Բ Ե Ր Է Ն *)



Հալապօ, տարաս դըքօ, դադրավնագօ, բօզ
բըչանդ բօզ բը եք,
Եքեմը եքբը խուղան է մարվաթէ:

Հալապօ, տարաս դըքօ, դադրավնագօ, բօզ բըչէ, բօզ
բը դիւ,
Դուեմը դուզիլիխան, եքեմը եքբը խուղան է մարվաթէ:

Հալապօ, տարաս դըքօ, դադրավնագօ, բօզ բըչանդ, բօզ
բը սէ,

*) Այս երգը ժողովրդի մէջ ընդհանրացած լինելու պատճառաւ դետեղեցի
Երգարանիս մէջ, որի ճիշտ թարգմանութիւնը չ'յաջողուեց ինձ գտնել:

Սէնմը սէպարիզան, զուեմը զուգիլիլիսան, եքեմը եգրը
խուզան է մարվաթէ:

Հալապօ, տարաս դըքօ, զադըրավնագօ, բօզ բը չանդ,
բօզ բը չար,
Չարեմը չարբարէզան, սէնմը սէպարիզան, զուեմը զու
գիլիլիսան, եքեմը եքըր խուզանէ մարվաթէ:

Հալապօ, տարաս դըքօ, զադըրավնագօ, բօզ բը չանդ
բօզ բը պէնջ,
Պէնջեմը պենջէ շերան, չարեմը չարբարէզան, սէնմը սէ-
Պարիզան, զուեմը զուգիլիլիսան, եքեմը եքըր խուզանէ
մարվաթէ:
Հալապօ, տարաս դըքօ, զադըրավնագօ, բօզ բը չէ, բօզ
բը շաշ,
Չաշէման նիֆսալ թամամ, պէնջեմը պէնջէշերան, չարեմը
չարբարէզան, սէնմը սէպարիզան, զուեմը զուգիլիլիսան
եքեմը եքըր խուտանէ մարվաթէ:

ՀԱՅ ՆՈՒՐԱՐ

Հայ Նուրար Նուրար Նուրար, ¹⁾
Իմ քոյ քու քոյ քարէնքար, ²⁾
Հայ Նուրար Նուրար, Նուրար, ³⁾
Սարերու ծաղիկ Նուրար⁴⁾:

Յուշիկ քելա վըր պաղին,
Չընկնի կոտորի սըչբաղին,
Սըչբաղու ձէն անուշ ա,
Սարի թփիկ նմուշ ա:

Գնան, գնան, խըտ քե գամ,
Խըտ քու շուշի ձէնին գամ,

1 2 3 4 Այս գարձուածքները կրկնել իւրաքանչիւր երկդ. տողից յետոյ

Փառչիկ յըլնամ ու քե տամ,
Պաղիկմ առնիմ ու ետ գամ:

Գարաւ թռում քարերուն,
Յեկնայ, իջնայ դարերուն,
Խարսներ կանչիմ վըր ջրուն,
Պաղիմ ճակատ զրկիմ տուն:

ԴԻԼԵՐ ԹԻԼԱՆ ԾԱԼ ԷՐԱ

Հալ էրա, հալ, ծալ էրա,
Դիլբար, շիլան ծալ էրա:

Ես էլ կլինիմ քեզ փեսայ,
Դիլբար, շիլան ծալ էրա:

Խոտ կրերեմ Առնոսա,
Մէկ եարին աշով էրան:

Մէկ եարն էկաւ գատով խեա,
Մէկ եար էլի արի տես:

Մարդ չես գտնի կեօ իմ պէս,
Ինչ ես ասեմ դիւ գիտես:

Ման գալով երթաս Թաւրէզ,
Մարդ չես գտնի կեօ իմ պէս:

ՀՈՎ ԱՐԷՔ ՍԱՐԵՐ ԶԱՆ.

Հով արէք, սարեր ջան, հով արէք, ¹⁾
Իմ դարդին դարման արէք, ²⁾

Մեռայ Բաղը դնալէն,
Ջրերի հետ խաղալէն,

1—2 Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Ծառերին թուփ չմնաց,
Դարդիս դարման անելէն:
Հէր չունիմ ես, մէր չունիմ ես, եթում եմ ես,¹⁾
Անտէր եմ ես, խղճում եմ ես:²⁾

Անցայ արադն էն վաթան,
Փռել եմ թօփում քեաթան,
Ով որ իմ սիրածն առնի,
Պարեմ ազիզի պատան:

Ախչի շորերդ իսպահի,
Հինդու կարած լմանի,
Իմ զրկած բարենները,
Ծոց ու ջիբումդ պահի:

Բոյը բարակ շիմշատ ա,
Վիզը մի թիզ մի մատ ա,
Անուշ լեզուի խօսքերը,
Դիտես թէ սուր մկրատ ա:

Ջուր ունի կանանչ ատա,
Իմ ջանը ջանիդ բատա,
Դուռմանի վատ խօսքովը,
Ինձ մի ասիլ թէ եատ ա:

Հ Օ Յ Ե Ա Ր

Հօյ եար, ջանմ նա նայ¹⁾
Այազեօզ եար, ֆիտան եար:²⁾

Այ տղայ հուր ես, մուր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես,

1) — 2) Գրկնել իւրաքանչիւր մի տողից յետոյ:

1) — 2) Գրկնել երբեմն իւրաքանչիւր տողից յետոյ:

Մուղարլամ, թառլամ շոր ես,
Համբարձում գիշերն ուր ես:

Ծաղիկ եմ քաղել դեղին ա,
Իմ եարը ձեր գեղին ա,
Հէլ ու մեխակ շատ ունեմ,
Հրէ եարիս ձեռին ա:

Մեր տան ետնէն մի մառան,
Տղէքքն էկան ետ դառան,
Ձեռս տարայ թէ բռնեմ,
Դիփ լալ ու մարջան դառան:

ՀՕԴԱՆՈ ՋԱՆ, ՀՕԴԱՆՈ

Հօդալլօ ջան, հօդալլօ ջան, հօդալլօ,¹⁾
Հզլար շիրին դալալլօ ջան, դալալլօ,²⁾

Այ եար, այ եար կռնել ես,
Մըսրայ ազլուդ բռնել ես,
Բարե տուի առար ոչ,
Մակեար թարկս տուել ես:

Մեր տան տակին վար կանեմ,
Չալ ագուաին քար կանեմ,
Թէ իմ սիրածը ինձ տան՝
Դժուր թիւնս թարկ կանեմ:

Այ տղայ օտար լինես,
Սե հաւի կատար լինես,
Ինձ մէկ խումար եար սիրի,
Դու ճոթ ու պատառ լինես:

1) — 2) Գրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Քարափի ծէրից կանչի,
Թող դուշմանը ամանչի,
Ըմբրիդ մեռնեմ, թառլան եար,
Չինարու պէս կանանչի:

ՀՕՅ ՆԱԶԱՆԸՄ, ՆԱԶԱՆԸՄ

Հօյ նազանըմ, նազանըմ, ¹⁾
Գիւլ նազանըմ, նազանըմ: ²⁾
Աղչի մազերդ թուխ է,
Էս ինչ բարութի մուխ է,
Մուխ անողը քոռանայ,
Ինձի քեզի մօռանայ:

Եար ջան, դու բարով էկար ¹⁾
Կանանչ կալերով էկար, ²⁾
Կարմիր սօլէրով էկար: ³⁾

Մեխակի ծառ եմ տնկել,
Քեզ համար հիւանդ ընկել,
Օխտը տարի տեղումս
Ես մի կշտի եմ պարկել:

Գիւլս գիւլում ա դառել,
Եարս լէյլում ա դառել,
Ո՞նց ասեմ որ հասկանար,
Մի հատ զուլում ա դառել:

Թեզ թեխ մօտացնեմ,
Չեռզ ձեռիս կպցնեմ,
Մի կերպ դուրս արի դուռը,
Բալքամ թաքուն թուցնեմ:

1) 2) 3) Կրկնել իւրաքանչիւր տան վերջում:

ՀՕՓՕՂԼՈՒ ԳԵԱԴԱ

Հօփօղլու զեադա: ¹⁾ (կրկնել)

Հաց առայ թազա թազա,
Բօյը թամամ մի գազ ա,
Մէջն եմ դրել ձուածեղ,
Որ տանեմ եարիս մազա:

Հէրանցս դուռը փոս ա,
Հէրս շատ բաշլըզ գուզա,
Երկու հարուրն ինչ անեմ,
Հինգ հարուր էլ վրա դիր:

Կանանչիլ ա արտերը,
Թազացել ա դարդերը,
Թառամել ա վարդերը,
Իրար մի տու դարդերը:

Կանգնել ես պատի բաշը,
Սիրտս էլաւ հալ ու մաշը,
Արեւելից արեւմուտք
Եկել եմ քու թամաշը:

«ՇԻՐԻՆ»

Վայ լէ լէ լէ լէ Շիրին-Շիրին, ¹⁾
Էրուայ ու վառուայ ես Շիրին, ²⁾
Ախ մոխիր, դառայ ես Շիրին: ³⁾

Մատաղ լինիմ քեզ ու մօրդ,
Գլուխս զուրբան քու հօրդ,
Աստուած պահէ ջուխտ աղբօրդ...

1) Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

1 2 և 3 Այս տողերը կրկնել ամեն տան վերջում:

Արե ես ու լոյս չես տալիս,
Ամպի տակից դուրս չես գալիս,
Մի մտիկ տուր իմ խեղճ հալիս...

Ձիշակ բոյդ ինձ ցոյց տուր,
Քու ձեռիցդ մարդ կորչի ուր,
Քեզնից չեմ ուզի հաց ու ջուր...

Մի հատ բաշխէ բաղնիկ վարդից,
Ես պակաս չեմ ոչ մի մարդից,
Ինձ ազատէ ցաւ ու դարդից...

Սէրդ թէզ կրակ է դառել,
Դիշեր ցերեկ ինձի վառել,
Դու էլ հետն ես հողիս առել....

Դուրս ես եկել դրախտիցը,
Վեր չես գալիս թախտիցը,
Գանգատ ունիմ ես բաղնիցը...

Հիւրի-փերին քեզ նման չէ,
Քեզ մօտ կարմիր վարդը բան չէ,
Մի օր էլ ինձ ձեր տուն կանչէ ...

ՆՅԱՆՈՒ ՍԱԼՈՄՈՆ ԵՐԳԸ

Մեր արեւը շատ կանանչ է,
Նաչալնիկը մեզ կը կանչէ,
Քեասիր տղին հէշ չի ճանչէ:

Յաման եար, եսման եար, Նարրմ—Նարրմ Նար,
Քեօհնա եարրմ եար, Նշանլու եմ ես,
Սաղալու եմ ես, Սաղըտցու եմ ես: ¹⁾

¹ Այս երեսը տողերը կրկնել ամեն տան վերջում:

Սաղըտի մէր լուացք կանէ,
Չուշպէն աւետրընին տանէ,
Սաղատ տղին ազատ անէ:

Արե դիպաւ Կողբայ սարին,
Ե՛րբ պտի դայ իրեք տարին,
Էրթանք հասնինք նազլու եարին:

Խապար տարէք սարեր ձորեր,
Հագել եմ սաղըտի շորեր,
Լաց էղնելէն ընցնում օրեր:

Անուշ մէրիկ, դարտ մի էնէ,
Նազլի հարսիդ ազիդ պահէ,
Չուրի Աստուած ինձ ազատէ:

Դիշերն անքուն ես մնացի,
Էրազ տեսայ նստայ լացի,
Աւետրընին ուխտ գնացի:

Սարի քօլէն ծաղիկ բուսաւ,
Նազլու եարս ընձի տեսաւ,
Մօտեցաւ՝ հետս կուշտ խօսաւ:

Դարդս շատ է, ես ինչ էնեմ,
Ջահել—ջիւան, ո՛րը տանեմ,
Չորս տարին երբ գլուխ հանեմ:

Ամպեր թոփ էղան վրը գլխուս,
Սե ձուն բերին իմ արևուս,
Եարս լաց էղաւ չուրի լուս:

Սիրտս էղաւ փարա-փարա,
Տէր իմ Աստուած, ազատ արտ,
Սրտիս չմնայ խոր եարա:

ԱՐԻ ՍԻՐՈՒՆ, ԳՆԱ ՍԻՐՈՒՆ

Մեր տան հտե քառսուն կարաս,
 Քառասուն կարսի զինին էր խաս,
 Օսկէ գիւգիւմ արծըթէ թաս,
 Ամեն թասին պագիկ մի տաս:

Արի սիրուն, զնա սիրուն,
 Հազար էրանեկ քո տիրուն: *)

Մեր տուն ձեր տուն մօտիկ — մօտիկ,
 Դու կապել ես կարմիր գօտիկ,
 Էրթանք քաղենք կանանչ խօտիկ,
 Տանանք վիր եարն է խօրօտիկ:

Քամին էկաւ էրան — էրան,
 Գնաց հասաւ Մշու բերան,
 Մշու հաւեր թևաւորան,
 Քեալաշի տուն սևաւորան:

ՀԱՐ ՆԱՋ, ՀԱՐ ՆԱՋ

Մշու սարեր մշուշ էր,
 Հար նազ, հար նազ, հար նարգիզ:

Մշու խոտ ջուր անուշ էր,
 Մշու մարդ զօշաղ էր,
 Մշու կռունկ յերկնավիզ,
 Յերկնավիզ լէնագեարդան.
 Դիւ էլ շաղու եկեր ես,
 Շաղու եկեր ես ձի տես,
 Կարմիր խնձոր պերեր ես,
 Դիւլ ուհան պերեր ես:

*) Եյս երկու տողերը կրկնել իւրաքանչիւր շուրս տողից յետոյ:

ՄԱՐԱԼՕ ՄԱՐԱԼՕ

Մարալօ, մարալօ, մարալօ: ¹⁾

Լուսնեակ, դու անցի զնա,
 Կանդ տուր ու էնպէս զնա,
 Բարե տուր, անցի զնա:

Լուսնեակը ինձի ցերէկ,
 Ձիրուանու քարուան բերէք,
 Աղլուխըս մուժտա կուտամ,
 Եարիցս խաբար բերէք:

Ինձ համար հաց ես բերել,
 Թագա մածուն ես մերել,
 Իմ զրկած աղլուխիցը,
 Ա՛խ, դու ինչքան ես կերել:

Դռնիցը մի դուրս արի,
 Ինձ մի խփի չոր բարի,
 Ես քու էշխիդ ձեռիցը,
 Դառել եմ զիժ — սարսարի:

ՎԱՆԵՑՈՅ ԿՕՏՈՒԹ — ՔԵԹՈՒԹ

Յօրօվանա յօրօվանա (կրկնել)
 Յօրօվանա զիւր տուն քանդեց,
 Էկաւ գեարուն կորեկ ցանեց,
 Կիտուռ թրթուր քեօքէն խանեց:

Նարընա նանայ նանընայ բեթուռ, ¹⁾
 Ջանընա նանայ կանանչ թրթուռ: ²⁾

¹ Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

¹⁻² Կրկնել իւրաքանչիւր տան վերջում:

Մեռնեմ քեզի, սուրբ Յովհաննէս,
Մատաղ կանեմ կապուլ էնէս,
Կիտու թրթուր քերքէն խանես,
Ես քե մեռնեմ սուրբ Յովհաննէս:

Մարկոս գնաց յօգի դիւան,
Խաց մ'էլ չկէր որ փրթէ թան,
Ես քե մեռնեմ սքանչելագործ,
Կիտու թրթուր առնես քեօ ծոց,
Տանեո թափնս էնա փողոց,
էս օխտ տարի մեր սիրտ էր խոց:

Նա նայ եար հա, նա նայ եար, (կրկնել)')

Իմ եարը միշտ ալ կուզի,
Մէջքին թիրմա շալ կուզի,
Զքեղ պալատն ինչ կանի,
Ոսկով պատած շալ կուզի:

Ախի, անունդ էլիզար,
Մտի տնէն սինին ան,
Հօրդ ու մօրիցդ իզին ան,
Ձեռ ձեռի տանք յելնենք սար:

Ա՛յ տղայ, անունդ ասան,
Ես քո բօյիկ հաւասայ,
Հէրս քեզ աղջիկ չի տայ,
Հազար թումանի խօսայ:

Երազիս խնձոր տեսայ,
Խնձորը դու իր, ասա,
Ծակծկուած մէրս ինչի
Չի ասում աղիգ փեսայ:

1 Կրկնել տանքի սկզբում երկու անգամ, իսկ իւրաքանչիւր տողից յետոյ մի անգամ:

Գ Ի Ի Լ Ա Ն Բ Ա Ր

Նշի ծառին նուշ կընի,
Վարդի ծառին փուշ կընի,
էրնէկ էն աղջըկանը,
Սիրած եարին դուշ կընի:

Հօյ եարօ եաման գիւլանքար, ման սանա¹⁾
դուրբան, գիւլանքար, օ գենա ես եմ, ²⁾
Օ՛, գենա դու ես, սիրելի ջան, սիրելի: ³⁾

Բամբակ եմ ցանել դօղա,
Մէ եար եմ բռնել թաղա,
Ամեն մի ներս մտնելիս՝
Լեզուդ տո՛ւր ինձ մազա:

Ինձ նման քեզ տէր ունիս,
Ուրախ սիրտդ բաց արա,
Թէ որ հետս սէր ունիս,
Չոր պուօշս թաց արա:

Զարթն ինչ կանի իմ եարին,
Երբ դեռ չի անցել տարին,
Չէ որ նրա լուսն է՝
Զարդ, զարդարանք աշխարհին:

Ես վաղուց սավղաքեար եմ,
Սէրի ձեռից զարդաքեար եմ,
էս սաւղից ինձ ազատողին,
Ջիւան ջանս մատաղ կանեմ:

1, 2 և 3 տողերը կրկնել ամեն տան վերջ:



Շարաֆով, թուխ փուշով աղջիկ, բոլոր յերես,¹⁾
 Զրմ գինայ յոստի գիգաս, դուն ժողորներ ես:²⁾



Եւրի, քու զուլսն է դրած կարմիր ջրայ,
 Խէրիք է, խրդ վնոցիդ մալուլ մը խաղայ,
 Ես ու դու արի եար էղնինք խօրօտ Սավգուլ,
 Բալալու աղջիկ իս դու, ես էլ խեղճ տղայ:

Իմ ու քու նանի մէջ՝ թըլ: Աստուած դատէ,
 Սավգուլ ջան, մէ իրիշկելո ձիկ շատ ու շատ է,
 Մօտկցի, մը վախենայ, քու անուշ եարն իմ,
 Փաթթութուի, իմ վիզ գրկէ, մը ասի եատ է:

Քու խերանց դուռ ու յերդիս մենծ պար ու խաղ է,
 Էդ սիվտակ դոշիդ խամար, իմ սիրտն ի դաղ է,
 Զիմ սէֆիլ — բալալու բաշ խօրօտիկ Սավգուլ,
 Զրմ գինայ յօրի ըղման սիրտդ վրէս պաղ է:

Պիտվական ու խօրօտիկ բճերս խաքի,
 Լուսվընէ չուր իրիկուն ձըր դուռն իմ չոքի,
 Քու սէրսուփ խաթեր խամար յըմէն լուս ու մութ
 Վըր ծնկան ես չօքէչօք խօրդ ձեռն իմ պաքի:

Աշխրրի դարդ — խտսաւաթ քըզի է տուած,
 Օրթէ գիս գետին կու տփիս, ան անաստուած,
 Քու սէրն էփեց ու վառեց, շիվար մացի,
 Զընք գինէ թը յիսնէ էիր խռոված:

Քու ձեռնէն բրորաւ սիրտս, էդայ դարբէդար,
 Քանդեցիր զիմ տուն ու տեղ, քսեցիր չոր քար,
 Հարի եր մնամ բրինդար, չէ Խլղաթն իմ,
 Մեղք արի, խանչէ քու քով, իմ բէֆալու եար:

1-2 Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Կող ու կուշտս կպաւ զեանէն ճամբախըղ իշելով,
 Մեռայ, ես շատ տըպայ քու փէշ քաշելով,
 Զիս մոռցար աղքըտի պէս դոնէ դուռ քըցիր,
 Թորկեցիր շիվար ու խեղճ, ան — վախ քաշելով:

Մըռնիմ քու սըռսուռ ծամին ու բարակ բաժին,
 Քու ծամերն ու թուխ աչքիւր աշխարը կու աժին,
 Իլլահի քու թեկու բօյն ու կեռ — կեռ ունքեր . .
 Ի՞նչ կեղնի ըզ քու մատներ հաղմ գլօխս մաժին:

Բիր մա, բիր մա, զընկ — կը — կը տօլորուր ¹⁾

Շարմաղ էրեսդ կը շողշողայ,
 Բարակ մառնիւրդ կը գողգողայ,
 Հեռու տեղից էկող ձէնը
 Իմ եարինն է, կը մղմղայ:

Քարվանն էկաւ, անցաւ գնաց,
 Եարս նստած տեղը մնաց,
 Ուրիշին խափելու համար,
 Ինձի տանը թողեց քնած:

Առաւօտուայ անուշ հովին,
 Զողքը դիպաւ գօշիդ մօվին,
 Հազար էրնեկ էն իգիթին,
 Որ կայնաւ քեզ պէսի քովին:

Քամին գարկեց զիլֆըններիդ,
 Արնն ընկաւ շէկ մազերիդ,
 Թէյրանից հինա եմ բերել,
 Որ դնես սպիտակ ձեռներիդ:

Տեղիցդ նոր ես վեր կացել,
 Փերուշաններդ կախ քցել,

1 Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Սարգարը ձեռքէս խլեցին,
Ինձ տուին սարսաղ ապուշին:

ՎԱՅ ԼԷ ԼԷ ՎԱՅ ԼԷ...

Պատի տակը տալդա է,
Վայ լէ լէ, Վայ լէ լէ, Վայ լէ, լէ լէ, ¹⁾
Էս լինչ անուշ դայդայ է,
Թողէք եարս առաջ գայ,
Ջանս ընտուր բաղա է:

Էսօր գութանը մերն է,
Մաճ բռնողը իմ հէրն է,
Եզնարած շէկիկ աղէն,
Աշխարք գիտէ իմ տէրն է:

Ա՛յ տղայ, իր անել տուր,
Մի մատը գիր անել տուր,
Ինձանից քէզ ճար չ'կայ,
Քանքուղ վեր անել տուր:

«ՔԵԱՍԻՐԻ ՔԵԱՐՎԱՆ ՄԱՐՑ ԶԱՆ»

Ձաղացիս դուռը կանաչ,
Նանայ նանայ, վայ նանէ ջան,
Դուրս կուգայ ամանչ ամանչ,
Քեսսիքի քեսարվան Մարօ ջան,
Ջուխտ ու կէնտ կապիտ մեռնեմ,
Էս էլ մի դավքան Մարօ ջան,
Մինն ալա, մինը կանանչ,
Վայ լէ լէ լէ լէ վայ նանէ ջան: ²⁾

1) Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

2 ձեռնեալ աները այս տան նման երգել:

Ջաղացիս դուռը տաշած,
Աղլուխիս գիւլը քաշած,
Մեռնեմ կեռ-կեռ ունքերիդ,
Ոսկէ դալամով քաշած:

Ջաղացս պատիկ-պատիկ,
Աչքերդ նռան հատիկ,
Ամեն քեզի տեսնելիս,
Համ Համբարձում համ Ջատիկ:

Ջաղացս կանի խաւար,
Դուշման, քու աչքը խաւար,
Սիրել հնք իրար կառնենք,
Թող տանին եօթը տաւար:

«ԶԸՆ ՄԱՐԸԼ ԶԸՆ»

Ջան մարալ ջան ¹⁾

Էս սարէն մէկ քօչ անցաւ,
Քօչը տուաւ մէջ անցաւ,
Սիրտս մէկ կրակ ընկաւ,
Ոչ վառաւ ու ոչ հանգաւ:

Սե փուշին ճիտս եմ քցել,
Գրակը սիրտս եմ լցել,
Էսօր հինգ օր է չեմ տեսել,
Իմ եարը միտս եմ քցել:

Արեն առաւ գերանին,
Ես մեռնեմ աւետրանին,
Ջուխտ աղունեկ դուրս ելան,
Կանանչ խօտը բերանին:

1 Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

«ԱՅ ԸՂՋԻԿԸՄ ԳՈՅՆԻ ՇԸՄԱՄ»

Չուր կուգար արփին-արփին,
Այ աղջկերմ գոյնի շամամ տաղիւկիւմ: ¹⁾
Համ տիրացու համ դարբին,
Արի էրթանք, իմ ախպէր ջան, քեզ դուրքան,²⁾
Ջուր չէր ջրե ծառները,
Գիր չէր գրե մատները:

Էրկանքս աղի վրէն,
Համամը թաղի վրէն,
Ես մէկ թեւաւոր դուշ եմ,
Իմ հերանց բաղի վրէն:

Հագել եմ ալ եմ էղե,
Սըտէս հիւալ եմ էղե,
Հէրու իմ բիւլբիւլ լեզուս
Էս տարի լալ է դառն:

Վերի սարից գալում ես,
Հարարի պէս հալում ես,
Բերանդ լէն մի բանա,
Դու քու ազգով գալում ես:

«ԲԸՂՈՄԻ ԴԻԻԼ ԲԸՂՈՄԻ»

Սէարէնը կիւքեա տաղ-պաղ ջրերը,
Բաղոմի գիւլ - Բաղոմի:

Կը գաթկըթի մէտումէառ քեարէնը,
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

¹ Գրկնել առաջին տողերից յետոյ:

² Գրկնել երկրորդ տողերից յետոյ:

Տիւ էլեր ես կայներ ես տիւր,
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

Մէշտէր զարկերը ճիւխտակ մի նիւր,
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

Ես էլ կիւզեմը մէկնի ծի տիւրը,
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

Թէ տիւ չիտաս, Ասգած քե ծիւրը,
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

Տիւ էլեր ես կերթաս կէօմերը,
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

Մատկեր մէանի վէտոված մէօմերը,
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

Տիւ էլեր ես կերթաս մէարաքը,
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

Քեօ կերեր ես մեղր ու կեարաքը,
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

Քէօ խէաքնելիս, քե բիւմբարաքը
Բաղոմի գիւլ — Բաղոմի:

ՍԱՐ—ՍԱՐ ԵԱՐՈՎՆ ԱՐԻ

Սար, սար, սարովն արի, ¹⁾

Քիթիը ջան, Բաղովն արի: ²⁾

Էս սարը բանձր սար ա,
Միջինը զարգեարի քար ա,
Մուղնուայ ջուրը սառն ա,
Մուղնի էրթոյն իմ հարն ա:

^{1 2} Գրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Ապուր եմ էփել աղի,
 Ուտողի սիրտը դադի,
 Ես ու զո՛ւ իրար սիրենք,
 Թող դուշմանը կատաղի:

Ծաղիկ էի բաղի միջին,
 Մի հատ էի թաղի միջին,
 Դիշեր ցերեկ առանց քուն.
 Դովում եմ խաղի միջին:

Ջրհորից ջուր ես քաշում,
 Տակընհան ինձ ես աշում,
 Հեռուից ուրիշներին,
 Մօտիկից ինձ ես խաշում:

ՍՍՍՈՒՆՑՈՑ ԳԱՆԳԱՏԸ

«Ազի» նրգի նղանակով

Սասուն վազեց արեան գետեր,
 Զէնքեր չունինք, առանք փետեր:
 Խայեր, խայեր, խայեր, խայեր,
 Մըր դարաւ դուք հէջ չը՛ք քաշեր,
 Խայեր, խայեր, խայեր, խայեր,
 Կու դիմանա՛ք, կու մեռնինք,
 Կու սպանինք, կու չարոլինք քրդերուն: ¹⁾

Անդու՛թ տաճիկ խըտ քրտերուն,
 Աւերեցին մըր տեղ ու տուն:

Մըր ջիւաններ տարան գերի,
 Թորկին գմըր տներն անվերի:

Խարս ու աղջիկ բռնին թուանք,
 Տընով տեղով մընք քանդուանք:

¹ Հետեւալ տները այս տան նման երգել:

Մեռան մամ, սլապ, ճժեր մեռան,
 Սովէն թե թիկունքներս կեռան:

Սասուն ձեռնէ գնաց, խասէք,
 Զուր տեղ մարդու մի բանքասէք:

Զոր խաց տուէք ու քանիմ գէնք,
 Էլ ուրիշ բան ձրգնէ չուղինք:

Քզի մեռնիմ, Սուրբ Տիրամէր,
 Դու մի թորկի գմըզիկ անտէր:

Խղճուկ յըլղաթ կանչէ, ու լաց,
 Բալքի քու ձէն լսէ Աստուած:

«ՍԱՐԻ ՍՕՆԱ ՏՈՒՆ ԱՐԻ»

Սարի այվան եմ, սարի, ¹⁾
 Սարի Սօնա, տուն արի: ²⁾

Էն բարձր թառի տակին,
 Նռնենու ծառի տակին,
 Երգ ասեմ անուշ քնի,
 Իմ քաղցը ձէնի տակին:

Երգ ասեմ եօթ ոտնանի,
 Մէնակ բունս ո՛նց տանի,
 Էզուց արի մեր տունը,
 Մատդ շարեմ մատանի:

Դուխս եմ զրել քարին,
 Սիրտս լիքը արին,
 Եարիս եփած մայլամը,
 Դրէք իմ խոցուած հարին:

1—2 Կրկնել խորքանշիւր աղից յետոյ:

Գնացած ճամբէս նեղ ա,
Անուշ խօսքդ ինձ դեղ ա,
Ճամբիցս մոլորուել եմ,
Ձեր տները սրտեղ ա:

ՍԱՐ ՀԱ ՍԱՐ

Սար հա՛ տար, սարին ղուրբան. ¹⁾
Բու դաշ, քու գեօզ քօին ղուրդան: ²⁾

Ամպել ա ամպի նման,
Հաքար ա դանդի նման,
Նանս ինձ հնց ա պահել,
Ծալած գիւրանդի նման:

Ամպել ա, թոն չի գալիս,
Մթնել ա, տուն չի գալիս,
էս անտէր բարձի վրայ,
Առանց հար քուն չի գալիս:

Կայնել ես բարձր սաղին,
Չուխէդ նախշու կարին,
Հեռու տեղից ես գալիս,
Ո՛ր է բերածդ բարին:

«ՍԱՐԵՐԻ ՏԱԼԴՈՎՆ ԱՐԻ»

Սարերի սինձն ի՞նչ ա, ³⁾
Սարերի տալըովն արի՛,

Ելաթն ու բրինձն ի՞նչ ա,
Իմ հարի սավղովն արի,
Ես սիրել եմ, ես կառնեմ,
Խօսք ու զրիցն ի՞նչ ա:

1, 2, Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:
3, 4, Կրկնել իւրաքանչիւր մի տողից յետոյ:

Մեր բարդիքը բարձր ա,
Սիրած հարը քաղցր ա,
Գնա՛ մօրս հարցրա՛,
Արի՛ ինձի փախցրա՛:

Կերածս կարմիր թութ ա,
Ես կառնեմ նանս չի տայ,
Աղա՛, քու հոգուն մատաղ,
Ուրիշին իրխար մի տայ:

ՇՈՂՈՆ ԷՐ ՄԱՅԼԷՆ

Մէրն ինչ է, սաւղէն ինչ է,
Նայնայ նայնայ նայնայնայ նայնայ, ¹⁾
էս պարի զայդէն ինչ է,
Շողոն էր մայլէն, Հէքոն էր եայլէն. ²⁾
Բանձր ծառ, քաղցր պտուղ,
Ձեմ հասնի ֆայդէն ինչ է:

Կողբայ ջուրը սառել է,
Ղամէն ձեռս տարել է,
Չէկ մազաւոր աղջիկը
Խելքս գլխէս առել է:

Մի հար ունիմ՝ անուշ է,
Հալած արծաթէ դուշ է,
Բաղերի միջին տեսայ,
Ես ասի թառլան դուշ է:

Ս Ի Ր Ո Ւ Ն Է

Սիրուն է, — ³⁾ Արագի խոր ատէքը,
Կողբայ տուաղ գեատէքը,

1 2 Կրկնել իւրաքանչիւր տան սկզբում: (3-ը նոյնպէս)

Նստել են այգիները,
Ասում են լաւ դայտէքը:

Գութանը հօլ ա, հօլ ա,
Գութան քաշողը տօլ ա,
Տօլ ես, տօլութիւնդ արն,
Քո խօսքին նայող չկայ:

Մարալ—մարալ ման արի,
Ջէյրան—ջէյրան տուն արի,
Մթնել է, շուտ տուն արի,
Մենակ եմ, շուտ տուն արի:

Կովի հորթը կապեցիր,
Նստար տակը կթեցիր,
Կաթն ու կարագը մեղրած՝
Նարիս փէշքէշ ղրկեցիր:

Ս Ի Ր Ո Ւ Ն Է

Սիրուն է. ¹⁾ Մեծ կալը երես-երես,
Բազրգեան ,Աստուած սիրես,
Բաշ-Չօրագեալ գնալիս՝
Իմ եարը հետդ բերես:

Բազմ ունիմ դամուշ է,
Միջի մէյվէն անուշ է,
Միք մեղգրի, մէք ու քուր,
Սրտով սիրածն անուշ է:

Առունները համամ է,
Ենգի բիլիւր շամամ է,
Ես էն աղջկան կառնեմ,
Որ անունը թամամ է:

1) Այս բառը կրկնել իւրաքանչիւր տան սկզբում:

Ժամի բոլոր աւագ է,
Ուտտա, ջուրբէզ գիւլագ է,
Ժամը շինէ գլուխ բեր,
Վանքը մեզի մուրագ է:

Սև ունքեր կամար-կամար,
Ես կապրեմ քեզի համար,
Օխտը տարի սև հագայ,
Քու ազիզ խաթեր համար:

Մ Ր Տ Ո Վ Ը Ս Ի Ր Ե Լ Ե Ս

Սուրբ Կարապետ քո վանքը,
Վայ լէ լէ լէ լէ լէ
Վայ լէ լէ լէ լէ լէ
Վայ սիրելի ջան, ¹⁾
Ղազարի նախշուն թամբը,
Սրտովը սիրելի ես,
Մոլորը թորկելի ես,
Վայ անուշիկ ջան, ²⁾
Արգ էնեմ թագաւորին,
Անցել է Հայի կեանքը:

Սև ամպերը պարզում չէ,
Սիպտակ եայլուխ սագում չէ,
Եօթը տարի ալ հագնեմ,
Սիրտս սև է, սագում չէ:

Ծիրան եմ՝ ծառի ծերին,
Կերերամ հետ թերերին,
Եկան քաղեցին տարան,
Ծախեցին ախմախներին:

1) 2) Հետեւեալները երգել այս տողերի նման,

Կարաւ եմ քարամիջում:
Կը կարդամ ձորամիջում,
Աստուած, իմ մուրազս տո՛ւր,
Էս գալող շաբթու միջում:

Դու մի հատ թառլան ղուշ ես,
Մեր բաղում բուսած նուշ ես,
Աստուած վկայ, սուտ չ'կայ,
Ինձ համար շատ անուշ ես:

Անունդ կարդացող ա,
Աղբէրդ գիր բացող ա,
Մի գիրը բաց անել տո՛ւր,
Տեսնենք ո՞նց իմացող ա:

Բուսնել ես բաղի միջին,
Չամամի թաղի միջին,
Դիշեր ցերեկ միալար,
Դու ես իմ խաղի միջին:

Ս Օ Ն Է

Սօնէ՛ 1) .— Լուսի բուսնեակը ես եմ,
Ծովերի ձուկը ես եմ,
Քշերուայ փախնող աղջիկ,
Հետիդ ընկերը ես եմ:

Ձեռներդ ծափ ես տալիս,
Քեանքիւղ թափ ես տալիս,
Էսօր էգուց ես քցել,
Ամեն օր խափ ես տալիս:

Չիմշիր գգալ շիրուանի,
Քամին թել-թել կ'տանի,

1) Կրկնել իւրաքանչիւր տողի սկզբում:

Միք մեղդրի, մարիկներ,
Էս սէր եաման կը տանի:

Որեն կեռ ու կամար,
Ես կը մեռնեմ քեզ համար,
Եօթը տարի դիմացայ,
Մենակ քու խաթեր համար:

Կայնել ես էլի դռները,
Տար արածէ մեր գառները,
Քեաֆիր, ինձի թողել ես,
Գեշի եախէն ես բռնել:

Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,
Վարդից զնդեցիկ մաշիկս»

— Մեր տան մէջը քնող տղայ,
Կարմիր խնձոր ծախող տղայ,
Վարդ կոշիկս գտնող տղայ,
Տղայ, զրկէ վարդ կոշիկս:

— Ձեր տան մէջը քնել չեմ ես,
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
Վարդ կոշիկդ գտել չեմ ես,
Իմ մօտս չէ վարդ կոշիկդ

— Լաւ օրս էղաւ ախ ու վախ,
Կորցուցի կոշիկս, աւանդ,
Հայի տղայ, հոգուդ մատանդ,
Տղայ, զրկէ վարդ կոշիկս:

— Որ մօտս չէ ուրտից ճարեմ,
Ագնիւ աղջիկ, հոգիդ սիրեմ,
Իմ մօտս չէ վարդ կոշիկդ:

— Ես մի անթառամ ծաղիկ եմ,
Անուշ երգող աղունիկ եմ,
Պատկերովս գեղեցիկ եմ,
Տղայ, ղրկէ վարդ կօշիկս:

— Ես գիտեմ դու անդրանիկ ես,
Սիրովդ ինձի մօտիկ ես,
Իսկ հասակովդ էլ փոքրիկ ես,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ:

— Մի մնար ինձի պարտական,
Աղջիկ եմ, տաս—չորս տարեկան,
Ես կը լինիմ քեզ սիրական,
Տղայ, ղրկէ վարդ կօշիկս:

— Ինչո՞ւ մնամ քեզ պարտական,
Կամիս՝ տամ հազար դահեկան,
Եթէ կըլնես ինձ սիրական՝
Ես կ'ճարեմ վարդ կօշիկդ:

ՎԱՅ ՄԱՐԻԿ ԶԱՆ

Վայ մարիկ ջան ¹⁾ Իմ ետըը դուռ կը դնէր,
Գոտիկը նուռ կը ղրնէր,
Ես կը մեռնիմ էն ետըին,
Փափախը ծուռ կը գնէր:

Ջաղացիս յետի կուռը,
Կը ցնծայ միջի գիւլը,
Վայ, իմ սիրած բիւլբիւլը
Քաշեցին խանի դուռը:

Իմ ետըը էլաւ գնաց.
Դարին գեմ առաւ մնաց,

¹ Այս բառերը կրկնել իւրաքանչիւր տողի սկզբում:

Հալալ թողութիւն չէրի,
Սրտիս դադ էղաւ մնաց:

Կեանքիս իւրադ օրերը
Ընկել են խոր հորերը,
Սիրտս հոգիս վըղովուած՝
Մահն եմ գալիս չօլերը:

Քարս տաշի, բուրեցի,
Ետրիս տեսայ մուրեցի,
Անտէր մնար էն սւխտը,
Որ ես ընտեղ սիրեցի:

ՎԱՅ ԼԵԼԵ ԶԱՆ

Վանքի բոլոր ալա է
Վայ լէլէ վայ լէլէ, ¹⁾
Վայ լէլէ ջան. ²⁾
Մէջը լիքը վալա է,
Վանքի բոլոր դամուշ է,
Քանի կանչեմ անուշ է,

Ամպել է, երկինքը մութ է,
Ոշխարհի վերջը փուտ է,
Թող իմ սիրածն ինձ տան,
Բիրատի ասեն սուտ է:

Ամպ ու արե խառնուած,
Հայ աչքերն է միշտ թաց,
Ժամ ու մատուռ պղծեցին,
Ընուն քրդերը աչքաբաց:

Սիրտս ու հոգիս այրուած,
Թողի իմ տուն պապերաց,

¹ և ² Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Առայ քուլֆաթս հեռացայ,
Մնաց արտերս բուսած.

«ՀԱՄ ԵԱՆԴԻ ԵԱՆԴԻ ՏՂԱՅ»

Վերնաքամին զալիս ա,
Համ եանդի—եանդի տղայ, ¹⁾
Թիկնամէջս տալիս ա,
Մէյդան արէք, անց կենամ,
Կարօտ եարս զալիս ա:

Չեր բաղի դուռը բաց ա,
Ոտներդ շաղով թաց ա,
Եարիցդ հեռացել ես,
Աչքերդ լիքը լաց ա,

Հաղող, ծառղ անիծած,
Ունիս շատ տներ քանդած,
Ով քու ջրից հեռանայ,
Ջերը կ'մնայ փակուած:

Արտս ցորեն ցանեցի,
Դարտս հետը թաղեցի,
Հազար ու մի աղօթքներ,
Ցանած վախտը շարեցի:

Արե ծագեց մեր վրէն,
Փայ առնեն ամենքն իրեն,
Քնոզը զուրկ կը մնայ,
Թէ չ'զարթի խոր քնէն:

¹ Գրկենել իւրաքանչիւր տողից յետոյ:



ԻԳԴԻՐՈՒ ՍԱՐԵՐԸ ԴՈՒՍԱՆ Է

Փոցխս ծիրանի կօթ է,
Իզդիւրու սարերը դուման է,
Սիրտս հարալու խոց է,
Սալդատը էլել ա Գեատուկը,
Սիրտս սրտումդ պիտի,
Սալդատը էլել ա Ալաճէն,
Գիտենաս սաւղէն փնց է,
Նայ նայ նայ նայ նայ նայ նայ նայ: ¹⁾

Հաւը թռաւ թառն էլաւ,
Մեր բանը դաւովն էլաւ,
Սարաբի որդին մեռնի,
Դուշմանի սրտովն էլաւ:

Այ տղայ բաղի միջին,
Ոտներդ շաղի միջին,
Կանչի, կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քո հաղի միջին:

Վարդ քցի ձեռով բռնեմ,
Եարալու սրտիդ մեռնեմ,
Քեօկիցը մի դուրս արի,
Բալքի հաւասըս առնեմ:

Սաղ տարին ծոմ ու պաս եմ,
Քեզ համար ոսկէ թաս եմ,
Սըտիս միջի դարտերը
Ծառզարդարին քեզ կասեմ:

Աչքս քցել եմ սարին,
Ոտքս դիպաւ լեռ քարին,
Էրթայ ու էլ ետ չգայ,
Քեզ սալգատտ զրած տարին:

¹ Հետեւեալ տները այս տան նման երգել:

«ԲԱԼԱ ՇԻՐԻՆ» . . .»

Քանարիո բանձր աեղ ա,
Բալա շիրին, ամման, ամման,
Ջուրը հիւանդի գեղ ա,
Թառլան շիրին, ամման, ամման,
Բալա շիրին, ամման, ամման, ¹⁾
Սիրած սիրածի չեն տայ,
Էս ինչ անօրէն գեղ ա:

Այ տղայ սե չուխաւոր,
Սաղմոսը ծոցիդ սափոր,
Էլնակ կ'տամ էն օրը,
Մեր տունը դաս թաղաւոր:

Այ տղայ, բաղովն արի,
Ոտներդ շաղովն արի,
Էս թաղը դալմաղալ ա,
Ման տուր էն թաղովն արի:

Քարիս տակը քարոտ ա,
Նայ նայնայ նայնայ նայ
Նայ նանայ նանայ նայ. ²⁾
Պարնի ձիանն արօտ ա,
Վայ լէլէ լէլէ լէ,
Վայ լէլէ լէլէ լէ, ³⁾
Թամամ օխտը տարի ա,
Քիրն աղբօրը կարօտ ա:

Սարէն կգայ ձիաւոր,
Մեր տունը չարտախաւոր,
Հրէս էկաւ իմ աղպէր,
Իրեք օրուայ թաղաւոր:

1. 46 տեղանիքը ելգել այս տղերի նման — (2, 3, նոյնպէս):

Սարի խոտը ծէղվեծեղ,
Աղբէր, էրթանք միատեղ,
Որ թշնամին վրայ տայ՝
Գլուխս տամ գլխիդ տեղ:

ԵԱՐԱՆՈՒ ՄԻՐՏ


Քարփի գլխին ունիմ տուն,
Մէջ տնկել եմ երկու սուն,
Գարտս էնքան շատ ա, որ
Գիշերները չունիմ քուն:

Տանս տակից ջուր բղխար,
Եարս սիրտս լուանար,
Եարիս տուած եարէքը
Իրան ձեռքով լուանար:

Բաղչա ունիմ ծառներով,
Մէջը լիքն ա գառներով,
Գառներ մատաղ կտրէի,
Անուշ հարիս ձեռներով:

Բաղ եմ քցել նոր ի նոր,
Հասցրել եմ մի խնձոր,
Եարիս տեսնելու համար.
Քանի ընկնեմ սար ու ձոր:

Եարալու եարալու սիրտ,
Ո՛ւր ա իմ մարալու սիրտ,
Չուտ մուրազիդ կ'հասնիս,
Մի լար, իմ բալսլու սիրտ:



Վանում հարսանիքի ժա 'անակ, երբ նորահարսին
ընթրում կանգնեցնում են կեսուրի առաջ, տղայոց
խումբը երգում է այսպէս.

Քրդի մի խարս իմ պիրի,
Քը գլօխ բամբուղ իմ պիրի:
Հայ լիլի հայ հայ լիլի¹⁾
Մըը թաքնաւոր վիճ լիլի:

Աղջիկների խումբը.

Քրդի մի խարս իմ պիրի,
Քը ոտ մաժուղ իմ պիրի:

Տղայոց խումբը

Քրդի մի խարս իմ պիրի
Քը ծամ փիտուղ իմ պիրի:

Աղջիկների խումբը

Քրդի մի խարս իմ պիրի,
Քը գլօխ սանրող իմ պիրի:

Տղայոց խումբը

Քրդի մի խարս իմ պիրի,
Քը թունտիը ճխաող իմ պիրի:

Աղջիկների խումբը

Քրդի մի խարս իմ պիրի,
Քը թունտիը վառող իմ պիրի:

Տղայոց խումբը

Քրդի մի խարս իմ պիրի,
Քը աչք խանող իմ պիրի:

1) 2) Գրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Աղջիկների խումբը

Քրդի մի խարս իմ պիրի,
Քը աչքիդ լուս իմ պիրի:

Տանըմեն, տանըմեն. Աղէ չան. ¹⁾

Քեապապս աղ եմ արել,
Ջիգեարս դաղ եմ արել,
Դօստ ու դուշմանիս միջին,
Լացս ծիծաղ եմ արել:

Ինձի գատեցին մեր տանից,
Ազգական բարեկամից,
Նոր աշխարք են ինձ տանում,
Հեռու եմ էլից — գիւնից:

Սըտիս դարտերը խոր ա,
Տունը մերը չի, նոր ա,
Բէֆասըզ մարդի ձեռից
Հուրն յաւիտեան ես կորա:

Բեռներով կազ եմ բերել,
Քեզ ոսկէ մազ եմ բերել,
Հինգու անգին քարերից,
Գլխիդ փաքուազ եմ բերել:

Իմ եարը տիրացու է,
Յատուկ տէրտէրացու է,
Մազերը որ վեր ունի՝
Մի գեղի քեօխվացու է:

Մեր առուն շատացել է,
Եարս անհետացել է,

1 Գրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

Քանի վախտ ա չեմ տեսել,
Դարտերս թագացել է:

Թալանն էկաւ թալանց տարաւ մեր մալը, ¹⁾
Քեափուրն էկաւ զարկեց տարաւ մեր մալը: ²⁾

Քուրտն էկաւ սարի կողէն,
Խարած վերցուց մըր հողէն,
Ջարկեց էն շան սատկըցուց,
Իրիցու տղայ Պօղէն:

Պառեկ դէմ էրինք սարին,
Աչքս ընկաւ դիմաց քարին,
Դուշման մըղի քաշեց սուր,
Էլ ետ չ'գայ էն տարին:

Ալ քօղով խարսներ տարան,
Մընք մացինք գիւու բերան,
Մըր ճըժերն ու աղջիկներ,
Չընք գինա թէ՛ դո՛ր կորան:

Կտրիճ, թեւերդի քշտէ,
Ձուն շեխի կողէն բշտէ,
Մենձ ու պզտիկ խըտ հիտըաց,
Դու մէկ զըրբով կորշտէ:

Էլ չկայ օր ու արեւ,
Կտրաւ մըր անուշ բարեւ,
Աստուած զըմէն կու տեսնայ,
Նստուկ մըր գլխու վերեւ:

Ջալում քրդեր մէկ էղած՝
Չորս կողերս են բոլըրած:

1 2 Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

Ջօղբութենով մեր տաւար.
Թալանցին էղած չեղած:

Գրօղ խեղդա Ալօյին,
Սպանեց լեւդճ Գալօյին,
Ղարադուրդուշուն զիւլնի
Կաճէտցի շուն Սըլօյին:

Խօրիմ ձեխ Սօֆու գլուխ,
Օր չը կտրէր մըր տան մուխ,
Դիւար կէնիմ Աստըծուց,
Օր կտրի ուր օջղի ծուխ:

ՀԱՐՍԱՆԵԱՅ ԵՐԳ

Օրհնեալ բարերար Աստուած,
Կամքն օրհնեալ մեր արարողին,
Ջուգեցինք, հայ. թամամեցինք,
Ջխաշնի վրէն բազմեցուցինք:

Դացէք բերէք զթագուորի հէր,
Իգայ նստի դարբազ էնէ,
Ծնտրիկ զարկէ սուրբ սեղանին,
Խէրն ու բարին մեր թագուորին:

Դացէք բերէք զթագուորի մէր, իգայ նստի...
» » զկոռնկն ի չօլէն, իգայ...
» » զրադն ի գօլէն, իգայ...
» » զկարան ի քարէն. իգայ...

Սուրբ Կտրապետի գօրութենով.
Խաչերես թագուոր մի կիղէր,
Մեր թագուորն էր խաչ,
Փասն էր կարմիր, արևն էր կանանչ:

- Էն դիզան, բէտ - բէտ դիզան, տեսէք թէ էն ո՞րն է:
 - Էն դիզան, բէտ բէտ դիզան, գեղի հանփէքն է:
 - Առիւծներ մըմըռալէն, տեսէք թէ էն ո՞րն է:
 - Առիւծներ մըմըռալէն, վարդապետներն է:
 - Կաքւըներ կըղկըղալէն, տեսէք թէ էն ո՞րն է:
 - Կաքւըներ կըղկըղալէն, էն իրիցներն է:
 - Ճընճըղներ ճըլվըստալէն, տեսէք թէ էն ո՞րն է:
 - Ճընճըղներ ճըլվըստալէն, սարկէւրկներն է:
 - Ցախաւել դռան յետեւ, տեսէք թէ էն ո՞րն է:
 - Ցախաւել դռան յետեւ էն մըշկըներն է:
 - Զունն էկաւ պարկն ի բերան, տեսէք թէ էն ո՞րն է:
 - Զունն էկաւ պարկն ի բերան, գեղի գղիւրն է:
 - Մուկն էկաւ ալրթաթախ, տեսէք թէ էն ո՞րն է:
 - Մուկն էկաւ ալրթաթախ, էն ջաղցըպանն է:
- Դովեցիւք, հայ, թամամեցիւք,
Զխաչնի վըէն բազմեցուցիւք:



ԲԱՌԱՑՈՒՑԱԿ

- Աբա—վերնագգետ.
- Ագար—ցաւ, հիւանդութիւն.
- Ազնաուր,— յաղթանդամ, իշխանական, անուն.
- Ալամ—ընդհանուր.
- Ալշախ—ցած. ստոր.
- Ալաւ—տենչ, ջերմութիւն սիրոյ.
- Ածու—փոս.
- Ակիկ արգելք.
- Ակըռկել—կարկամել.
- Ակըրդգահ—նախաճաշի ժամանակ.
- Ահբար—պատրաստութիւն.
- Ադուր—լաւ.
- Ամրահի—աշուղի անուն.
- Այան—յայտնի.
- Անգիւման—անսպասելի, անյոյս.
- Անջիգեար—անսիրտ.
- Անպան—անգործ.
- Անարի—անպիտան.
- Աշիրաթ—ազգ, ցեղ.
- Աշնա—բարեկամ.
- Ապսպրել—պատուիրել.
- Ապըռջան—տպարանջան.
- Աջաբ—արդեօք.
- Ասլը—ցեղ.
- Աստուոր—աշխարհ.
- Ատա—կղզի.
- Արաս—ափ, եզր.
- Արխ—առուակ.

Աւարմ առաջ.

Աւար-թաւալ — թաւալազլոր.

Աւջի — որսորդ.

Բագուսուլի իշխանական եղանակ.

Բադա — փոխանակ.

Բադան — պարիսպ.

Բադը — բարձր.

Բազի — երբեմն.

Բըռչամ երեսի վերայ կախուած մազ.

Բաժ — հասակ.

Բալաբան — թմբուկ.

Բալան — առատ, սաստիկ.

Բալալու — խղճալի.

Բալքի — որ, թերևս, զույգ.

Բաբ — հայրիկ.

Բանդ — ծառայ.

Բանկլի — սխալաւոր.

Բաշ մեծ, գլխաւոր, աւագ.

Բարխէմ գառնուկ.

Բարէնբար հաւասար.

Բարխանա կահկտրասիք, ճանապարհի իրեղէններ.

Բառադա — իզուր,

Բէկտը ձրի, անվարձ աշխատութիւն.

Բէհուդա անօդուտ.

Բեզրել յոյնել.

Բէտ մեծ, խոշոր.

Բէր — ոչխար կթելու տեղ.

Բէմուրատ — նպատակից զրկուած.

Բէզա գարգարուն.

✓ Բէֆալու — երախտադէտ.

Բինա հիմնական բնակութիւն, հիմք հաստատութ.

Բիշագ գանակ, զրչահատ.

Բիշար — խորովուիլ.

Բիլմագ իսա եթէ չի հասկանում.

Բիւմբարաք շնորհաւոր.

Բրիան — խորոված, այրուած.

Բիլդըրըն հասկացրէք.

Բոխախ ծնոտի վարի մասը.

Բուճ — գուլպայ.

Բուխերիկ — վսուարան (հին).

Բրինդար — վիրաւոր.

Բրորել պղտորել.

Բօլ — շատ, բաւական.

Բողում — եղէգնի ճղներ.

Բոլուկ — խումբ.

Դագել — մեղեդիական.

Դեօբ — կուրծք.

Դիւվագ — վարդագոյն, բոսորագոյն.

Դիւլ — վարդ.

Դիւլաբաթի ոսկեթել երիզ.

Դիւն — օր.

Դիւրիֆտար — ենթակայ.

Դեօլ — լիճ.

Դեագի — կերպոս.

— Դեարդան — իրան.

— Դիւման — յոյս.

Դեօրքեամ — տեսք.

Դիւլպանդ վարդակապ.

✓ Դագօ — մայրիկ.

Դալմա — տրառիչ, գլխի փաթաթոց.

Դամագի — տրամադրութիւն.

Դան — այնտեղ, հատիկ.

Դար լեռ, բարձրութիւն.

Դամ — պարապմունք, զբաղմունք, նուագածութիւն.

Դաւի — վէճ, կռիւ.

- Դարդ — հոգս, ցաւ.
 Դարբաղ — մեծ դուռ.
 — Դարբէղար — պանդխտութիւն, տարագիր.
 Դարտաքեար — ցաւի մատնուած.
 Դեարմէ — դորանից.
 Դեօր — որտեղ.
 Դէյրա — կանանց զգեստ.
 Դըրբ — նուագ, զարկ, անգամ.
 Դըհէն — կողմից.
 Դըխ — դէպի.
 Դիեար-դիեար — անհետք.
 Դիւնեա — աշխարհ.
 Դիւբէթ — երկտողանի.
 Դիւք — խնդիր.
 — Դիւբար — սիրական, կանանց անուն.
 Դուշ — հանդիպում.
 Դուքեան — խանութ.
 Դուման — մառախուղ, թուխպ տեղի անուն.
 Դուշման — թշնամի.
 Դուզ — հարթութիւն, դաշտ.
 — Դուր — մարգարիտ.
 Դուզմա — կոճակ.
 Դօշ — կուրծք.
 Դօստ — բարեկամ.
 Դօլ — ցեղ.
 Դօլաճ — դարձուացք, պտոյտ.
 Դօշլուկ — կրծկալ.
 Դօրմ — պահ մի.
 Դեօրվան — վիճակ, շրջան, ժամանակ.
 Դորակ — սափոր.
 Եա չէ — կամ թէ.
 Եախա — օձիկ.
 Եաման — վերք, ցաւ, քաղցկեղ.

- Եարմը — արգեօք.
 Եար — սիրելի ամուսին.
 Եալդադա — խաբել.
 Ենգի — ուշ եկող.
 Եշիւբաշ — կանաչագլուխ.
 Երիշկել — նայել.
 Երիշ — ընթացք, յարձակմունք.
 Եօլտաշ — ընկեր, ճանապարհորդակից.
 Եօխսա — միգուցէ.
 Զատ — իր, բան.
 Զապուլ — պաշտօնեայ.
 Զաթի — արդէն.
 Զալում — դժնդակ, չարաբարոյ.
 Զանջուլ — շղթայակապ.
 Զաւ — ուրախութիւն.
 Զար — ոսկի.
 Զարդիննաթ — պճնուածք.
 Զաւալ — փորձանք.
 Զիլիֆ — խոպոպիկ. ոլորած մազ.
 Զիլֆեր — կանանց երեսի վրայի մազերը.
 Զուգել — զարդարել.
 Զօլաթա — ոսկի, փող.
 — Էլ — ազգ, ցեղ.
 Էմլէ — դարձեալ.
 Էնկանտար — այնքան.
 — Էհթիշամ — ուրախութիւն.
 Էհթիպար — երախտագիտութիւն.
 Էշխ — աշխոյժ, եռանդ.
 Էրիէլ — գութան վարելու ժամանակ խրախուսական
 բացականչութիւն.
 Էօրօխկել — ուղարկել.

Ըշկալ—նայել.
 Թա վըր—[թէ ուր.
 Թալել—զցել.
 Թախա—տափարակ տեղ, լեռան լանջ
 Թամալլա—երկրպագութիւն. յարգանաց նշան.
 Թամանդա—ողջոյն.
 Թապալ—զլոր.
 Թարսայ—կրկին.
 Թիւռիւ—տեւակ.
 Թապաղայ թերթ թղթի.
 Թառլան—զեղեցիկ ամեն բերեմատնութեամբ.
 Թափալիկ—կանանց գլխի արծաթեայ զարդ.
 Թասիպ—պատուասիրութիւն.
 Թափուր—կերպէ տեսակ.
 Թաւատ—ազնուական.
 Թայ—ընկեր.
 Թայտաշ հասակակից.
 Թառլիկ—գլխարկ (քրտնաքամ).
 Թաք—միայն թէ.
 Թեռ—պարկ.
 Թէճնիս—երկսայրի.
 Թէջ—ցորէնի կոյտ.
 Թէլլու նազանձմիկ, վայելչահասակ.
 Թըռլակ խանգարել.
 Թըմահ—ցանկութիւն.
 Թուլունգ—աւագակարարոյ, անպարկեշտ.
 Թուռլու-թուռլուռ—տեսակ-տեսակ.
 Թաքուն—ծածուկ.
 Իգիթ—կտրիճ.
 Իլլան—ճար, օգուտ.
 Իմալ—խնչակէս.
 Իխաիար—ծեր
 Իմդաղ—օգնող.

Իման—գութ, խիղճ.
 Ինչինար—ինժեներ.
 Ինդ խոփութիւն, յամառութիւն.
 Իշմար նշանարկ.
 Իշալլահ յոյս Աստուած.
 Իրդար իրխար,—խոստովանութիւն.
 Լամդով ծանրաքիմ.
 Լանգառով կողքի-կողքի.
 Լան զաւակ.
 Լանգա—քացի.
 Լաչիկ—արժանի.
 Լաչի—գլխակապ.
 Լապի պալ-մեղրաշրթունք.
 Լարել հետեւել, ետեւից վազել.
 Լէ—կս, էլ.
 Լէյլում—անուն.
 Լը իսկ.
 Լիլի—լինի.
 Խաթը պատիւ.
 Խաթա—փորձանք.
 Խալ նշան, պատիւ, դրութիւն.
 Խամուրի Խամուր բերդի եղանակ.
 Խայալ—ցնորք, զառանցանք.
 Խային—նախանձ
 Խասաւաթ—հոգ, մտածմունք.
 Խարաբանէ անուն.
 Խարճ-խարճ-հարկ, տուրք.
 Խսայ—խօսք, զրոյց.
 Խէր հայր.
 Խփաթ—ոյժ.
 Խըլիճ սուր.
 Խըմրիլ հանգստանալ.

Խըտ — հետ.

Խօղան — քաղած արտ.

Խորդ — քաջ.

Խուր — հիւր.

Խսար — պարիսպ, շրջապատ, պատուպարան.

Խօշ — դուրեկան.

Ծէտիկ — նրբաքայլ.

Ծիկ — ինձ.

Ծուռ — գիծ, խելագար.

Կալամ — գրիչ.

Կաղ — մետաքս (հում).

Կապան — քարածերպ, քարակոյտ.

Կէլ — գայլ.

Կէօհան — խողխողել.

Կիտուռ — մորեխ.

Կուռ — թև, ձեռք, կողմ.

Կռուծ — հասկ.

Կուզա — կոճակ.

Հալ — զրուծիւն.

Հաղար — զգոյշ.

Համաշա — միշտ.

Համփայ — հարուստ.

Հալթ — իհարկէ.

Հայա — ամօթ, պատկառանք,

Հար — մինչև.

Հասրաթ — կարօտ.

Հաւար — օգնութիւն.

Հաւուզ — աւազան,

Հաւք — թռչուն.

Հափըսխանա — բանտ.

Հէսըութիւն — գերութիւն,

Հէյրան — զմայլումն.

Հէյվայ — սերգեիլ.

Հիտրաց — միասին

Հըճ'ըպ — արդեօք.

Հըց — հաց.

Հիլ — բոյս, որը գործ են ածում պարսիկները թէյի մէջ.

Հիլալ — մաշուած, կմախք դարձած.

Հիճրանի — գաղթականների եղանակ.

Հիմկա — այժմ.

Հինել — նկարել, հիւսել, գործել.

Հիսար — համար, թիւ, հաշիւ.

Հիւրիմալաք — յաւերժահարս.

Հմալ — այդպէս.

Հօլ — փայտէ խաղալիկ, գնդակ.

Հօտաղ — տաւարարած.

Հօրօտ — գեղեցիկ.

✓ Դադա — փորձանք.

Դադը — զրկանք.

Դազա — պատուհաս.

Դալանդարի — դէրվիշական եղանակ.

Դալամդաշա — վրձինով նկարուած ունքեր.

Դաշ — բարձրութիւն, թամբի առաջին սասը

Դաշմար — ծաղրածու

Դամ — կաթուած.

Դամա — դաշոյն.

Դամիշ — եղէգն.

Դատա — փորձանք.

Դամչի — մտրակ.

Դայիլ — յօժար.

Դայդայ — կարգ, եղանակ.

Դայրաթ — ջանք.

Դայրի — բացի.

Դանաուզ — դիպակ.

Ղանդ — զուլս.
 Ղապի — սրտով,
 Ղարար — համբերութիւն, տեսակ.
 Ղարափիլ — մեխակ.
 Ղարդու — փորձանք.
 Ղըմըշիլ — չինայել.
 Ղումդումայ — ջրի կամ օդի տման.
 Ղութնի — բեհեզեայ.
 Ղուլ — ծառայ.
 Ղուլաճ — կանգուն.
 Ղում աւազ.
 Ղումաշ — թանկագին կտոր, կերպաս.
 Ղօզա — բամբակի կեղև.
 Ղօմսել — դուաճանել, մատնել.
 Ղօնշմիշ — ծանօթութիւն.
 Ղօշմայ — գուգնթաց.
 Զան — սիրելի,
 Զէր — պարզ.
 Զգմայ — կողպէկ.
 Զըթիկ — կանանց երեցի ծածկոց, զարդ.
 Զիճ — զաւակ, երեխայ.
 Զիվ — սրունդ.

Մագեսամ միթէ.
 Մագա մրգեղէն, քաղցրաւէնիք.
 Մաժել — շփել.
 Մալ — ստացուածք, ինչք, սեփականութիւն.
 Մալուլ — ողորմելի, խեղճ, տխուր.
 Մախչա — մանեակ, քթի սարդ.
 Մըհանայ — պատճառ.
 Մամլաքեաթ — աշխարհ, հայրենիք.
 Մայա — մակարթ.
 Մայիլ — հիանալ, հիացմունք.

Մաշիկ — կանանց կօշիկ.
 Մարալ — եղնիկ, եղջերու.
 Մարաբա — կալուածքը աճրդով առնող.
 Մարամ — նպատակ, կամք.
 Մաքի — ոչխար.
 Մէշտէր — մէջքներ.
 Մըժ մառախուղ.
 Միզար — գոգնոց.
 Միանձուկ — ուխտատեղի, աղբիւրի անուն Ղաթսում.
 Միալար — միշտ.
 Միլ — մեր.
 Մուշտարի — գնող.
 Մուսլի — Մուսուլ.
 Մուրազ — իդճ, փափազ.
 Մուրվէթ ու քերիմ — գուլթ ու խնամք, օգնութիւն
 Մըուկ — որոմն
 Մօհլաթ — ժամանակակէտ, պայմանաժամ
 Մօվ — թանկագին կտոր, գիպակ.

Յարով — պատճառաւ.
 Յանգան — ուշ.
 Յէլման — վարար, հռացող.
 Յըն — այն.
 Յոնկուց — այնտեղից.
 Յոլստ — հրտեղից,

Նագանի — քնքոյշ.
 Նան-համաթ — հաց.
 Նաչար — խեղճ.
 Նասիպ — վիճակուած բաժին.
 Նարդիւան — սանդուղ.
 Ներոտիկ — նոր ոտք ելած մանուկ
 Նըզանըմ — չգիտեմ.
 Նխշուն — զեղեցիկ, խայտաճամուկ

Նուկի— ծանրութեան չափ. մօտ 3 գրվ.
Նուր— փայլուն.

Չալակ— մէջք.

Չահար— քաղաք

Չահմար— օձերի թաղաւոր.

Չաղ— ցող.

Չամամայ— շամամ.

Չաշխուն— թմրած, ցնդուած.

Չաշիլաթ— ուրախ, ոգեւորուած

Չարմաղ— նաշիհ, նուրբ.

Չարքի— արեւելեան եղանակ

Չէք— քայլ

Չիշակ— դեռահաս.

Չիր— առիւծ.

Չիւան— կոծ, լաց.

Չիւար— մոլորուած.

Չիւքը— փառք, շնորհակալութիւն.

Ումբը— կեանք.

Ումուզ— ուս, թիկունք

Ուլան— առանց մաղի, հետեող.

Ունէի— վերջին դատաստանի տեղը.

Ուր— իւր.

Ուրման— սրպէս.

✓ Չալաղան— բազէ.

Չախմախի զոկոթ— կայծքարի հրացան.

Չակիլ— քարակոյտ.

Չանպար— գլխաշոր, պարի անուն.

Չայդարա— քարքարոտ տեղ.

Չանկիլի-գիւան— հզօր, արդարադատ դատաւոր.

Չատը— վրան.

Չարա— հնար.

Չիման— զալար.

Չինար— նոճի.

Չում, չուր— մինչև.

Չօլ— դաշտ, անապատ.

Չօր— ծունկ.

Պայտաղ— սափոր.

Պապկէ— պապ.

Պառէկ— թիկունք, պաշտպան.

Պին— հետք.

Պիւրը— բուրբ, շուրջը

Պինիշ— մանթէա, վերարկու,

Պուխ— ծով, փունջ.

Պռունկ— շրթունք, եզր.

Ջարախանա— վառողարկղ.

Ջամալ— տեսք, անուն.

Ջամ— գումար.

Ջանդահան— հոգեհան.

Ջահնամ— դժոխք.

Ջէյրան— վայրի այծ, եղնիկ,

Ջիգեար— սէր, դուրս, սիրտ, թոր.

Ջիւան— երիտասարդ.

Ջիւմլէին դաստան— ընդհանրական պատմութիւն.

Ջղայ— ցցունք, զարդմանեակ (զլխի զարդ).

Ջոմարդ— առատ, շապլ.

Ջուղար— լուր, պատասխան.

Ջուֆլակ— ոստայնագործ.

Ռահմ— գութ.

Ռանկ— գոյն.

Ռանչպար— երկրագործ.

Ռէս— տանուտէր.

Ռըքել— խռովիլ.

Ռուքեար - եզր, զործուածքների կապոց

Սաղիր նստարան.

Սալամ բարե, զեղեցիկ.

Սաղար - օգնական, յոյս.

Սալըդ տեղեկութիւն

Սաղրի - կենդանեաց պոչարմատի մորթին.

- Սամայի - ճգնաւորական եղանակ.

Սանթանաթ - կահկարասիք.

Սաչաղ - տուտ.

Սապապ պատճառ.

Սաջար ջրաղացի քարի երկաթեայ առանցքը,
որի վրայ պտոյտ է գալիս քարը.

Սավայի բացի.

Սավտալու - սիրահար.

Սարսարի - ցնորուած.

Սաքմիշ յետ քաշուիլ.

- Սաֆա - ապահովութիւն

Սաֆարի - կրկին յարձակում, ժամանակ, հերթ.

Սէյրան - զբօսնել.

Սէվկիւլի - սիրելի.

Սէրխօշ - արբած.

- Սէֆիլ - խեղճ, թշուառ

Սըթարուիլ - պատասպարուել.

Սըշբաղի ծամթել.

Սըռսուռ - հարթ, կոկ, մաքուր.

Սինամ - սիրտս, սին - քար.

Սիւվէրէկ երկրի անուն, երգի անուն.

Սիւրմալի հրացան.

Սղալել - կոկել, ուղղել.

Սոխտա կարգացոյ, ամբարտաւան, խայտառակ.

Սուրաթ - զէմք, պատկեր, զծագրութիւն.

Սօլ - կօշիկ.

Վաղա ժամանակ.

Վաթան բնավայր.

- Վալլա - յիշաւի, ճշմարիտ, լ'ստուած վկայ.

Վախտ ժամանակ.

Վեավ - ով.

Վէր-վէրի - բարձր, հեռու.

Վըղընալ - վախենալ.

Վիվ - ով.

Վիբ - ում.

Վժէղուն - ախոս,

Տալ ճիւղ, ոստ.

Տալղա - ծածուկ տեղ, հովանի, պատասպարան.

Տամբուրա - սազ, նուագելու գործիք.

Տարդ - վիշտ, ցաւ.

Տափ արտ, մարգագետին, դաշտ.

Տլըպիլ ջանք գործ դնել.

Տէլ գառ, նորատի.

Տէփուր կոլոր, փայտեայ ափսէ.

Տիւն - դու.

Տումրուզ - գելարան, (գործիք, որով յանձաւորին
ճնշում են).

Տուլթսաղ - բանտարկեալ.

Տուտի - թուլթակ.

Տօլ, տօլաղ - զբօսասէր, դատարկաշըջիկ պառանի

Փաթ շէջան.

Փարուաղ զլիսի տկնակուռ զարդ.

Փարի - յաւերժահարս.

Փէլք փայլ.

- Փերիշան - կանանց երեսի մարգարտեայ զարդ.

- Փիալա վառվոռն.

Փոդպատ - օձիկ.

Փունճինար նռան ծաղիկ.

Փուշտա—գերանի դրսի կարած մասը.
Փոշ գուր.

Քաթիպայ—կանանց լժաւշեայ վերնազգեստ.
Քեամ—պակաս, վատ.

Քեաման—աղեղնաձև, շրջանաձև.

Քեանդը պարան.

Քեար—քար, օգուտ, շահ.

Քեափուր—անհաւատ, անհոգի.

Քեօրա հանդերձի եզերքի խառ աստառ 2-3
մատ լայն.

Քիրա կրակարան, հնոց.

Քեօլիա պատսպարան, հովանաւոր.

Քրնց—քան.

Քրոա—քարավէժ, քարակոյտ ժայռ.

Քուլֆաթ—ընտանիք.

Օլում—մահ.

Օղուր—բարի.

Օրգու բանակ, զօրք.

Օրթէ եթէ որ, որովհետեւ.

Փալար աշխարհ, ազգ, վիճակ.

Փայտա օգուտ.

Փալման—հրովարտակ.

Փէլ դրութիւն, երկմտել.

Փուլթա գլխի շոր.

Յ Ա Ն Կ

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Երես.

Աշուղի լեզուն գրուտուն է ասում ամեն մի բանին	5
Ազգ իմ որքան նկուն մնաւ	6
Ա՛խ, անիրաւ տխրութիւն	»
Ա՛խ, երբ պէտքէ երևաւ	7
Ա՛խ, ինչ քաղցր էին վայելածս օրերը . . .	8
Ակնարկեա՛, ո՞վ իմ սիրունի	9
Այսքան տարի դու ննչեցիր	10
Այս իմ ծով արտասունք	11
Անխղճօրէն մեզ դատում են	»
Անմիտ ճնճողկը	12
Առանց վախի առանց ահի	15
Առաւօտեան քաղցր հովիկ	16
Առաւօտեան քաղցր և անուշ հովերը . . .	»
Առաւօտեան ելամ, աչքս ընկաւ երեսիդ . .	17
Աստուածդ կ'սիրես, իմ նազանի եար . . .	18
Աստուած մէկ է՝ փառքը անթիւ	»
Արի ինձ անգաճ կալ	19
Արի ինձ խեղ խօսա՛	20
Բազմացան վերքերս, սաստիկ բազմացան . .	21
Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը	22
Բացուիր նազելի վարդ	»
Բիւլբիւլ, քո նման	23
Բոլոր երկիրներէն ինձի համար	24
Բօյլդ բարձր սալքի չինար	»
Գնաց վրէժ առաւ Հոչէ արքայից	25
Դիշեր ցերեկ մորմոգում եմ ,	26
Դու այն երկրէն մի հեռանար	»
Դուք ինձ ձայն մի տար	27
Ես մէկ ծառ եմ ծիրանի	28



Եթէ մեղաւորը մնաց անպատիժ	28
Եկայ անցնելու քեզանից	29
Երանի թէ շուտով ննջած լինէի	»
Երբ զօրաց Տէրն Լստուած	30
Երբոր զլխատառից հասարակ դարձաւ	31
Ես քեզ սիրի որ դու ընծի չը թարկես	32
Էդ ինչ լանգաւով կ'քելես	33
Էջմիածին խիստ պայծառ սիրուն տեսի	34
Էս աշխարհը մին լաւութիւն արաւ	35
Էսօր իմ եարս տէհամ թաքուն էր	36
Էս ինչ թաւուր քար ջիկարիմ	»
Թորկեր իմ խեղճ տկոյր	37
Թէպէտ ես մեծ տան նշան եմ	38
Իբրեւ արաքս ես հոսում եմ	»
Իմ տուած յարգանքս, պատուելի ընկեր	40
Ինձ սիրեցիր էշխըն նընկար	»
Ինչ եղար, մէկ դուրս արի, հայոց արեգակ	41
Խօսքս պատմեմ քեզ համառօտ	42
Խնդրում եմ, աղերսում եմ Տէր իմ	43
Կարդացէք իմ բազդի նամակի սեր	»
Կոյս, իմ սիրունին բնական	44
Հայ եղբայր ուսուցիչ	45
Հանդիպողք քեզի տխրի կը մնայ	»
Հեռացէք, ո՞վ ամսեր	47
Չախորդ օրերը ձմռայ նման	48
Չէնրդ բազցը ունիս	49
Մատին մատնի և աննման	»
Նազելոյս ամպ է իջել	50
Ով մռայլ ուրբաթ-աւագ	51
Ով նազելի, մի լար բաւ է	»
Չարախնդաց չար մարդիկը	52
Սանդրի, թող թափի խէտ շող երէսիդ	53
Սիրելիս, ոչ ոքից դու մի նեղանար	»
Սկզբից իմ աշխարհ գալն էր այսպէս	54

Սուրբ Կարապետ կնեացիմ	58
Լսեցէք խմիչքի յատկութիւնն ասեմ	»
Վերջացաւ մեր այդին, վերջ եղաւ	61
Քո փափագով վաւովում եմ	»
Օտարի բնական գիտութիւնիցը	62
Օրը մէկ տրտմութիւն տարին հազար ցաւ	63

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Ախշի, հարսնարդ էկաւ	65
Ասենք շընհաւոր	66
Ախշի, քեօ անունն ինչ ա	»
Ա՛խ իմ սիրեկան	67
Աբարան գնացող հղբայր	»
Արագն էկաւ լափին տալով	68
Ա՛յ խօրօտիկ խօրօտիկ	69
Աւալում միւր վախճալ	70
Արեն առեր մըջ բողբոջին	»
Ասիմ, դեօզալ, շէօղ էրէսդ	71
Բաղնեց ճամբէն չալին սաղըդ	72
Բան եմ ասում ականջ դիր	»
Բերդիցը դուրս ելայ	73
Բլբուլ թռաւ բարձր քեարին	74
Բիւլբիւլ իս, բէրնիդ էլ՝ լիզուիդ էլ մէռնիմ	75
Գնաց աշուն՝ էկաւ գեարուն	76
Գացէք տեսէք ո՞րը ա կերել գէժ	77
Գնացէք տեսէք ո՞վ ա կերել այգին	78
Դիւ արի ես, դիւ արի ես	79
Դիւ ջանէ, բէտ բէտ քարեր	80
Եարս միտս ընկաւ յէլայ գնացի	»
Եար, քու սէրդ ընձի	81
Եօթն օր, եօթ գիշեր	»
Ես ձեզ մեռնիմ, Սասնայ ծառեր	83
Ես վերէն կուգայի	84

է, աղբրտանք, վուա թուլմուլ էք	85
էրիէլ, էրիէլ, մուսլի գէօմէշ	86
Ընցաւ տարին Հայոցս էլ փառք	87
Ընծի կըսին - ետըղ տեսար	88
Թէ սիրումիս թամաշա	89
Իմալ պըտի էնինք	90
Ինկայ թաղէ թաղ	91
Լճ, լճ, լճ.— Սիփանա սէգ սարի վերայ	92
Կապուտակ ձին նստել եմ	93
Կռունկ, ուտի կուգաս	95
Ձայնը հնչեց էրզրումէն	96
Ճանապարհս ընկաւ Տըփիսիս	»
Ճավէմըն, խէր հաթի	97
Մանկունք, երբոր հրացան բացուաւ	98
Մընք սրտով կտրիճ	100
Մըր խօր պապիէ գերեզման	101
Մի գեղեցիկ պատահեցաւ	102
Մուլմն էկաւ աշխարհ պատեց	103
Մուլմն ընկաւ գուլման թորկին	104
Նաւավար դու, ինչու այդպէս	104
Չիմ գիտիր ինչ պիտի տանիս	105
Պարլի, պախճալի ես	106
Պարտիզում վարդեր բացուած	107
Սասունայ սար փչէ ուր հով	»
Սուրբ Կարապետ չայիր չիման	109
Տալուորիկցի կտրիճ եմ խորթ	110
Տեհար մէկը շլապայով	112
Քանի մէկ բորբոքուիմ	114
Քիամբախ Բէյօղլի	»

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Արջիկ, նազերով, նազերով	117
Ախջի, քու զլօխն է դրած կարմիր ջըղայ	117

Աղչի, արի քե ֆաս առնիմ	119
Աղբէր, բաղդ անուշ է	119
Աղբէր, հանաքիդ մեռնեմ	120
Աղուխս կորաւ ձեր դուռը	121
Ամպեր, ամպեր, հեռացէք	122
Ամման ալէրէն արի	123
Այ գըզ, բիր մազա տօլդուր	124
Այ պուճուր աղջիկ, տալդովն արի	125
Այ սիրուն կարաւ, բռնէ պարը բոլորի	»
Այ սար ու սէյրան ու եար	126
Առաւօտուն թունդիր մուխ	127
Ասլի եարանս եարանս	129
Արագը հեշտացել ա	»
Արի էրթանք սարը սէյրան	131
Արի, սիրելի ջան տնկող քելէ, եար ջան	132
Բարակ ճամփէն մտել եմ	133
Բորիկ մի քելէ, վայ փուշ ա	»
Բօյղ սալվի շինարի	134
Գուլթանը հաց եմ բերել	135
Դու կայնեք ես աղբրան ական	136
Դէ գնա կիզամ,	137
Դուրգեար դուրգեար է աղբերս	138
Եարս զրկել եմ թրթի	»
Ջինչ ու զինչ տամ լողվորչուն	139
Էս օր մէկ զիրարմ տեսայ	141
Էս օր ուրբաթ ի պառ ի	»
Էս Արշակն եմ Գուլարեցի	142
Էլել եմ Ալագեազը	143
Էս Խաչօն եմ Արմուլեցի	144
Էս Զուլօն եմ Մաստարեցի	»
Էս ինչ կենեմ կով ու կթան	146
Էս մի անդալաղ զուշ եմ	147
Էլա էրթիս էրթիս, տփի	149
Էլանք սարերը մօտիկ	150


Ես քու սիրուդ վառել եմ.	151
Էլնեմ ժուռ դամքու ման գալած արտերը	152
Էյ նազանի նազլի դիլբար	»
Էս գիշեր լուսնեակի գիշեր	153
Էս ձորն ի վեր ծնեփակ	154
Իմ սրտով սիրած եարս	155
Էրթիկ էրթիկ բռնել ես	156
Էրէւաննան օյ, օյ,	»
Թալիշու ճամբէն դուզ ա.	157
Իմ գլխու ֆաթէն կիտամ.	158
Ինձի տար քու հէրանց բաղ.	160
Ինչինար եար ջան.	161
Ինձի համար լուսնեակ ես	162
Թաւէն ծակ է, եղ չկայ.	163
Գեանջանըն գեաղըկլարի.	164
Ես Կոստոն եմ Բայազէտցի	165
Էկաւ հասաւ Վանայ ծովուն.	»
Թաք տանէին, տանէին	166
Կողբայ քարեր մադան ա.	167
Հարըրան, Եայլի բոլոր կանանչ է	168
Ճամբորդի հետ խարար արի	169
Քաղած արտը հաց տարայ	170
Լուսնեակն է կայնել դարին	170
Լէլէ եաման—Գու էլել ես	171
Խնուս գեղի մէջ տեխը	172
Խոտուջուլին ջուլն ա մօտիկ.	173
Խարս վեր արի, նազ, մի անև	»
Գիւղա օլդում, սարի տէր	174
Ծաղիկն առնեմ գամ յերթիս.	175
Ծառիս տակը մանիշակ	176
Ծաղկաձորը ձուն կուղայ.	177
Կայնել ես ախա բախա	178
Կայնել ես կազ կը մանես	179
Կայնել ես ետոի վրայ.	180

Կանանչ արտի քեանարը	181
Կարմիր վարդը ջամով ա.	»
Կարմիր վարդիս վար շունեմ	182
Կեանքիդ, արեհիդ մատաղ.	183
Փնջով ծաղիկ ձեռին բռնած	»
Ես կ'ը խաղամ բէրզէնի	184
Մշու խայու դարտերն է շատ	185
Ջաղացիս դուռը տարթ ա	»
Սարէն կըղայ սառը ջուր.	187
Կորեկն օր ականջ քցեց դուս	189
Իրկունը մութը կոխեց	189
Հաց եմ թխել դարի ա	191
Հօյ եար, Ծաղիկ Ծաղկեփանայ ես	»
Հալապօ, տարաս դըրօ	192
Հայ նուբար նուբար նուբար	193
Հալ էրա, հալ ծալ էրա	»
Հով արէք, սարեր ջան	194
Այ տղայ հուր ես մուր ես	195
Այ եար, այ եար կունել ես	196
Հօյ նազանըմ, նազանըմ	197
Հաց առայ թաղա թաղա.	197
Մատաղ լինիմ քեզ ու մօրդ.	198
Մեր արեր շատ կանանչ է	200
Մեր տան ետև քառսուն կարաս	»
Մշու սարեր մշուշ էր	201
Լուսնեակ դու անցի գնա.	»
Յօրովանա յօրովանա	202
Իմ եարը միշտ ալ կուղի	203
Նշի ծառին նուշ կըլնի	205
Չարմաղ էրեսդ կը շողշողայ	206
Ուռի ես՝ կուանալ սի	207
Չորացաւ կանանչ տերես.	208
Պատի տակը տալդա է	»
Ջաղացիս դուռը կանաչ	»

Էս սարէն մէկ քօշ անցաւ	209
Ջուր կուգար արփին արփին	210
Սէարէնը կիւքեա պաղ-պաղ ջրերը	»
Էս սարը բանձր սար ա	211
Սասուն վազեց արեան զետեղ	212
Էն բարձր թառի տակին	213
Ամպել ա ամպի հման	214
Կաթն ու բրինձն ինչ ա	»
Սէրն ինչ է, սաւղէն ինչ է	215
Սիրուն է Արագի խոր ատէքը	»
Սիրուն է, Մեծ կայր երես-երես	216
Սուրբ Կարապետ քո վանքը	217
Սօնէ Լուսի լուսնեակը ես եմ	218
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս	219
Վայ մարիկ ջան իմ եարը դուռ կը դնէր	220
Վանքի բոլոր ալա է	221
Վերնաքամին գալիս ա	222
Փոցխս ծիրանի կոթ է	223
Քանաքեռ բանձր տեղ ա	224
Քարիս տակը բարոտ ա	224
Քարփի զլխին ունիմ տուն	225
Քզի մի խարս իմ պիւրի	226
Քեպապաս աղ եմ արել	227
Քուրտն էկաւ սարի կողէն	228
Օրհնեալ բարերար Աստուած	229

Վ Ե Ր Ջ





5

ՀՀ Ազգային գրադարան



NL0368341

52036

